Մուրացան

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

eMatenadaran

Մուրացան

Պատմվածքներ

«Aegitas»

Մուրացան

Պատմվածքներ / Մուրացան — «Aegitas»,

Պատմվածքներ Մուրացանը ուրույն դիրքորոշում ուներ 1880–ական թվականների սուր բնույթ ստացած հասարակական հոսանքների գաղափարական պայքարում: Լիբերալիզմի գաղափարախոսները ազգի պահպանության հիմքը համարում էին «նյութական հարստությունը». Մուրացանը դրան հակադրում էր «Բարոյական հարստություն» տեսակետը, մերժում էր այն ամենը, ինչ դեմընթաց էր ազգային միասնության եւ ավանդական կեցության գաղափարին: Կրոնական այլադավանությունը, ըստ նրա նույնպիսի չարիք է, ինչ եւ կուսակցական բաժանումը: Արմատական ռեֆորմներն ու հեղափոխական վերաշրջումները չընդունելով՝ Մուրացանը երկյուղ ուներ, թե այդ ամենը կարող է խարխլել ազգային գոյականության հիմքերը՝ եկեղեցին, ընտանիքը, ազգային ավանդական սովորույթներն ու բարքերը: Այս իրողությունը որոշակի ուղղություն է տվել Մուրացանի ստեղծագործությանը՝ դրան հաջորդելով բացահայտ միտումնավորություն:

© Մուրացան
© Aegitas

Содержание

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ 5
Ա 5
Բ 9
Գ 17
Դ 21
Ե 24
Ը 38
ԻՄ ԿԱԹՈԼԻԿ ՀԱՐՄՆԱՑՈՒՆ 42
ԾՈՎԻ ՎԵՐԱ 42
Բ 44
Գ 47
Դ 49
Ե 52
Զ 57
Конец ознакомительного фрагмента. 59

Մուրացան
Պատմվածքներ

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Ա

Դեկտեմբեր ամսի ցուրտ օրերից մեկն էր: Դեռ վաղ առավոտ լինելով՝ ամբողջ քաղաքը պատված էր մշուշով: Քամին անընդհատ փչելով փոթորկում էր յուր հետ տան կտուրների վրա դիզված ձյունը, որի սառած հատիկները զարնվելով երբեմն փակված պատուհանների ապակիներին, մեղմ հնչյուններ էին հանում: Սառուցակապ փողոցների մեջ անցուդարձ գրեթե չկար. միայն երբեմն – երբեմն, նրանց այս ու այն ծայրում, սևին էին տալիս եկեղեցին շտապող բարեպաշտ ծերունին կամ պառավը, որոնց միօրինակ ու համբաքայլ ընթացքը մերթ ընդհատվում էր նրանց երկաթագամ քոշերի՝ սառույցի վրա սահելուց: Եվ այս շատ անգամ վերջանում էր նրանով, որ բարեպաշտ պառավը ակամա նստում էր ճանապարհի մեջտեղը և դժգոհելով անիծում յուր քոշերը գամող դարբնին:

Քաղաքի մի ետ ընկած փողոցում, որ գլխավորապես աղքատների բնակատեղին էր, գտնվում էր մի տնակ: Ամբողջ գիշերը հակառակ սովորականին, ճրագը վառվում էր այդտեղ: Այդ հանգամանքը կարող էր հետաքրքրել դրացիներին, բայց եղանակի վատթարության և գիշերվան մառախուղի պատճառով այդ նրանցից աննկատելի մնաց: Միայն առավոտյան պահուն, երբ Խաթուն մայրիկը՝ թաղի ամենաբարի պառավը, եկեղեցին գնալու ժամանակ անցավ տնակի մոտից, շատ զարմացավ, երբ ոսկերիչ Գրիգորի ճրագը վառ գտավ: Սա մոտենալով բակի դռանը նայեց նրա ծերպերից տեսնելու համար, թե բակում անցուդարձ կա՞ արդյոք: Բայց որքան մեծ եղավ նրա երկյուղը, երբ տան ներսից լսվեցավ կանացի լացի մի ողորմելի ձայն: Պառավը պատրաստվում էր դուռը բախելու, երբ բակից նրա ականջին զարկավ մի ուրիշ աղիողորմ մրմունջ. «Ախ, աստված, դարձյալ ծեծում»:

Բարի պառավը երկար չսպասեց: Նա ձեռքը ձգեց դռան մուրճը զարնելու, բայց դուռը մուրճ չուներ: Սկսավ քար որոնել գետնի վերա, բայց գետինը սառած լինելով նա այդ ցանկությանն էլ չհասավ: Վերջապես հանեց ոտքի քոչերից մեկը և նրանով սկսավ ամուր – ամուր բախել դուռը:

Դուռը իսկույն բացվեցավ: Պառավի առաջ արձանացավ մի տասնևհինգամյա գեղահասակ աղջիկ: Նրա դեմքը դրսի ցրտությունից դալկացել էր, և արտասուքը սառել այլագունված այտերի վերա:

– Մանիշա՛կ, այս ժամին ի՞նչ ես շինում այս ցրտի մեջ, – եղավ պառավի առաջին հարցը:

Մանիշակը հեկեկալով ընկավ պառավի պարանոցով և ոչինչ չկարողացավ պատասխանել:

– Աղջիկ, ի՞նչ եղավ քեզ. ի՞նչ է պատահել, խոսիր տեսնեմ:

– Ի՞նչ խոսեմ, մայրիկ, միթե չգիտե՞ս. էլի մորս ծեծում է, – պատասխանեց նա, և հեկեկանքը խեղդեց խեղճ աղջկա ձայնը:

Պառավը հասկացավ իսկույն, թե բանը ինչումն էր:

– Իսկ դու ինչո՞ւ այս ցրտի մեջ կանգնած ես, – հարցրավ նա:

– Ես կամեցա մորս ազատել նրա ձեռքից (աղջիկը խոսում էր յուր հոր համար), իսկ նա ուժով դուրս հրեց ինձ և դուռը վերաս կողպեց: Չորս ժամ է, որ այս ցրտում կանգնած եմ ես, բոլոր մարմինս սառել է…

Վերջին բառերը արտասանելիս թշվառ աղջկա աչքերից աղբյուրի պես արտասուքը վազել սկսավ:

Բարի պառավի զայրույթը հասավ իր վերջին աստիճանին: Նա այլևս հարցեր չարավ Մանիշակից, այլ նրա ձեռքից բռնելով արագ – արագ մոտեցավ տան դռանը և ոտքովը ամուր զարնել սկսավ:

– Բա՛ց դուռը, – գոչեց հրամայող ձայնով:

– Ո՞վ է, – ներսից լսվեցավ ոսկերիչ Գրիգորի ձայնը:

– Աչքդ հանողը, անզգա՛մ, դուռը բա՛ց, – զայրացած կրկնեց պառավը:

Տանուտերը ճանաչեց յուր հայտնի դրացուհուն: Նա դուռը թողեց փակ և հեռացավ ուրիշ սենյակ: Պառավը կրկնեց յուր հարվածները:

– Բա՛ց, ասում եմ, անզգա՛մ, թե չէ կերթամ բոլոր ժամավորներին այստեղ կհավաքեմ,

Տանուտերը այս սպառնալիքից վախեցավ և շտապեց դուռը բանալու:

Պառավը ներս մտավ Մանիշակի ձեռքից բռնած: Նրա աչքերի առաջ ներկայացավ մի աղետալի տեսարան: Տանտիկինը արտասվաթոր աչքերով և արյունոտ երեսով ընկած էր սենյակի մի անկյունը և հեծեծում էր անգութ ամուսնուց ստացած հարվածներից: Երկու փոքրիկ երեխաներ կիսամերկ անկողնից ելած՝ բռնած էին մոր ծնկներից. մի ուրիշ, նրանցից ավելի հասակավոր տղա երեխա հիվանդ նստած էր յուր անկողնի մեջ և լալիս էր:

Երեխաները իրանց ծանոթ և սիրելի պառավին տեսնելով, մոռացան հոր երկյուղը և կարծես նրա մեջ իրանց պաշտպանը գտնելով, իսկույն ցատկեցին տեղից և վազեցին դեպի նա. «Խաթուն մայրիկ տե՛ս պապան որքան է ծեծել մայրիկին, ասա, որ էլ չծեծի, ախար խեղճ է…»:

Երեխաների գանգատը, որ փոքրիկ սրտերի հուսահատ ապստամբության ծնունդ էր, այնքան սրտաշարժ էր, որ պառավի արտասուքը շարժեցին:

– Տո անաստված, – դարձավ նա կատաղի զայրույթով դեպի տանուտերը, – հերիք տանջես այդ խեղճ կնոջը. այդ ինչ օրի ես հասցրել դրան, բա դու չե՞ս խղճում այդ երեխաներին. ասենք սիրտդ քար է կտրել, խո ականջներդ էլ չե՞ն խլացել, խո աչքերդ էլ չե՞ն կուրացել, խո լսո՞ւմ ես այս ողորմելիների լացն ու կոծը, տեսնո՞ւմ ես նրանց արտասունքը: Տո՛ անգութ…

– Լա՛վ լա՛վ, Խաթուն մայրիկ, – խոսքը կտրեց տանուտերը, – մի երկարացնիլ. ի՞նչ ես ուզում ասել, ինչո՞ւ համար այս ժամին մտել ես իմ տունը: Եվ եթե մտել ես, ի՞նչ իրավունքով հայհոյում ես ինձ: Ես գիտեմ իմ կինը ու երեխաները, խո դու չես նրանց հաց ու ջուր տվողը…

– Դու հաց ու ջուրը չես տալիս մեզ, անաստված, – ողորմելի ձայնով ընդհատեց նրան կինը, – քո տվածը թույն ու լեղի է…

– Ձայնդ կտրի՛ր, – գոռաց ամուսինը դեպի նա դառնալով:

– Քո ձայնն էլ աստված կտրի, – մրմնջաց կինը և լռեց:

Պառավը տեսնելով ոսկերիչի անողոք կատաղությունը, մոտեցավ կնոջը, բռնեց նրա ձեռքից, «վեր կաց, Մարիամ» ասաց նրան հրամայողական ձայնով, «վեր կաց, երեխաներիդ հավաքիր գնանք իմ տունը, այս գազանի մոտ մի մնաք»:

– Ախ, Խաթուն մայրիկ, – հեծծաց Մարիամը թույլ ձայնով, – դորանով խո ամեն բան չէ՞ վերջանում:

– Վեր կաց, ասում եմ քեզ, – կրկնեց պառավը:

– Վեր կաց, մայրիկ, վեր կաց գնանք Խաթունենց տուն այստեղ վախենում ենք, – թախանձեցին երեխաները:

– Կորեք այստեղից, – գոռաց հայրը, հրացայտ աչքերը երեխաների վերա սևեռելով: Երեխաները սարսափով ետ քաշվեցան, և նրանցից յուրաքանչյուրը կծկվեցավ մի անկյունում:

– Դու էլ վեր կաց գնա քո տունը, պառավ, – դարձավ նա դեպի Խաթունը, – իմ կինը քո կարեկցության պետք չունի, վեր կաց գնա:

– Վեր կենամ գնա՞մ, – հարցրավ պառավը բարկությունից դողացող ձայնով, գնամ, որ էլի գազանությունդ գործ դնես այս խեղճերի վերա: Չէ՛, դու այլևս արժանի չես այս երեխաներին ու այս կնոջը տեր լինելու, նրանց մենք կպահենք, դու բուի նման միայնակ պիտի մնաս այստեղ մինչև որ ինքդ քո գլուխդ ուտես:

Այս ասելով Խաթունը դարձավ դեպի Մարիամը.

– Այ կին, վեր կաց, ասում եմ, առ երեխաներդ, գնանք այստեղից:

– Ոչ ոք երկյուղից չշարժվեցավ: Տանուտերը սպառնալից դեմքով մոտեցավ Խաթունին և բռնելով նրա ձեռքից՝ ուժով քաշեց դեպի դուռը.

– Դո՛ւրս գնա, ասում եմ քեզ, դո՛ւրս գնա…

Պառավը շատ աշխատեցավ ընդդիմանալ, սակայն նրա թույլ ուժը չօգնեց յուր ցանկության: Տանուտերը նրան դուրս հանեց և դուռը ետևից փակեց:

Այդ բանի վրա Մարիամը և երեխաները սկսան լալ եւ աղիողորմ ճիչեր արձակել, կարծես թե իրանց միակ պաշտպանը կորուսին:

Եվ այս թշվառություններից ամենամեծն է. երբ կինը յուր կողակցի և որդիքը իրանց հոր դեմ օտարի պաշտպանությունն են խնդրում:

Պառավը բռնի դուրս հանվելով, զայրացած վազեց դեպի եկեղեցին, որը այնտեղին շատ մոտ էր: Ժամասացությունը արդեն վերջացել էր, և ժամավորները դուրս էին գալիս: Նա կանգնեց բակի մեջ և աղաղակեց, «Այ մարդուկ, այստեղ ամուսինը յուր կնոջը սպանում է, ի սեր աստծո, եկեք ազատեցեք»:

Այս աղաղակը ցնցեց ժամավորներին: Նրանք պատեցին իսկույն պառավի շուրջը: «Ո՞վ է, ո՞ւր է, ցույց տուր» ամեն տեղից գոչում էին: «Եկեք և ինքներդ տեսեք», պատասխանեց պառավը և առաջ անցավ շտապով, իսկ ժողովուրդը իրար վերախառնվելով հետևում էր նրան:

Մի քառորդ ժամից բոլոր եկեղեցին գրեթե ժողովվել էր, ոսկերիչի բակը: Մի քանիսի խնդրանոք Խաթունը համառոտ պատմեց, թե բանը ինչումն էր: Այնուհետև ամբոխի միջից ավելի տաք գլուխները գոռում գոչումով սկսան տան դուռը բախել: Ոսկերիչը այս խայտառակությունից ավելի համառված ոչ մի կերպ չհամարձակվեցավ դուռը բանալու: Ամբոխի խառնաշփոթ ձայնը ավելի վախեցրավ ներսը գտնվող երեխաներին, որոնք իրանց բոլոր ուժով սկսան գոռալ:

Նրանց լացի ձայնը և հոր համառությունը ավելի և ավելի գրգռում էր ամբոխի զայրութը: Այս տեսնելով վարպետ Սարգիսը, Խաթունի ծերունի, բայց դեռ ուժեղ մարդը, դուրս եկավ ամբոխի միջից և մոտենալով փակված դռանը հրամայաբար կանչեց. «Գրիգո՛ր, բա՛ց դուռը»: Գրիգորը թեպետ ճանաչեց ոսկերիչների համայնքի գլխավոր – վարպետ Սարգսի ձայնը, բայց դարձյալ դուռը չբացավ: Վարպետ Սարգիսը մի փոքր սպասելուց հետո հրամայեց յուր մոտը կանգնող երիտասարդներին, «Տղայք, դուռը կոտրեցե՛ք»: Երկու ուժգին հարվածների առաջ դռան փականքը կոտրվեցավ, և դուռը ճռնչալով բացվեցավ: Ամբոխը հետաքրքիր և զայրացած կամենում էր ներս խուժել, բայց նրան արգելեցին մի քանի առաջավոր մարդիկ և իրանք պառավի հետ ներս մտան:

– Ահա այս մարդն է, որ սպանում է յուր կնոջը, – այս ասելով Խաթունը ցույց տվավ ոսկերիչին, որը սպառնացող դեմքով կանգնած էր ներս մտնողների դիմացը: – Ամբողջ գիշերը ծեծել է նրան, – շարունակեց Խաթունը, – և մեկը չէ գտնվել, որ թշվառ զոհին ազատե դրա ձեռքից: Այս խեղճ աղջիկն էլ կամեցել է յուր մորը պաշտպանել, նրան էլ դուրս է արել և դուռը վերան փակել: Բոլոր գիշերը անցրել է սա դուրսը ցրտում:

Այս ասելով բռնեց նա Մանիշակի ձեռքից, որը ամոթահար կծկվել էր սենյակի մի անկյունում, և նրան առաջ քաշելով շարունակեց, «Նայեցեք սրա զույնին, նայեցեք, կարծես գերեզմանից դուրս հանած լինի: Եթե մի փոքր էլ ուշանայի, խեղճ աղջիկը դրսումը պիտի սառչեր»:

Խաթունի պատմածները վերին աստիճանի գրգռեցին վարպետ Սարգսին: Նա մոտեցավ ոսկերիչին և բարկացած ձայնով գոչեց. «Այ մարդ, ի՞նչ ես ուզում այս խեղճ կնոջից, ինչու ես ծեծում նրան»:

Ոսկերիչը ոչինչ չպատասխանեց:

– Քույրիկ, ինչու՞ համար սա ծեծում էր քեզ, – դարձավ նա դեպի կինը մեղմ ձայնով:

Համայնքի գլխավորը բոլոր արհեստավորների ընտանիքում ընդունվում է իբրև հայր, ուստի Մարիամը չքաշվեցավ նրա մոտ բացարձակ խոսելու: Նա պատասխանեց,

– Վարպետ, ձեզ հայտնի է, որ դա ամբողջ չորս տարի է, որ լութերական է դարձել, և ամբողջ չորս տարի է, որ ինձ տանջում է: Ամեն մի եկեղեցի գնալովս, ամեն մի քահանա իմ տանը ընդունելովս, ամեն մի սուրբի դիմելովս մի մեծ խռովություն է ձգել տան մեջ: Էլ նախատինք, էլ հայհոյանք չէ մնացել, որ դա իմ գլխին չթափեր: Եվ ահա մի քանի ամիս է, որ սովորել է ծեծել:

– Բայց այս գիշեր իսկապես քեզ ինչու՞ համար էր ծեծում, – հարցրավ վարպետ Սարգիսը:

– Տեսնո՞ւմ եք, որ երեխաս հիվանդ է, – ամենայն պարզությամբ շարունակեց Մարիամը, ցույց տալով անկողնի մեջ նստած հիվանդ երեխային, – երեկ մոմ – հալող Վարդին բերի երեխայիս սրտին մոմ հալելու. նա ասաց, որ երեխայի հիվանդությունը խաչիցն է: Դորա համար էլ ես էլ մի գառն ունեինք, վերցրի երեկ և մատաղ արի մեր սուրբին: Երբ դա երեկոյան տուն դառնալով այդ բանը իմացավ, գազանի պես կատաղեց: Ամբողջ երկու ժամ նախատինքներ ու հայհոյանքներ թափեց իմ գլխին, երբ ես էլ համբերությունից դուրս գալով սկսա միևնույն կերպով պատասխանել իրեն, նա սկսավ անողորմաբար ծեծել ինձ… և ծեծեց ամբողջ գիշերը… – այստեղ արտասուքը խեղդեցին խեղճ Մարիամի ձայնը և նա այլևս չկարողացավ շարունակել:

Բայց նրա պատմածները ներկա գտնվողները լսելով չէին կարողանում զսպել իրանց զայրույթը: Նրանցից մի քանիսը մինչև անգամ փորձ փորձեցին ոսկերիչին ծեծելու, բայց վարպետ Սարգիսը բոլորին էլ արգելեց, և դառնալով դեպի յուր կինը

– Խաթուն, – ասաց նրան, – վեր առ Մարիամին և երեխաներին և տար մեր տուն, այս մարդը այլևս դրանց տիրություն անելու չէ. այսուհետև մենք պետք է դրանց պահպանենք և հույս ունեմ, որ ավելի լավ կպահպանենք:

– Ինչու չէ, մեր աչքերի լույսի պես, – պատասխանեց բարի Խաթունը, – մի ժամ առաջ ես նույնն էի կամենում անել, բայց այդ անզգամը ինձ տանից դուրս արավ:

Այս ասելով նա մոտեցավ Մարիամին և ձեռքից բռնելով բարձրացրավ նրան:

– Աշոտ, – դարձավ վարպետ Սարգիսը դեպի յուրը որդին, որը մոտը կանգնած էր, – այս հիվանդ երեխային յուր անկողնով միասին գրկիր և տուն տար: Դուք էլ գնացեք, – դարձավ նա դեպի Մանիշակը և երկու փոքրիկ տղաները, – ձեզանից ոչ ոք թող չմնա այս տանը:

Բոլորը հնազանդվեցան վարպետ Սարգսի հրամանին: Նրանք պատրաստվում էին դուրս գնալ դռնից, երբ ոսկերիչը նրանց առաջ բռնելով գոչեց.

– Ո՞ւր եք կորչում:

– Չգիտե՞ս ուր, – բարկությամբ մոտեցավ նրան վարպետ Սարգիսը և թևիցը բռնելով ուժգին քաշեց դեպի ինքը:

Խաթունը մի ակնթարթումը Մարիամին ու երեխաներին դուրս հանեց տանից: Ոսկերիչը այս տեսնելով ավելի եւս կատաղեց.

– Իմ կնոջը և երեխաներին համարձակվում եք ինձանից խլե՞լ, – գոռաց նա վարպետ Սարգսի վրա:

Սարգիսը ոչինչ չպատասխանեց: Նա մի շեշտակի ապտակ տվավ ոսկերիչին, որից սա գլորվեցավ:

– Տղայք, – դարձավ ապա վարպետը դեպի ներկա եղող երիտասարդները, – կապեցեք դրա ձեռները և վերցրեք գավառապետի մոտ տանելու:

Մի քանի երիտասարդներ իսկույն կապեցին ոսկերիչի ձեռները և դուրս հանելով նրան փողոցը, բռնեցին գավառապետի տան ճանապարհը:

Բոլոր ամբոխը հետևեց նրանց:

Բ

Երջանկությունը, որին մարդիկ շատ փոքր են ճանաչում և որին ընդհանրապես հարուստների ապարանքներում են որոնում, հաճախ յուր բոլոր կատարելությամբ գտնվում է այն անշուք տնակներում, որոնց մենք թշվառների կացարան ենք անվանում: Ապրիլ արդար վաստակով, ճանաչել չափավորություն և գիտենալ գոհ լինել յուր ունեցածով, ահա երջանիկ լինելու առաջին պայմանները: Այս պարզ ճշմարտությունը ճանաչելու համար պետք է այցելել մեր այն գավառական քաղաքները, ուր տակավին գեխությունը լուսավորության անվամբ, չէ եղծել նահապետական կյանքի պարզությունը և ուր անծանոթ է դեռ միշտ գեխության ընկեր արտաքուստ փայլող թշվառությունը: Այն քաղաքը, ուր նախընթաց գլխում նկարագրված դեպքը տեղի ունեցավ, երբեմն շատ այսպիսի երջանիկներ ուներ յուր մեջ: Նրանց թվին պատկանում էր և ոսկերիչ Գրիգորի ընտանիքը:

Ով որ չորս կամ հինգ տարի առաջ ծանոթ է եղել այդ ընտանյաց հետ, նա կհաստատե այս վկայությունը:

Գրիգորը դեռ քսան և երկու տարեկան երիտասարդ՝ յուր ունեցած ձիրքերով մեծ անուն հանեց ոսկերչության արհեստի մեջ: Նրա ձեռացագործները մեծ գին ունեին քաղաքում և գրեթե միշտ մեծամեծների սեփականությունն էին կազմում: Տփխիսի թանգարանը այցելողը կտեսնե այսօր էլ այդ շնորհալի արհեստավորի ձեռքերի ճարտարությունը:

Գրիգորը յուր այդ երիտասարդ հասակում ամուսնացավ Մարիամի հետ, որը յուր պես որբ լինելով, ապրում էր յուր մորեղբայրների մոտ: Նա գեղեցկությամբ այնքան գրավիչ էր և բարվոք այնքան պարկեշտ, որ նրա որբությունը Գրիգորի կողմից ի նկատի չառնվեցավ, մինչդեռ այդ հանգամանքը շատ անգամ նպաստում է գավառացի աղջկա ամուսնական անհաջողության, որովհետև փեսաները այդտեղ անշուշտ ցանկանում են աներ և զոքանչ ունենալ, հակառակ դեպքում այդ պակասությունը շատ զգալի է լինում նրանց համար: Բայց Գրիգորը այդ բոլոր պակասության լրումը գտնում էր Մարիամի մեջ: Մի կին, որ ամենայն խանդաղատանոք սիրում էր յուր ամուսնուն և յուր բոլոր ուրախությունը և կյանքը որոնում էր միմիայն նորա մեջ, մի՞թե այսպիսի մի գանձ չէ, որ լցնում է ամենայն տեսակ բարյաց պակասությունները: Եվ ահա ինչու նրանք ապրում էին ուրախ և երջանիկ, որովհետև ապրում էին միմյանց համար: Գրիգորը ամբողջ օրր գործում էր խանութում և երեկոյան դառնում էր տուն, գոհ յուր օրվա աշխատանքից և ուրախ յուր ամուսինը տեսնելու համար: Մարիամը դիմավորում էր նրան միշտ անուշ ժպիտը երեսին: Երիտասարդական սիրո խանդաղատանքը, այս ժայռերի քաղաքում, նկատվում է իբրև մեղկության նշան, և շատ հազիվ է պատահում, որ փեսան կարողանա գեթ յուր մոր կամ քրոջ ներկայությամբ յուր նորատի հարսին համբուրել, բայց երիտասարդ ոսկերիչի և յուր Մարիամի սերը այնքան վառ և բորբոքված էր որ նրանք չէին կարողանում համարձակ չանել այդ: Չնայելով, որ ոսկերիչի մեծ մորաքույրը, Թագուհի տատը, որ անորդի պառաված լինելով մնում էր յուր քեռորդոց տանը, միշտ խրատում էր նրանց՝ այդպես չվարվել, որովհետև դրացիները կարող էին այդ բանը տեսնել և նրանց բամբասել, այսուամենայնիվ ոսկերիչն ու յուր կինը միշտ մնում էին միևնույնը:

Թագուհի տատը շատ անգամ նրանց այդ, ըստ յուր կարծյաց, ներելի հանցանքից դարձնելու համար պատմում է յուր երիտասարդական կյանքի պատմությունից այնպիսի կտորներ, որոնք յուր կարծիքով մեծ ազդեցություն կարող էին անել ամոլների բարքի վերա: Օրինակ նա պատմում էր, որ մի անգամ յուր ամուսինը շուկայից դարձավ տուն աղլուխով միսը ձեռքին, բայց դեռ բակը չմտած, փողոցից կանչեցին նրան: Եվ որովհետև այդ միջոցին ինքը գտնվում էր բակի մեջ ամուսինը միսը յուր ձեռքը տվավ և դուրս գնաց:

– Երևակայեցեք, – շարունակում էր Թագուհի տատը, – միսը ես տուն բերի, բայց սկեսուրս երբ իմացավ, որ ամուսինս յուր բերած միսը ուղղակի իմ ձեռքն է տվել, նա այն մսից մի կտոր անգամ չկերավ և մի ամբողջ շաբաթ ինձանից և յուր որդուց՝ հանգուցյալ Ղազարից, խռով մնաց:

Այս և սրա նման խրատական օրինակներ շատ էր բերում Թագուհի տատը քանի որ նա կենդանի էր, բայց Գրիգորի և Մարիամի վրա, ինչպես ասեցինք, ոչինչ ազդեցություն չէին կարողանում անել: Երկու նորատի ամուսինները սիրում էին միմյանց այնպես, ինչպես հրամայում էր նրանց բնությունը և ինչպես կամենում է բանաստեղծը:

Այսպես քանի որ նրանք որդի չունեին, ապրում էին իբրև ամենախանդակաթ ամուսիններ: Իսկ երբ մի երկու տարուց ետ ծնավ նրանց Մանիշակը, նրանց սիրո անդրանիկ պտուղը, նրանք սովորեցին ապրել և իբրև կատարյալ ծնողներ: Գրիգորը յուր արհեստի շնորհիվ լավ վաստակ ուներ և նրա կեսը այժմ կարողանում էր խնայել ապագայի համար: Մարիամը քիչ չէր օգնում նրան այդ խնայողության գործի մեջ: Նրանց այս երջանիկ դրության վրա անցան և մի քանի տարիներ, և նրանք ունեցան դարձյալ երեք տղա զավակներ: Նրանցից յուրաքանչյուրի աշխարհ գալովն նորանոր ուրախություններ էին ավելանում նրանց համար: Մյուս կողմից էլ հետզհետե բարվոքվում էր նրանց նյութական վիճակը: Գրիգորը յուր ամուսնության տասներեքերորդ տարում, յուր և ամուսնու խնայողության շնորհիվ, արդեն ուներ մի երեք, հազար ռուբլի, մի գումար, որ արհեստավորի համար հարստություն է համարվում:

Այժմ նրանց ոչինչ չէր պակասում: Երկու ամուսինները շատ անգամ նայում էին իրանց շուրջը, և երբ տեսնում էին հրեշտակի պես գեղեցիկ մետասանամյա դուստրը, երեք սիրուն և կայտառ տղաները և այս բոլորի հետ հիշում էին իրանց անկարոտ վիճակը հրճվում և փառք էին տալիս աստծուն: Ամբողջ 13 տարի նրանց ամուսնությունից ետ դեռ մի դժգոհություն կամ գժտություն չէր խռովել նրանց ընտանեկան խաղաղությունը և երկու ամոլներից ոչ մեկի անախորժ վարմունքը չէր կնճռել մյուսի ճակատը:

Դրացիները երանում էին նրանց, և ով որ ճանաչում էր մանավանդ նրանց առտնին կյանքը, համոզվում էր, որ նրանք երջանիկ էին…

Բայց, կարծես թե այդ երջանկությունը հասել էր յուր կյանքի լրման, և նա տեղի պիտի տար իրանից միշտ անբաժան, բայց և միշտ ատելի ընկերին՝ թշվառությանը:

187… թվականի հունվար առաջին օրն էր: Այդ օրը մեր երջանիկ ամուսինները ողջունում էին իրանց ամուսնության տասն և չորրորդ տարին: Կեսօրին մոտ էր: Գրիգորը վերջացնելով յուր նոր տարվա առթիվ տված այցելությունները դարձավ տուն: Նախընթաց օրը տեղի ունեցած պայմանադրության համաձայն, այսօր Գրիգորի մոտ պետք է ճաշեին յուր համարվեստ բարեկամները: Մարիամը բոլոր հարկ եղած պատրաստությունները տեսել էր յուր ամուսնու հյուրերին պատվելու համար: Չնայելով, որ օրը պահոց էր, այնուամենայնիվ նրա խոհանոցը արտադրել էր կերակուրների մի քանի տեսակները: Մի քանի աննշան պակասություններ էլ Գրիգորի արած նկատողություններով լրացան, և այժմ նրանք անհամբեր սպասում էին հյուրերի գալստյան:

Կեսօրը լրացավ թե չէ, Գրիգորի բարեկամները խոսելով ու ծիծաղելով խմբովին ներս թափվեցան տան բակը: Սրանք բոլորն էլ հոգվո ամենաուրախ տրամադրության մեջ էին, որովհետև նրանցից յուրաքանչյուրը յուր այցելությանց ժամանակ առնվազն մի հինգ բաժակ օղի վայելած էր: Կենաց ջրի այնպիսի մի քանակությունը բավական է արհեստավորին մոռացնելու տալու աշխարհի մեջ թշվառությունների գոյությունը:

– Գրիգոր, քեզ համար մի նոր հյուր եմ բերել, – զվարթ ձայնով կանչեց նրա արհեստակիցներից մեկը:

– Գլխիս վերա տեղ ունի, Կարո ջան, որքան շատ, այնքան լավ, – պատասխանեց Գրիգորը:

– Գլխիդ վերա տեղ չկա, գլուխդ քեզ լինի, սենյակիդ մեջ տեղ տուր մեզ, – ծիծաղելով պատասխանեց Կարոն և ներկայացրավ նրան յուր բերած հյուրին:

Գրիգորը սեղմեց երկուսի ձեռները:

– Գրիգոր ճանաչո՞ւմ ես Կարոյի հյուրին, – մոտենալով հարցրավ նրան մի կարճահասակ և թխադեմ երիտասարդ:

– Ի՞նչպես չէ, մեր կնքահորենց Ավետիքն է, ինչու՞ չճանաչեմ:

– Տեսա՞ր, որ չճանաչեցիր:

– Ի՞նչպես թե չճանաչեցի, աչքերս խո գրավ չեմ դրել,

– Իհարկե չճանաչեցիր, խմբի միջից ձայն տվավ վարպետ Օհանեսը, որի գլուխը բավականին մեծ ծավալ էր բռնում յուր ուսերի վերա:

– Եղբայրներ, եթե մեզանից մեկը հարբած է, այդ ես չեմ, դուք էլ գիտեք որ ես օղի չեմ խմում, – պատասխանեց Գրիգորը մի փոքր վրդովված:

– Ինչ եք կռվում, – մեջ մտավ քթատ Համբարձումը, որին կարճ քիթ ունենալուն համար այդ անունով էին կոչում, – երեքդ էլ միմյանց չեք հասկանում: Եղբայր, – դարձավ նա դեպի Գրիգորը, հաշտեցուցիչ, համոզիչ ձայնով, – դու գիտես, որ մեր Կարոն լութերական է, էհ, Ավետիքն էլ սրա վարժապետն է: Հիմա սրանք որ հարցնում են, թե ճանաչո՞ւմ ես Կարոյի հյուրին, կամենում են ասել՝ գիտե՞ս, որ նա սրա վարժապետն է թե՛ չէ, ահա սրանց հարցի միտքը, այժմ հասկացա՞ր:

– Իհարկե հասկացա դեհ այդպես խոսեցեք է, հերօրինածներ:

– Վահ, չպե՞տք է շնորհք ունենան այդպես խոսելու համար, – կրկնեց քթատ Համբարձումը ինքնաբավական ծիծաղով,

– Խոսք չկա, շնորհքդ էլ այնքան մեծ է, որքան քիթդ, – կցեց վարպետ Օհաննեսը ծիծաղելով:

– Իսկ քոնն էլ երևի այնքան է մեծ, որքան գլուխդ, – կրկնեց Համբարձումը, և ծիծաղը ընդհանրացավ խմբի մեջ:

– Բավակա՛ն է, բարեկամներս, – ձայն տվավ Գրիգորը, – ճաշի ժամանակ է, ո՞ւր եք այդքան երկար կանգնում այդ ցրտի մեջ: Ներս հրամեցեք, սեղանը ձեզ է սպասում:

– Այս ասելով նա առաջ անցավ, և հյուրերը հետևեցին նրան:

Բավականին ընդարձակ սենյակը, որ պատրաստած էր հյուրերի համար, փայլում էր մաքրությամբ, երեք երկար գույնզգույն գորգեր, որոնք ծածկած էին սենյակի հատակը, երկու սեղաններ, մի քանի աթոռներ և մի հնատարազ հայելի լրացնում էին սենյակի պարզ զարդարանքը: Հյուրերի համար գորգերի վերա զուգահեռական դիրքով ձգված էին երկու երկար օթոցներ, որոնք ծառայում էին աթոռների փոխարեն և որոնց վերածալապատիկ շարվեցան մեր հյուրերը:

Փոքր ժամանակից ետ Մանիշակը ներս մտավ յուր հոր աշակերտ Աշոտի հետ, յուրաքանչյուրի ձեռքը մի – մի սկուտեղ զանազան պնակներով: Նրանք միասին տարածեցին կապույտ ծաղկենկար սփռոցը հյուրերի առաջ, կարգավորեցին նախաճաշի պնակները, գինու շշերը և ապա հետզհետե ներս էին բերում կերակրի բաժինները: Արհեստավոր դասը առհասարակ ծառա չէ ունենում, նրա տանը հերթով օգնում են յուր արհեստի աշակերտները: Այսօր հերթը Աշոտինն էր, որի հայրը՝ վարպետ Սարգիսը, նույնպես հրավիրված էր այսօր ոսկերիչի տանը:

Վարպետ Սարգիսը տեսնելով, թե ինչ սիրով սպասավորում էին հյուրերին երկու հասակակից երեխաները, երկար նրանց դիտելուց ետ դարձավ դեպի տանուտերը.

– Գրիգոր, – ասաց նրան, – մեր արհեստակիցների ներկայությամբ ես մի խնդիր եմ առաջարկելու քեզ, պետք է ընդունես:

– Հրամայի՛ր, վարպետ, – պատրաստ եմ կարողությանս չափ քեզ ծառայելու, – համեստությամբ պատասխանեց Գրիգորը:

– Օրհնյալ լինես, ուրեմն լսիր, ես կամենում եմ, որ քո Մանիշակը իմ Աշոտի հարսնացուն լինի, և հենց այսօրվանից մենք խնամիներ դառնանք: Իմ Աշոտը 14 տարեկան է, քո Մանիշակը 11 – ից ավելի չէ, 5 թե 6 տարիից հետո մենք, եթե կենդանի մնանք, նրանց կպսակենք: Ի՞նչ կասեք, տղայք, դարձավ նա դեպի հյուրերը, վատ առաջարկություն խո չեմ անում,

– Աստված շնորհավոր անի, – գոչեցին հյուրերը միաբերան, – մենք մեր կողմից հոժար ենք:

– Դուք որ հոժար եք, ես ի՞նչ խոսք ունեմ, – պատասխանեց Գրիգորը քաղցրությամբ և սեղմեց վարպետ Սարգսի ձեռքը, որ նա պարզել էր դեպի իրեն:

– Ապա մա՞յրը, – մեջ մտավ կնքահորենց Ավետիքը, որը ըստ երևույթին կանանց դատը պաշտպանողներից էր:

– Մայրը ինձ հետ միշտ համաձայն կլինի, իմ և նրա կամքը մեկ է, – պատասխանեց Գրիգորը:

– Ուրեմն առաջին բաժակը կդատարկենք Մանիշակի և Աշոտի կենացը, – գոչեցին հյուրերը միանգամայն և դատարկեցին բաժակները:

Մի ապագա ամուսնության դաշը կռված էր: Եվ որովհետև նա համայնքի կամքովն էր, ուրեմն և անքակտելի էր:

Սեղանի վրա հետզհետե բարդվում էին կերակուրները, գինու բաժակները արդեն սովորական արագությամբ պտտվում էին, և ուրախությունը սկսել էր դառնալ հասարակաց:

– Զարմանալի սովորություն կա ձեր մեջ, – խոսել սկսավ կնքահորենց Ավետիքը, – երբ հավաքվում եք մի տեղ ուրախանալու, անպատճառ կամ պետք է մի տղայի նշանեք կամ մի աղջկա, մեծ լինի թե մանուկ բնավ ուշադրություն չեք դարձնում: Լավ, դիցուք թե տղան ես եմ, մեծացա ու աղջկանը չսիրեցի, կամ աղջիկը յուր կողմից սկսեց ատել տղային, այն ժամանակ խո զոռով չեք կարող ամուսնացնել: Եթե անենք էլ՝ նրանց կթշվառացնեք:

– Աստծո ողորմությամբ մինչև այսօր այդպիսի բան չէ պատահել, պարոն Ավետիք, – մեջ մտավ վարպետ Սարգիսը, – եթե աստվածդ կսիրես բարի բանի մեջ քար մի գցիլ:

– Ինչո՞ւ եմ քար գցում, ես ձեր վատ սովորության վրա եմ խոսում:

– Եղբայր, այստեղ ոչինչ վատություն չկա, – մեջ մտավ մյուս կողմից քթատ Համբարձումը, – ուրախության տեղն էլ ուրախ բաների վերա կմտածեն, կխոսեն, էլ ուրիշ ինչ պիտի անեն:

– Ի՛հարկե, ի՛հարկե, – գոչեցին շատ տեղերից հյուրերը: Համբարձումը իրավունք ունի, էլ ուրիշ ինչ պիտի անենք:

– Որ այդպես է Համբարձումի կենացը, – կանչեց վարպետ Օհաննեսը, որը յուր համայնքից ցմահ անփոփոխ մատռվակ էր ընտրված: – Համբարձումի կենացը, – կրկնեցին հյուրերը և դատարկեցին բաժակները:

Համբարձումը ինքն իրեն հրճվում էր, որ յուր նշանավոր նկատողությամբը արժանացավ հասարակության առանձին ուշադրությանը: Բայց Ավետիքը տեսնելով, որ ճիշտ յուր որսի տեղն է ընկել, շահավոր չէր համարում լռել, ուստի նորեն սկսավ խոսել:

– Պարոն Համբարձում, դուք սխալվում եք կարծելով, որ ուրախության տեղը միշտ դատարկ ուրախություն պետք է անենք: Ընդհակառակն, ամեն մի ուրախության տեղ ամենից առաջ մի ավելի լավ բան կա անելու և առաջ այն պիտի անենք:

– Ի՞նչ բան, – հետաքրքրությամբ հարցրավ Համբարձումը:

– Այն, որ առաջ այս սեղանը և կերակուրները մեզ պարգևող «տիրոջ» անունը հիշենք: – Այս ասելով նա մատը բարձրացրավ դեպի երկինքը:

– Իրավունք ունիք, եղբայր, – հաղթված ձայնով գոչեցին հյուրերը, – ախար մենք հացի նստանք առանց սեղանը օրհնելու:

– Այ, այ, այ, – դժգոհությամբ գլուխը շարժեց վարպետ Սարգիսը, և սկսավ օրհնել սեղանը:

«Անուն Հոր և Որթոր և Հոգույն Սրբոյ: Հայր մեր որ կինըս սուրբ եղեցի անուան քո երգեսցե արքավություն քո եղիցեն կամք քո որպես երկիրս և երկրե. զհարս մեզ հանապազ զորթ տուր մեզ այսօր, և թող մեր զպարտս մեզ, որպես թողունք մերոց պարտապանաց, և մի տանիլ ի մեզ ի Փորձություն, այլ փրկեա մեզի չարեն, զի քո է արքայություն և զորություն և փառք հավիտյանս հավիտենիս, ամեն»: Վարպետ Սարգիսը յուր աղոթքը վերջացնելուց ետ հանդիսավոր կերպով խաչ հանեց երեսին, որին հետևեցին և բոլոր հյուրերը բացի Ավետիքից և Կարոյից: Բայց այս բանը նրանց բախտից հյուրերից ոչ ոք չտեսավ:

– Դեհ, տիրոջ անունն էլ տվինք, այժմ խո կարող ենք ազատ ուրախություն անել, – դարձավ Համբարձումը Ավետիքին:

– Ես ձեր ուրախությունը բնավ չեմ արգելում: Ես ասացի «տիրոջ» անունն էլ պիտի հիշենք…

– Բա չհիշեցի՞նք:

– Դուք միայն տերունական աղոթքն ասեցիք, և այդ ձեր պարտքն էր, որ մոռացել էիք, այլ իմ պահանջածս ուրիշ էր:

– Ո՞րն է, ո՞րը:

– Հա, ո՞րն է ձեր պահանջածը, ասա, այս րոպեին կատարել տամ, – հանգստաբար գոչեց վարպետ և մատռվակ Օհաննեսը:

– Այ թե ինչ:

– Հա, տեսնենք ի՞նչ է ասում ֆարմասոնը, – զվարճությամբ կրկնեցին մի քանի հյուրեր գինու բաժակները ձախ ձեռքով բռնած ի պատիվ նրա:

Ավետիքը պատրաստվում էր բերանը բանալ թե չէ.

– Սպասի՛ր, – սեղանի մյուս ծայրից խոսաց մի ճաղատ գլուխ, – եթե ասելու ես գինի մի խմեք, այժմենից զգուշացնում եմ քեզ, որ չխոսաս:

– Հա, հա, իրավ է ասում, – կրկնեցին ձախ ձեռքով բաժակ կրողները:

Ավետիքը տեսնում էր, որ դիտմամբ իրեն խանգարում էին, բայց քարոզչի համար այդ տեսակ արգելքները նշանակություն ունեին:

– Սիրելի եղբայրներ, – սկսավ Ավետիքը, – դուք գիտեք…

– «Եղբայրներ» մի՛ ասիր մեզ թե աստվածդ կսիրես, – իսկույն խոսքը կտրեց Համբարձումը:

– Ի՞նչպես, ապա մենք բոլորս էլ «եղբայրներ» չէնք, – զարմացմամբ հարցրավ Ավետիքը:

– Ոչ, քեզ հետ «եղբայրներ» չենք:

– Տո, ի՞նչ ես հիմար – հիմար դուրս տալիս, – Համբարձումի վրա զարմացավ մատռվակը, – թող մարդը խոսի, ասենք ի՞նչ է խոսում է:

– Ի՛հարկե, – վրա բերավ մեզ ծանոթ ճաղատ գլուխը, որի քիթը շատ խմելուց սմբուլի (պատիրջանի) գույն էր ստացել, – թող խոսի գուցե աստված գլխին խռովում է ու մի լավ բան է ասում:

– Ախր դու չգիտես, վարպետ Օհաննես, – իրան արդարացնում էր Համբարձումը, – սրանք իրանց լութերականներին են «եղբայր» կանչում, մենք էլ խո լութերական չենք:

Ավետիքը Համբարձումի այս բացատրությանը պատասխանեց միայն մի ժպիտով:

– Այ թե ի՞նչ են սովորեցնում ձեզ ձեր քահանաները, – հանդարտությամբ շարունակեց Ավետիքը խոսքը՝ ուղղելով մյուսներին: – Աստծու տված «եղբայր» բառն էլ չեն ուզում, որ արտասանեք, ու հազար ու մի նշանակություն են տալիս նրան:

– Հոգուդ մեղք ես անում, պարոն Ավետիք, – խոսքը կտրեց վարպետ Սարգիսը, – մեր քահանան, որ տեր – Արիստակեսն է, այդպես բան ասած չունի, հոգի ունեմ տալու աստծուն:

– Այդ միևնույնն է, այդ չէ ասում, բայց դրա նման շատ բաներ է ասում: Զորօրինակ նա ասում է՝ «Աստծու տված յուղն ու պանիրն մի ուտեք, որովհետև պաս է»: Այս էլ միևնույն չէ՞:

– Օհ, դրանով ի՞նչ եք ուզում ասել, պ. Ավետիք, – ծանրությամբ հարցրավ վարպետ Սարգիսը, – հապա խոսելով պահք էլ չպահե՞նք:

– Պահք ի՞հարկե պետք է պահեք, որովհետև տերն ասում է՝ «Այս դևը ոչ մի բանով դուրս չի գալ, բայց միայն պահքով ու աղոթքով»: Բայց պահքը, որ լսել եք այն չէ ինչ որ դուք եք պահում, կամ ինչ որ ձեր քահանաներն են քարոզում:

– Ախր չասացի, թե դրան մի բառ եթե թույլ տաք խոսելու, հազարն էլ հետո կխոսի, – անհամբերությամբ ներս ընկավ Համբարձումը:

– Տո անպիտան, քեզ չասացի, որ լռիր, տեսնենք մարդը ինչ է խոսում, – բարկացավ նրա վրա մատռվակը:

– Իմ կարծիքով, – խոսեց Ավետիքը, – Համբարձումը մեզ խաղնում է նրա համար, որ գինի խմելը դադարեցրել եք: Ես ձեզ խորհուրդ կտամ պ. մատռվակ, որ նրան միանվագ 3 բաժակ գինի տաք խմելու, իբր պատիժ:

Մատռվակը հրամայեց, և Համբարձումի մոտիկ ընկերը երեք բաժակ լցնելով առաջարկեց նրան: Վերջինս ներքին բավականությամբ և արտաքին դժգոհությամբ երեք բաժակները դատարկեց:

Ավետիքի խարդախությունը ոչ ոք չիմացավ: Նա կամենում էր յուր հակառակորդին հարբեցնելով թուլացնել, որը որքան էլ հիմարաբար էր խոսում, դարձյալ իրեն խանգարում էր: Բայց սխալվեցավ:

– Այժմ կարող եք խոսալ, ես կլռեմ, – հայտարարեց Համբարձումը բաժակները դատարկելուց ետ:

– Հա, – սկսավ Ավետիքը, – այն էի ասում, թե քահանաները ուղիղ պահք պահելը չսովորեցնելով՝ ձեզ խաբում ու մոլորեցնում են:

– Հիմա այստեղ ես ի՞նչպես դիմանամ, – գլուխը շարժելով խոսեց ինքն իրեն Համբարձումը, – հիմա էլ մեր քահանաներին խաբեբա է անվանում:

– Հարգելի պարոն Համբարձում, – խոնարհ ձայնով դարձավ Ավետիքը դեպի նրան, – դուք դարձյալ դժգոհություն եք ցույց տալիս, ես տեսնում եմ, որ դուք շատ նուրբ հասկացողություն ունիք և ինձ շուտով կբռնեք. թողեք խոսեմ. եթե սխալ կգտնեք խոսածիս մեջ, կարող եք ինձ լռեցնել:

Սա երկրորդ զենքն էր:

Այս խոնարհ խոսակցության եղանակը Համբարձումի ինքնասիրությունը գգվեց, և նա խոստացավ լռել: Ավետիքը սկսավ:

– Եթե ես ասում եմ թե ձեր քահանաները ձեզ մոլորեցնում են սխալ ճանապարհներ տանելով, դուք նեղանում եք: Տեսեք. դուք միշտ միմյանց հայհոյում եք, բամբասում եք, զրպարտում եք, թշնամություն եք անում, միմյանց տուն քանդում եք, բայց այս բոլորի համար ձեր քահանան ձեզ չի ասում, թե մեղք է, մի անեք, այդ բանից պահք պահեցեք, այլ ընդհակառակը յուղ ու միս ուտելից է ձեզ զգուշացնում: Սա մոլորեցնել չէ՞: Այստեղ յուղով փլավի տեղ՝ ձեթով եք ուտում, իսկ այնտեղ գնում ընկեր – ընկերի միս ուտում. սա ինչի՞ նման է:

– Ես իմ աստվածը շատ լավ է ասում պարոն Ավետիքը, – ընդհատեց նրան մատռվակը, – վայ մեր մեղացը:

– Հա, ի՞նչ խոսք ունիս սրան, պարոն Համբարձում, – հարցրավ նրան տանուտեր Գրիգորը, որին ըստ երևույթին շատ դուր էին գալիս Ավետիքի խոսքերը, – սուտ է ասում թե՞ ճշմարիտ:

– Ես ի՞նչ գիտեմ, սուտ է ասում թե ճշմարիտ, – կես բարկությամբ պատասխանեց Համբարձումը, – պետք է մեր վարժապետ Հարությունը այստեղ լիներ, որ դրա խոսածների միտքը իմանար: Այսքան գիտեմ, որ դա յուր կյանքում ոչինչ լավ բան չի խոսիլ. ինչ էլ խոսի՝ մեր սուրբ հավատի հակառակ է:

– Այո, – շարունակեց Ավետիքը, բնավ ուշադրություն չդարձնելով Համբարձումի խոսածներին, – ձեր մեջ հազարավոր պակասություններ կան, որոնց չեն ուզում ուղղել ձեր քահանաները, որովհետև նրանք չեն ուզում ձեր աչքերը բանալ: Ձեզ խավարի մեջ պահելով իրանք միշտ ավելի կշահվին: Ձեր մեջ հարյուրավոր ընտանիք քաղցից մեռնում են, դուք նրանց չեք մոտենում, նրանց կարեկից չեք լինում, նրանց ցավերը չեք մեղմում, և այդ բանի համար ձեր քահանան ձեզ ոչինչ չի հիշեցնում, որովհետև եթե սխալվի և հիշեցնի իհարկե յուր բաժինը դուք կտաք այն խեղճերին: Այսպես, ձեր հոգևոր հայրերը ձեզ հետ ամեն բան հաշվով են գործում, և իրանց օգուտի համար ձեր հոգիները դժոխքի բաժին են դարձնում:

Ավետիքի այս խոսքերը լուռ լսում էին բոլոր հյուրերը, միայն Համբարձումի համար յուր լռությունը շատ երկար թվաց: Նա քարոզչին ընդհատեց:

– Դե բավական է, ի սեր աստծո, այստեղ ժամ չե՞ս շինելու, քարոզ ունիս, գնա քո «եղբայրներիդ» քարոզիր:

– Դու էլ իմ «եղբայրն» ես, հարգելի պարոն Համբարձում, ուստի…

– Աստված ոչ անե, որ ես քո «եղբայրը» լինեմ, այն ժամանակ ես էլ քեզ նման մի անամոթ մարդ կլինեմ:

– Համբարձում, – հրամայող ձայնով դարձավ նրան տանտեր Գրիգորը, – ինչու համար հայհոյում ես իմ հյուրին:

– Շատ լավ եմ անում, եթե դու էլ քո հյուրի քարոզներին հավանում ես, գնա նրա աղոթարանը, քեզ էլ այնտեղ ֆարմասոն կմկրտեն:

Ավետիքը հրճվում էր Համբարձումի կոպտությունները տեսնելով տանտիրոջ հետ, որովհետև համոզված էր, որ դրանով վերջինս յուր կողմը կանցնի: Բայց կամենալով մատռվակին էլ գրգռել, ասաց.

– Զարմանում եմ, որ պարոն մատռվակի ներկայությամբ այդ Համբարձումը կարողանում է այսպես անպատիժ անկարգություններ անել. միթե մենք բոլորս էլ այժմ նրա խոնարհ հպատակները չենք:

– Ո՞վ է այդ խռովարարը, պետք է դուրս հանենք այստեղից, – կարծես քնից արթնացած գոչեց մատռվակը:

– Այո՛, այո՛, պետք է դուրս հանել, – գոչեցին մի քանի տեղերից հյուրերը և միաբերան հաստատեցին, որ խռովարարը Համբարձումն է: Ուստի մատռվակի հրամանով զոռով դուրս հանեցին նրան մյուս սենյակը և ստիպեցին, որ քնե ու հանգստանա: Չնայելով, որ խեղճ Համբարձումը կաշվից դուրս էր գալիս համոզելու համար, որ ինքը չէ խռովարարը, այլ այն ֆարմասոնն է, որ ուր մտնում է երկպառակություն և բաժանումն է գցում, այսուամենայնիվ նրա ճիգը զուր, անցավ, սենյակի դուռը վերան փակվեցավ և նա ստիպված էր ժողովի վճիռը կատարելու համար կամա – ակամա այդտեղ քնանալու:

Քարոզիչը այժմ ազատ շունչ քաշեց:

– Ահա սիրելի եղբայրներս, – նորեն սկսավ նա խոսել՝ երբ խռովարարը մեջտեղից բարձվեցավ, – ձեր հոգևոր հայրերը այսպես են խնամում իրենց հանձնված հոտի անդամները: Դուք մեզ ավետարանական ու ֆարմասոն անվանելով մեզ վրա ծիծաղում եք, բայց մեր «եղբայրների» մեջ այստեղ խռովարար մարդիկներ չեն կարող գտնիլ, նրանք միշտ հեզ են, ողորմած, աղքատասեր, միով բանիվ այնպես՝ ինչպես հրամայում է նրանց լինել մեր Տերը: Եվ մենք մեր Տիրոջ սուրբ կամքից երբեք չենք շեղվում:

Այնուհետև քարոզիչը նորեն դարձավ պասին, սուրբերին, պատկերներին և մեր եկեղեցու զանազան արարողությանց և ծեսերին: Երկար ու բարակ խոսեց և ըստ կամաց հազար ու մի սուտ ու սխալ բացատրություններ տվավ այդ ամենի համար: Հետո նա յուր կարծիքով այնքան պակասություններ գտավ մեր հոգևոր հայրերի մեջ, այնքան թերություններ մեր կրոնի և եկեղեցու մեջ, որ յուր ունկնդիրներից մի քանիսին, ի միջիայլոց և ոսկերիչ Գրիգորին, համոզեց, որ իրանք բոլորն էլ մոլորյալ ոչխարներ են, արդեն դժոխքի համար պատրաստված, որովհետև արքայություն մտնելու համար նորեն պետք է «եղբայրություն» ընդունեին, այլապես անհնար էր:

Քարոզիչը յուր բոլոր խոսակցության ժամանակ աշխատում էր խեղճ և տգետ արհեստավորների առաջ այնպիսի բաներ խոսել, որոնց հետ վերջիններս շատ ծանոթ էին, և որովհետև այդ խեղճ մարդիկը նրա ասածների միմիայն երեսն էին տեսնում, առանց խորը թափանցել կարողանալու և մանավանդ, որ սա կրկնում էր մեր այն թերությունների մասին, որոնց մենք ինքներս շատ անգամ հարվածում ենք, այս հանգամանքը մանավանդ օգնում էր, որ մի քանիսը բոլորովին հափշտակվել էին յուրմով: Ինչ վերաբերում է ոսկերիչ Գրիգորին նա սրան երկնքից իջած էր համարում: Հյուրերից հասակավորները միայն գինու առատությունից թմրել և լսելու ու հասկանալու անընդունակ էին դարձել, մյուս բոլոր երիտասարդները արդեն բավական խմորվել էին:

Ավետիքի զգացած ուրախությանը չափ չկար: Նա խոսելուց և քարոզելուց այն ժամանակ դադարեց, երբ ճրագները ներս բերին: Այնուհետև հյուրերի ցրվելու ժամանակն էր: Երբ հերթը եկավ Ավետիքին՝ նա վերկենալով հայտարարեց, որ այսուհետև կաշխատե շուտ

– Շուտ տեսնվիլ յուր այս օրվա բարեկամների հետ, որոնց նմաններին նա դեռ պատահած՝ չէր, ինչպես ասում էր, և կխոսի «հոգեշահ» բաների վրա: Ոսկերիչ Գրիգորը և յուր մի քանի ընկերները ուրախություն հայտնեցին նրա «հոգեշահ» քարոզներին ներկա գտնվելու ուր և լինի:

Բայց քարոզչի աշակերտ Կարոն ավելի լավ բան առաջարկեց, այսինքն վաղը երեկոյան ժողովվել յուր տանը ընթրիքի: Ներկա եղողները պարտավորվեցան բոլորն էլ այնտեղ գտնվիլ մի ուրիշ ժամում և միմյանց «բարի գիշեր» մաղթելով հեռացան:

Գրիգորը հյուրերին ճանապարհ դրավ մինչև բակի դուռը: Երբ դարձավ տուն, Մարիամին գտավ շատ տխուր և առանձնացած սենյակի մի անկյունը:

– Մարիամ, ինչո՞ւ տխուր ես, – ըստ սովորականին քնքշաբար մոտեցավ նրան Գրիգորը, – մի՞գուցե հիվանդ ես:

– Ո՛չ, հիվանդ չեմ:

– Ուրեմն, բարկացա՞ծ ես:

– Այո՛, քեզ վրա:

– Ի՞նձ, հա, հա, հա, ինչո՞ւ համար, մի՞թե քո դեմ մի անախորժ բան ունե՞մ արած:

– Այո, շատ անախորժ: Ո՞վ է այդ Ավետիքը, որի շատախոսությունները այդքան զմայլված լսում ես:

– Ո՞վ պետք է լինի, մի բարի մարդ, մի՞թե մեղք է նրա հետ խոսիլը:

– Այո, շատ մեղք է, դա բարի մարդ չէ, այլ սատանայից էլ չար: Դու գիտես, որ դա լութերական քարոզիչ է, դրան ուր ես քո սեղանի վրա նստեցրել:

– Եթե լութերական է, բայց ինքն էլի հայ է, ուրեմն չի՞ կարելի մեր սեղանի վրա նստեցնել:

– Գլխիս վրա էլ կնստեցնեմ, եթե լուռ ու մունջ մյուսների պես նստե, յուր հացն ուտե, ուրախություն անի ու դուրս գնա, բայց որ նստել է քարոզներ ասում, և մարդկանց ճանապարհից հանում, ես նրան ախոռն անգամ մտնելու իրավունք չեմ տալ: Դեռ նրա ճանապարհով խեղճ Համբարձումին էլ վիրավորում ես: Դու կամենում ես բոլոր դրացիներին միանգամով քեզ վրա խոսեցնել տաս:

– Տե՛ս, Մարիամ, հիմարություններ ես դուրս տալիս, ինձ շատ հարկավոր է, որ դրացիները մեզ վրա կխոսա՞ն:

– Ե՞ս եմ հիմարություններ դուրս տալիս:

– Ի՛հարկե, – կես բարկությամբ պատասխանեց Գրիգորը, մարդը քեզ մի վատություն չէ արել, դու նրա վրա թշնամաբար ես խոսում, դա հիմարությունից էլ մի փոքր ավելի է:

Մարիամը ոչինչ չպատասխանեց: Այդ առաջին կոպիտ խոսքն էր, որ յուր ամուսնուց լսավ: Նրա աչքերը իսկույն արտասուքով լցվիցան, և նա սկսավ լալ:

Առաջին արտասվաց կաթիլները գլորվեցան…

Գ

Իմ ընթերցողները չմոռացան իհարկե, որ ոսկերիչ Գրիգորը յուր հյուրերից մի քանիսի հետ հետևյալ օրը հրավիրված էր Կարոյի տունը ընթրիքի: Այդ երեկոյան երբ Գրիգորը՝ յուր խանութը փակելով դարձավ տուն և պատրաստվում էր՝ յուր խոստման համաձայն հյուրասիրող բարեկամի մոտ գնալու, Մարիամը եկավ նրա մոտ և խնդրում էր, որ նա թողնե յուր այդ մտադրությունը:

– Ինչո՞ւ համար, Մարիամ, ինչո՞ւ այդ արգելում ես ինձ, – հարցրավ Գրիգորը ամուսնուց, – Կարոյի տունը գնալս այս առաջին անգամը չէ, և վերջապես ես երեկ խոստացել եմ, ինչպես կարող եմ խոստմանս դրժել:

– Խոստմանդ ուղղակի մի դրժիլ, դու կարող ես ասել թե հիվանդ եմ, կամ գործ ունեի, վերջապես ինչ կամենում ես ասա, բայց այսօր մի՛ գնալ այնտեղ, աղաչում եմ:

– Բայց ինչու՞ համար, զարմանում եմ, ինչի՞ց ես կասկածում:

– Ես, չգիտեմ, թե ինչո՞ւ համար, չգիտեմ, թե ինչի՞ց եմ կասկածում, բայց չեմ կամենում, որ այնտեղ գնաս: Այսօր ամբողջ օրը ես տխուր էի և միմիայն այդ բանի վրա էի մտածում: Ես այնպես եմ համոզված, որ եթե դու գնաս այնտեղ, եթե դու մեկ էլ լսես այն չար սատանայի խոսքերը, դու կփոխվես, դու էլ նրա պես չար կդառնաս, դու էլ իմ Գրիգորը չես լինիլ…

– Տեսնո՞ւմ ես, ինչ հիմար – հիմար մտքեր ես անում, Մարիամ:

– Դարձյալ հիմա՞ր, – այս խոսքում Մարիամը փղձեցավ, և նրա աչքերը արտասուքով լցվեցան:

– Հապա ի՞նչ ասեմ, դու ինձ երեխա ես կարծում, ի՞նչ է: Այսուհետև պետք է ինձ փոխեն, այսուհետև պիտի չար դառնամ:

– Չգիտեմ, Գրիգո՛ր, հոգյակս, միայն խնդրում եմ մի գնալ այնտեղ, իմ սիրտը շատ վատ բաներ է գուշակում, ես վախենում եմ: Այդ Ավետիքի համար մեր դրացիները շատ վատ բաներ են խոսում, ասում են, ով որ մի անգամ նրա ձեռքը ընկավ, էլ ազատվիլ չէ կարող…

– Էհ, դատարկ բաներ ես խոսում, թող թե աստվածդ կսիրես, մարդիկը այժմ ինձ են սպասում, ամոթ է: – Այս ասելով Գրիգորը անցավ դեպի դուռը:

– Բայց քեզ խնդրում եմ, ինձ չե՞ս լսում, – այս խոսքերով Մարիամը վազեց դեպի դուռը և նրա ձեռքը բռնեց:

– Թող, – ասում եմ, Մարիա՛մ, ինձ մի՛ ուշացնիր, ես խոսք եմ տվել և իմ խոսքից դառնալ չեմ կարող:

– Ո՛չ չպետք է թողնեմ, ես չեմ կամենում, որ գնաս:

– Էհ, դու ինձ զզվեցնում ես: – Այս ասելով նա յուր ձեռքը խլեց կնոջ ձեռքից և շտապով հեռացավ:

Մի քանի րոպե Մարիամը մնաց յուր տեղը արձանացած: Նրա աչքերը անշարժ ուղղվել էին դեպի այն դուռը, որտեղից յուր ամուսինը դուրս գնաց: Բայց մի փոքր հետո նա ուշքի եկավ և դառն հեկեկանքով սկսավ լալ:

Երեխաները մյուս սենյակում խաղում էին. նրանք չտեսան, թե ի՞նչ պատահեցավ իրանց մոր հետ: Իսկ Մանիշակը հարևանի տանից դառնալով, երբ յուր մայրը գտավ լալիս, մնաց շվարած:

– Ի՞նչ պատահեցավ քեզ, մայրիկ, ինչո՞ւ լալիս ես, – հարցրավ նա մորը:

Իսկ վերջինս ո՛չ միայն ոչինչ չպատասխանեց, այլև աղջկանը տեսնելուն պես ավելի ևս սկսավ արցունքներ թափել: Քնքույշ Մանուշակը չդիմացավ մոր արտասուքներին, և ինքն էլ նրա հետ սկսավ լալ: Երկար այս աղիողորմ տեսարանը շարունակվում էր: Ի վերջո մայրը սթափվելով դադարեց լալուց և բեկված սրտով սփոփեց աղջկանը: Սակայն վերջինիս համար դեռ անբացատրելի մնաց յուր մոր լացի պատճառը:

Եվ իրավ, ինչու՞ համար խեղճ կինը այդ աստիճան վշտանում էր, ի՞նչն էր նրա արտասվաց և հուսահատության պատճառը:

Այդ յուր ամուսնու լութերական դառնալու երկյուղն էր, երկյուղ, որ պաշարել էր նրան այն րոպեից սկսած, երբ քարոզիչ Ավետիքը իրանց սեղանի վրա նստած տեսավ: «Լութերական» – այս բառը գավառեցի հայ կինը սառնասրտությամբ լսել չէ կարող, նա ակնհայտնի խորշում է նամանավանդ այդ անունը կրող հայից: Որքան կամենում եք դատապարտեցեք նրա այդ զգացմունքը, կամենում եք նախապաշարված կոչեցեք նրան, կամենում եք մոլեռանդ, – այդ նրա հոգը չէ, նա միայն գիտե, թե պետք է խորշել այդ կրոնափոխ մարդիկներից, որովհետև դրանց այդ հավատավաճառության գործի՝ մեջ նա ոչինչ ազնիվ և բարի բան չէ նկատում: Մի բան, որ անհերքելի իրողություն է մնում հայ կնոջ համար, այդ այն է, որ նա յուր նուրբ դիտողությամբ պարզ տեսնում է, թե յուր ընտանյաց այն անկումը, որ տգիտությամբ բռնվում է այդ մարմնազդեցիկ դևերի ցանցի մեջ, նա ընդմիշտ կորչում է յուր ընտանյաց համար: Նա այլևս ամենօրվանը չէ, նրա մեջ սառչում են սովորական զգացմունքները, նրա սիրտը, այլևս համահավասար չէ տրոփում այդ ընտանյաց սրտի հետ: Հայրական սեր, մայրենի գորով, հարազատաց խանդադատանք, այդ բոլորը նրա համար կորցնում են իրանց բարերար ազդեցությունը: Նա ծաղրում է ամեն բան, նա ծիծաղում է և ընտանյաց բոլոր հնավանդ սրբությանց վերա…

Այսպիսի օրինակները բազմաթիվ են նամանավանդ մեզ ծանոթ արհեստավորանց թաղի մեջ, այդ խավարի ու տգիտության կենտրոնատեղում: Այդտեղ կային լութերականացած հայրեր, որոնք խռով էին ապրում իրենց կնոջից և զավակներից, երիտասարդներ, որոնք օրն ի բուն անարգում և թշնամանում էին իրանց խորթ հավատը չդավանող ծնողներին: Այս բոլորին Մարիամը ծանոթ էր, նա այս մասին ավելի շատ տխուր պատմություններ գիտեր և ահա սրանք էին նրան այնքան վիշտ ու արտասուք պատճառողները: Եվ նրա նախազգացումը իրան չխաբեց:

Գրիգորը Կարոյի տունը գալով այնտեղ հավաքված գտավ բոլոր «եղբայրներին» և նրանց, որոնք անցած օրը խոստացած էին Ավետիքի «հոգեշահ» քարոզներին հաճախելու: Ընթրիքից առաջ քարոզիչը երկար խոսեց Կարոյի հյուրերի հետ: Նա յուր ատենաբանության նյութ էր առել դարձյալ հայոց լուսավորչական կրոնը և նրանց հոգևորականությունը: Նա այնքան ճարպկությամբ հարմարեցնում էր յուր խոսակցությունը՝ նամանավանդ առաջին անգամ ներկա գտնվող հյուրերի հասկացողության և հոգեկան տրամադրությանը, որ նրանցից և ոչ մեկի մեջ չէր հուզում հակառակ զգացումներ:

Նորա առաջ նստած էին խեղճ և աղքատ արհեստավորներ, որոնք իրանց սրբազան կրոնը և եկեղեցին ճանաչում էին միայն այնքան, որքան իրանց ծնողներից սովորել էին: Ղեռ հազար հինգ հարյուր տարուց առաջ «եղբայրություն և հավասարություն» քարոզող լուսավորչական եկեղեցու այդ հարազատ զավակները, մինչև անգամ գաղափար չունեին թե մի եկեղեցի կարող է պակասություններ ունենալ կամ մեկը կարող է մյուսից առավելություններով գերազանցել: Նորանց համար անծանոթ էին աստվածաբանների քրիստոնեության համար արած քմահաճ մեկնաբանությունները կամ ավետարանի յուրաքանչյուր բառի և դարձվածի վրա մինչև այսօր էլ տեղի ունեցող անվերջանալի վիճաբանությունները և ահա այս պատճառով, ինչպես իրանց ավանդված էր, նոքա բոլոր եկեղեցիները հավասար սուրբ և հավասար ուղղափառ էին Համարում: Կարծիք չկա, որ այս մարդկանց համար քարոզչի խոսածները հետաքրքիր կլինեին: Մարդիկ բնականաբար միշտ տրամադիր են նորություններ լսելու, իսկ քարոզչի խոսածները բոլորն էլ նորություններ էին նոցա համար. այդ քարոզները քանդում և ոչնչացնում էին իրանց մինչև այսօր ունեցած համոզմունքները և գաղափարները: Այն եկեղեցին, որին նոքա մինչև այսօր սուրբ և առաքելական էին համարում, հանկարծ քարոզիչը պիղծ է անվանում, լուսավորչի այն հավատը, որին նոքա մինչև այսօր Հիսուս Քրիստոսից և յուր առաքյալներից ավանդված էին ընդունում, քարոզիչը մոլորեցնող աղանդ է կոչում: Եվ այս ամենը նա, իհարկե, կարողանում էր հաստատել յուր խեղճ և տգետ ունկնդիրների առաջ, այնպիսի մի տեղ, ուր նորա ստախոսությունները հասկացող և երևան հանող մեկը չկար: Խեղճ արհեստավորները թեպետ եկեղեցվո և կրոնի մասին քարոզչի խոսածներում սուտը և ճշմարիտը զանազանել

չէին կարողանում, բայց իրանց հոգևորականաց պակասության մասին խոսածների մեջ ճշմարտություններ տեսնում էին: Այդ պակասություններից շատերը իրենց հայտնի էին, այդ պակասության վրա իրանք շատ անգամ մատնացույց են արել և ահա հենց այս մեկ հանգամանքը օգնում էր քարոզչին յուր ունկնդիրներին հեշտությամբ մոլորեցնելու, որովհետև նոքա այնպես էին մտածում: «Մեր հոգևորականաց պակասության համար խոսածներում մենք ստություն չենք նշմարում, այդ պակասությունները կան, և մենք տեսնում ենք: Ուրեմն մեր եկեղեցվո և կրոնի պակասության մասին խոսածներն էլ անպատճառ ճշմարիտ կլինին, որովհետև այդ պակասությունները մենք մեր տգիտությամբ հասկանալ չենք կարող»: Բայց խեղճ մարդիկը չգիտեին, որ այդ անխիղճ մարդորսները հոգևորականաց այդ մեզ անծանոթ պակասությունները անդադար առաջ են բերում միմիայն նորա համար, որ մեր եկեղեցին էլ պակասավոր ցույց տալ կարողանան: Ապա թե ոչ նոցա համար ի՞նչ նշանակություն ունեին մեր հոգևորականաց պակասությունները, որոնք ամեն ազգերի հոգևորականաց մեջ գտնվում են և այն դեռ շատ մեծ չափերով: Ինչևէ, քարոզչի ճառախոսությունները բոլորը քաղցր ուշադրությամբ լսում էին, իսկ ոսկերիչ Գրիգորը գրեթե զմայլված էր…

Ընթրիքը վերջանալուց հետո քարոզիչը դարձյալ խոսաց մի քանի բան, բայց այս անգամ նա կամենում էր ծանոթանալ ներկա գտնվող նոր հյուրերի կարծյաց հետ: Վերջիններս, որոնք իսկապես սեփական կարծիք ասած բանից զուրկ էին, հայտարարեցին, որ բոլորովին համաձայն են քարոզչի հայտնած մտքերի հետ: Իսկ ոսկերիչ Գրիգորը, որ արդեն կատարելապես խմորված էր, մինչև անգամ ցանկություն հայտնեց նրանց «եղբայրության» մեջ մտնելու: Քարոզչի ուրախությանը չափ չկար: Բայց որպեսզի յուր արժանավորությունը կշռի մեջ պահեր, նա իսկույն չընդունեց ոսկերիչի առաջարկությունը, այլ խոստում առավ նրանից, որ նա կանոնավորապես կհաճախե յուր քարոզություններին շարունակ մի ամիս, և այնուհետև կարժանանա այդ կոչմանը: Ոսկերիչը հավատարիմ մնաց յուր խոստմանը: Նա շարունակ այցելում էր «եղբայրների» ժողովարանը և գրեթե միշտ ներկա էր գտնվում քարոզչի այն «հոգեշահ» ատենաբանություններին, որոնք տեղի էին ունենում երեկոները Կարոյի տանը: Մարիամի բոլոր ջանքերը յուր ամուսնուն այդ մարդորս քարոզչի ճանկերից ազատելու համար ապարդյուն անցան: Ո՛չ նրա աղաչանքները, ոչ թափած արտասուքները չկարողացան դարձնել յուր ամուսնուն այն ճանապարհից, որի մեջ դիպվածով սահել էր նրա ոտքը:

Կնոջ ամենօրյա թախանձանքներից ազատվելու համար ոսկերիչը առժամանակ հնարեց ծածկել նրանից յուր այցելությունները «եղբայրների» ժողովարանը: Այս պատճառով նա յուրաքանչյուր անգամ տանից ուշանալու համար մի նոր պատճառ էր հնարում: Մարիամը շատ հոժարությամբ հավատում էր յուր ամուսնուն և եթե գիտենար իսկ, թե նա իրեն խաբում է, դարձյալ ավելի կկամենար խաբվիլ, քան յուր ամուսնուց լսել մի վճռական խոսք, թե նա ընդդեմ յուր ցանկության ընդունում է լութերականություն կամ հենց համակրում է նրան… Սակայն ամիսը լրացավ թե չէ մեր ոսկերիչ Գրիգորը ստացավ կատարյալ բողոքականի կոչումը, նա դարձավ «եղբայրների» մի հավատարիմ անդամ և մտավ այն ընկերության հովանավորության ներքո, որի համար քարոզիչ Ավետիքը պատմում էր, թե՝ երկնքի արքայության միակ բանալիքը յուր ձեռքումն ունի…

Մի ամբողջ տարուց հետո ոսկերիչ Գրիգորի ընտանիքը այլևս յուր երջանիկ դրության մեջ չէր: Այստեղ ամեն բան այնպես փոխվել ու տակնուվար էր եղել, որ կկարծեիր, թե մի կործանող ոգի ծանրացել է այդ տան վերա: Կարծյաց և համոզմանց տարբերությունը, որ պառակտում է ամեն միություն, յուր ավերիչ ներգործությունը արել էր և այս ընտանյաց վերա: Տանուտերը կորուսել էր յուր առաջին զվարթ բնավորությունը: Նա դառնում էր տուն տխուր և մելամաղձիկ դեմքով, մի քանի րոպե հազիվ մնում էր յուր հարկի տակ և դարձյալ դուրս էր գնում այցելելու «եղբայրների» ժողովարանը: Մարիամը անդադար մտածելուց և իր կորուստը լալուց նիհարել էր, նրա վառվռուն այտերը դալկացել էին և գեղեցիկ աչքերը կկոցվել կնճիռներով: Ծնողաց հոգեկան տանջանքները ոչ սակավ ներգործել էին և երեխաների զվարթության վերա: Շատ հազիվ էր պատահում, որ նրանք զբաղվեին իրանց մանկական

խաղերով մոր տխուր աչքերի առաջ, չնայելով, որ վերջինս բնավ այդ չէր արգելում նրանց: Բայց բոլորի մեջ ամենից ավելի տանջվում էր Մանիշակը: Սա գրեթե ամեն երեկո ներկա էր լինում ծնողաց տխուր վիճաբանություններին, որոնք շատ անգամ վերջանում էին կռվով: Այսպիսի երեկոները միշտ յուր մայրը լալիս էր և ինքը ընկերակցում էր նրան յուր լռիկ արտասուքներով: Ցերեկները նա մինչև անգամ չէր գնում հարևանի աղջկերանց հետ խոսելով կամ ժամանակ անցուցանելու, ինչպես առաջ սովորություն ուներ:

Այն օրից սկսած երբ յուր դրացի աղջկանց մեջ յուր ընկերակիցներից մեկը նրան վիրավորելու համար անվանեց նրան «լութերականի աղջիկ», նա այլևս ոչ մի ընկերուհու հետ չէր համարձակվում տեսնվել: Յուր ծաղկող հասակը, որ ավելացնում էր նրա գեղեցկությունը, չէր կարողանում հալածել այն անուշ տխրությունը, որը զգայուն աղջկա ճակատին դրոշմել էին ընտանեկան խռովությունները: Նա ամբողջ օրը զբաղված էր տան հոգսերով, և երբեմն միայն խոսակցում էր Աշոտի հետ, երբ նա խանութից դառնում էր տուն հայտնելու համար, որ այն երեկո յուր վարպետը հրավիրված է «եղբայրներից» մեկի տունը: Այս երիտասարդն էր մնացել միայն բոլոր բարեկամներից, որին մայրը և աղջիկը կարողանում էին բանալ իրանց սրտերը և հայտնել իրանց դեմ շատերին անծանոթ վշտերը…

Ահա այս պատկերն էր ներկայացնում ոսկերչի ընտանիքը նրա բողոքականություն ընդունելուց մի տարի հետո: Սակայն այստեղ էլ դեռ լրացած չէր այդ ընտանյաց թշվառության սահմանը, ճակատագիրը ավելի տխուր ապագա էր պատրաստել նրա համար:

Դ

Մի կիրակի առավոտ քարոզիչ Ավետիքը եկավ ոսկերիչի տունը և հայտնեց նրան, որ իրանց գլխավոր պաստորը Տփխիսից եկել է, ուստի ինքն էլ մյուս բոլոր «եղբայրների» հետ պիտի պատրաստվի նրա տեսության գնալու: Ոսկերիչ Գրիգորը նախ երկյուղ հայտնեց յուր տգիտությամբ մեծապատիվ պաստորի առաջ երևալու, բայց երբ Ավետիքը հարևանցի կերպով ծանոթացրավ նրան պաստորի անձնավորության հետ, հայտնելով, որ նա ինքը իսկ այս քաղաքացի է և հայտնի դպիր Ղազարի տղան է, որին յուր հայրը մանկության ժամանակ մի քանի ոսկով ծախել էր նեմենցներին, որոնց մոտ նա մնալով ուսել էր «տիրոջ խոսքը» և ստացել այս մեծ պաշտոնը, և թե նա բոլոր «եղբայրների» հետ իրանց հասկացած լեզվով պիտի խոսի, այն ժամանակ ոսկերիչը սիրտ առավ և հագնելով յուր պահեստի հագուստները, ընկերացավ քարոզչին: Վերջինս նրան առաջնորդեց յուր տունը, ուր հավաքված էին բոլոր «եղբայրները»: Իսկ այստեղից նրանք բոլորը միասին գնացին և ներկայացան մեծապատիվ պաստորին:

Քարոզիչ Ավետիքը պաստորին ծանոթացրավ «եղբայրներից» յուրաքանչյուրի հետ, համառոտ ծանոթություններ տալով նրանց անցյալի և ներկայի վերա, և հետո ներկայացրավ յուր եռամյա գործունեության հաշիվը: Այս հաշվից պաստորը բավականությամբ տեսավ, որ քարոզիչ Ավետիքը այդ ոչ շատ երկար ժամանակամիջոցում կարողացել էր երեսուն և երկու հոգի լուսավորչական հայերից դարձնել ավետարանականության: Միայն շատ չախորժեց տեսնելով, որ ներկայացրած տոմարի մեջ քսանյոթ հոգի պարտական էին կենտրոնական սնդուկին բավական նշանավոր գումարներ: Օրինակ, բազազ Հարությունը՝ 1200 ռ., նրա աներձագ Հովակիմը 1400 ռ., մուշտակագործ Ալեքսանը՝ 1000 ռ., ոսկերիչ Կարապետը (մեր ծանոթ Կարոն)՝ 1500 ռ., ոսկերիչ Սիմոնը՝ 900 ռուբլի: Սրանք բոլորը ստացել էին կանխիկ դրամ իրանց անհրաժեշտ պիտոյից համար:

Այնուհետև գալիս էին երկրորդական ճանապարհներով պարտապանները:

– Հյուսն Մաթեոսի տունը հրապարակական աճուրդից ազատելու և նրա պարտատերերը գոհացնելու համար ծախսված էր 1100 ռուբլի:

– Նրա արհեստակից Սարգսին ձիու գողության մեջ բռնված լինելուն պատճառով 18 ամսվա բանտարկությունից ազատելու և ձիատերը գոհացնելու համար 160 ռուբլի:

– Նախկին առևտրական փականագործ Հովհաննեսին յուր կինը և որդիները յուր ուղղափառ դավանության դարձնելուն համար ընծա 300 ռուբլի, այլև նրա կնոջը և որդոց մի – մի ձեռք հագուստ, արժեքը 120 ռուբլի:

– Գրագիր Դանիելի համար սեղանապետի պաշտոն ձեռք բերելու համար երկու անձանց բարեխոսությունը վաստակելու համար նվեր 250 ռուբլի, այլև նոր տարվա օրը նույն անձիքների համար ընծա երկու գլուխ շաքար և երկու գլուխ թեյ, 14 ռ. 40 կոպեկ:

– Փոդհար Ասրիբեկի չհաս պսակը հաջողեցնելու համար նվեր 300 ռ.: Եվ հետո այդ երկուսին ավետարանականություն ընդունելու համար նվեր մի միահարկ տուն, արժողությամբ 490 ռուբլի:

Սրանից հետո նշանակված էին մանր պարտապանների անունները կամ փոքր գումարով արված նվերները: Սրանք այնքան աննշան էին, որ երկար թվումն մասանց անել ավելորդ է, կհիշենք միայն մի քանիսը: Օրինակ, Ծառաձագ գյուղացի Կարապետին նվիրված էր 26 ռուբլու արժողությամբ մի էշ, խառատ Հովսեփին 90 ռուբլու արժողությամբ հյուսնի գործիքներ, Բալլու գյուղացի Մկրտչին փոխ տված էր 60 ռուբլի, երկու ջրաղացի քարեր գնելու համար, այսպես իմացիր և մնացածները:

Ներկա եղող երեսուն և երկու հոգուց միայն հինգ հոգի կային, որոնք «եղբայրություն» էին ընդունել առանց որևէ նյութական նպաստ ընդունելու: Դրանցից մինը ոսկերիչ Գրիգորն էր:

Պարոն պաստորը այս վերջիններին առավել մեծարանքով ընդունեց և ամեն տեսակ հարգանաց և գովեստի արժանի հայտարարեց նրանց:

Հետո նա սկսավ խոսել մի բավական ընդարձակ ճառ, որի մեջ գլխավորապես ձգտում էր հասկացնել «եղբայրներին» թե նրանք ինչ մեծ և աստվածահաճո գործի են իրենց ավետարանականություն ընդունելով, և թե որքան նեղություններ և վշտեր պետք է կրեն իրանց այդ ընտրած ճանապարհով անհողդողդ առաջ գնալու համար, թե որքան դժվարությանց պիտի հանդիպին և թե որպիսի բարոյական ուժ պիտի գործ դնեն այդ դժվարությանց հաղթելու համար:

«Դուք, – ասում էր պաստորը, – բախտավոր եք նրանով, որ առաջինն եք այդ լուսավոր ճանապարհի վերա ոտք դնողները: Դուք կանչված եք նրա դժվարությունները հաղթելու և մաքրելու ձեր ապագա սերունդի համար: Այդ իսկ պատճառով էլ դուք առավելապես պիտի վարձատրվիք երկրում առաջին նահատակների փառավոր անունը և երկնքում «տիրոջ» արքայությունը ժառանգելով: Բայց որովհետև ձեզանից մի քանիսը, ինչպես մեր քարոզիչ եղբայրը ինձ հայտնեց դեռ ձեր ընտանիքը ձեր լուսավոր ճանապարհի վերա հանելու չեք հաջողած, այդ պատճառով ձեր զոհաբերությունը կատարյալ չէ: Դուք կամ չպիտի ապրիք այդ ընտանիքում, որ հեթանոս է, կամ եթե ապրում եք այդ հեթանոսներին էլ պիտի աշխատեք առաջնորդել դեպի փրկության ճանապարհը: Ես գիտեմ, այդ բանի համար դուք առաջին անգամ, ինչպես ասեցի կհանդիպեք դժվարությունների, դուք կբազմացնեք ձեր թշնամիները, կգրգռեք ձեր դեմ ձեր բարեկամների ատելությունը, ազգականների արհամարհանքը, դուք կհարուցանեք ձեր ընտանյաց մեջ խռովություն, անհամաձայնություն և շատ անգամ կռիվ: Բայց այս բոլորը ձեզ չպետք է վհատեցնեն: Դուք չպետք է կորցնենք ձեր արիությունը այլ միմիայն անձանձիր աշխատեք: Մի օր դուք ուրախությամբ կտեսնեք, որ վերջապես հասաք ձեր սուրբ և վսեմ նպատակին: Մի օր դուք հպարտությամբ կտեսնեք, որ ձեզանից յուրաքանչյուրը մի – մի ընտանիք և այնուհետև մի ամբողջ սերունդ հեթանոսությունից դարձնելու պատճառ եղաք, և այն ժամանակ ձեր հոգիները համարձակ կդիմեն դեպի նրան, որ կանչում է, «Եկեք իմ հոր օրհնածներ, ժառանգեցեք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը»:

Այս և սրա նման շատ բաներ երկար խոսում էր պարոն պաստորը, և երբ յուր ճառը վերջացրավ, նա հարցրավ ներկա եղողների կարծիքը յուր ճառի մի քանի կետերի վերաբերմամբ: Բոլորը հիարկե պաստորի հայտնած մտքերի հետ համաձայն էին: Միայն ոսկերիչ Գրիգորը թույլատվություն խնդրեց իմանալու, թե արդյոք իբրև բացառություն իրեն չի ներվիլ, որ ինքը յուր համար ավետարանական մնա, իսկ իր կնոջը և երեխաներին թույլ տա իրանց մինչև այժմ դավանած կրոնը պաշտելու:

– Մենք հեգության աշակերտներ ենք, – համոզիչ եղանակով պատասխանեց պաստորը, – և ոչ ոքի չենք կարող ստիպել, որ նա զոռով մեր աշակերտը լինի: Բայց ով որ մի անգամ մեր «եղբայրության» մեջ է մտնում, նա պետք է մարդասեր լինի, և չկամենա, որ մարդկանց հոգիները կորչին: Դուք էլ, որ մեր սիրելի «եղբայրներից» եք նույն հոգով պետք է վառվիք, այսինքն պետք է աշխատեք որքան կարող եք, մոլորյալ հոգիները փրկելու, և ոչ թե թույլ տաք, որ նրանք կորչին և գեհենի բաժին դառնան: Այս ամենը գիտենալուց ետ, ձեր կամքից է կախված – թողնել ձեր ընտանիքը մոլորության մեջ կամ դարձնել նրանց ուղիղ ճանապարհ: Բայց և այնպես, – ավելացրավ պաստորը, – դուք, որ առանց շահախնդրության մտել եք մեր «եղբայրության» մեջ (որովհետև պաստորը փորձով գիտեր, որ այդ տեսակ հավատափոխները հազվագյուտ էին), դուք չպետք է արատավորեք ձեր անբիծ անունը, թույլ գտնվելով այն մեծ գործի մեջ, որի համար կանչված եք «տիրոջ» կամքով: Եթե դուք թշնամի չեք այդ ընտանիքին, ուրեմն գործով պիտի ցույց տաք ձեր բարեկամությունը, փրկելով նրանց բոլորի հոգիները անդառնալի կորստից:

Պաստորի խոսքերը խորը ներգործեցին ոսկերիչի վերա, և նա բոլորի վկայությամբ խոստացավ «չարատավորել յուր անբիծ անունը»: Սրանից հետո պաստորը հրավիրեց «եղբայրներին» աստծուն աղոթելու: Այս ընտանեական հանդեսն էլ վերջացնելուց ետ յուրաքանչյուրը քաշվեցավ յուր տունը:

Ճանապարհին քարոզիչ Ավետիքը, Կարոն և Գրիգորը միասին էին գալիս, որովհետև նրանց ճանապարհը մեկ էր:

– Գրիգոր եղբայր, – խոսեց Ավետիքը, – դու լավ ըմբռնեցիր պաստորի միտքը:

– Այո, որքան կարողացա, – պատասխանեց Գրիգորը, – նա ասում էր, որ ես պետք է աշխատեմ իմ ընտանիքն էլ մեր հավատին դարձնելու:

– Ապրիս, ճիշտ այդպես է: Այժմ ի՞նչ ես կարծում, պիտի կարողանաս թե ոչ:

– Մեծ դժվարություն եմ տեսնում այդ ձեռնարկությանս մեջ, հետևապես սկզբից ոչինչ հաստատ բան չեմ կարող խոստանալ:

– Ի՞նչ դժվարություն պետք է լինի, եղբայր, – մեջ մտավ Կարոն, – քո կինը իմ կնոջից ավելի պինդ հայ չէր կարող լինի, բայց ես նրան մոմի պես կակղացրի: Այստեղ հարկավոր է առնական հաստատակամություն: Եթե ունիս ուրեմն կամքդ կատարված է:

– Սխալվում ես, ոչ թե յուր այլ «տիրոջ» կամքը, – նկատեց քարոզիչը: – Իսկ եղբայր Գրիգորը այդ առնական հաստատակամությունը ունի, ես գիտեմ, երբ նա մտադրվեցավ մի բան անելու արգելքները նրա համար նշանակություն չունին:

– Ես միայն իմ ունեցած ուժս գործ կդնեմ, թե ինչպես կհաջողվի աստված գիտե:

– Այո՛, ուժ պետք է գործ դնել, – ավելացրավ Կարոն, – կինը միայն ուժի առաջ է հաղթվում: Ես մի քսան անգամ ծեծել եմ կնոջս մինչև նրան ճանապարհի եմ բերել:

– Ոչ, առաջ քաղցրությամբ և սիրով, – նկատեց քարոզիչը և լռեց, թողնելով որ խոսքի մնացորդ բառերը, «իսկ հետո ուժով և փայտով» իրենք իրանց հասկացվեն, որովհետև քարոզիչը զգուշացնում էր յուր «սեր և խաղաղություն» քարոզող մտքերին դավաճանող բառեր արտասանել, – Իսկ ձեր այդ գործը, – մի փոքր լռությունից հետո շարունակեց նա, – մեծ պարծանք կարող է բերել մեր «եղբայրներին» և գլխավորապես մեր պաստորին, որը յուր բոլոր ճիգը գործ է դնում մեր պատիվը և անունը բարձր պահելու բոլոր Եվրոպայի և Ամերիկայի միսիոներական և ավետարանական ընկերությունների առաջ: Վերջին բառերը առանձին հեշտահարությամբ էր արտասանում քարոզիչը, ոչ թե նրա համար որ նրանք մի որևէ նշանակություն ունեին, այլ որպեսզի Գրիգորի վերա նրան անծանոթ այդ բառերով ավելի մեծ ներգործություն աներ:

– Կաշխատեմ, – անվստահ ձայնով պատասխանեց Գրիգորը քարոզչին և նրա ձեռքը սեղմելով ուղղվեցավ դեպի յուր տան ճանապարհը:

– Իսկ մենք կհուսանք, – վստահ ձայնով նրա ետևից ավելացրավ քարոզիչը և հեռացավ Կարոյի հետ:

Ե

Ճաշի ժամանակ էր, երբ Գրիգորը տուն հասավ, նա ճանապարհին արդեն մտածել էր ինչ պիտի խոսեր յուր կնոջ հետ: Ներս մտնելու ժամանակ երեխաներից երկու փոքրիկները, որոնք սենյակում խաղում էին, հայրին տեսնելով դադարեցրին իրանց խաղը և կամենում էին դուրս գնալ: Գրիգորի սառն հարաբերությունները յուր կնոջ հետ երեխաներին էլ սառեցրել էին իրանից, ուստի երբ ինքը տուն էր մտնում, նրանք հեռանում էին հոր ներկայությունից իրենց ազատելու համար: Բայց այս անգամ հայրը նրանց թույլ չտվեց դուրս գնալու: Նա ծիծաղերես բռնեց նրանց ձեռքերից և յուր մոտ նստեցնելով սկսավ նախկին քնքշությամբ ողջագուրել նրանց: Երեխաները զարմացած աչքերով նայում էին մերթ հորը և մերթ միմյանց երեսին, և կարծես այդ անմռունչ հայացքներով կամենում էին հարցնել, թե արդյոք այս մարդը իրանց հայրը չէ՞ր:

Այս միջոցին ներս մտավ և՛ Մարիամը: Սա էլ ոչ սակավ զարմացավ յուր ամուսնու այս անսովոր փոփոխության վերա: Մի ամբողջ տարի էր, որ ժպիտը նրա երեսից անհետացել էր, որ նա չէր զգվել յուր երեխաներին և յուր կնոջը կողմնակի ճանապարհներով պատմելու համար, անտարբեր և սառն էր մնում դեպի այն բոլորը, որոնք մի համեստ ընտանեաց միակ երջանկությունն են կազմում: Մարիամը մի քանի րոպե կանգ առավ դռան մեջ և չէր վստահանում առաջ գնալ: Մի տեսակ անհանգստացնող ուրախություն, որից դեռ չէր բաժանվում խաբված լինելու երկյուղը բռնել էր նրան: Սրա սիրտը անընդհատ տրոփում էր… Վերջապես Գրիգորը նրան տեսավ:

– Այդ դու ես, Մարիամ, – դարձավ դեպի նրան քաղցրությամբ, – ինչու դրսումն ես կանգնել, մոտ արի քեզ հետ խոսելիք ունիմ:

Մարիամը մոտեցավ, բայց նրա յուրաքանչյուր քայլը մեքենայական էր: Նա հասավ ամուսնու մոտ նստեց աթոռի վրա:

– Փոքրիկներս, դուք գնացեք մյուս սենյակում խաղալու, – դարձավ Գրիգորը երեխաներին, – ճաշի ժամանակ մենք ձեզ կկանչենք:

Երեխաները հնազանդվեցան և դուրս գնացին:

– Ինչո՞ւ տխուր ես, Մարիա՛մ, – առաջին անգամ լռությունը ընդհատեց Գրիգորը:

– Ի՞նչ ունիմ ուրախանալու, – տխրությամբ պատասխանեց Մարիամը:

– Իրավունք ունիս, Մարիամ, – շարունակեց ամուսինը, – Բայց հիշո՞ւմ ես դու այն օրերը, որ մի տարի առաջ մենք անցուցանում էինք:

– Այո, այն երջանիկ օրերը ես չեմ մոռանում, – պատասխանեց Մարիամը խորը հառաչելով, – այն օրերը, որոնց ես կորցրել եմ և որոնց ես միշտ արտասվոք եմ մտաբերում:

Վերջին խոսքերի հետ արտասված երկու խոշոր կաթիլներ գլորվեցան նրա թորշոմած այտերի վերա:

– Այժմ, Մարիամ, ես կամենում եմ այդ օրերը կրկին դարձնել քեզ, ես էլ փափագում եմ իմ տան խաղաղությունը:

– Ախ, ո՞ւր էր մի փափագեիր այդ խաղաղությունը, ու՞ր է դարձրու ինձ իմ ամուսինը – իմ Գրիգորը… Ախ, եթե կարողանայիր ըմբռնել թե որքան տանջվել եմ ես, որքան արտասվել… Որբ՝ իմ մանուկ հասակից, միշտ զուրկ ծնող ունեցող որդիների ուրախությունից, այս հարկի տակ մտնելուց հետո միայն քո մեջ եմ գտել իմ առաջին ուրախությունը, իմ երջանկությունը, իմ կյանքը, և նրանից բաժանվելը, մահ էր ինձ համար, իսկ դու բաժանեցիր ինձ իմ ուրախություններից:

Այս խոսքերի հետ Մարիամը սկսավ դառնապես արտասվել:

– Բայց գիտե՞ս, սիրելի Մարիա՛մ, մեր տան խաղաղությունը, մեր անցյալ երջանիկ օրերը միմիայն ինձանով չպիտի վերադառնան, դու էլ պետք է օգնես ինձ, մենք երկուսս համակամ և համամիտ պիտի գործենք:

– Ինչ որ ինձ վերաբերվում է, ես պատրաստ եմ ամեն բանի համար, միայն դու եղիր առաջվանը, Գրիգո՛ր, միայն դու երեկոները ժպիտը երեսիդ մտիր տուն, և այդ երեկոները, մեր տնտեսության միակ ժամերը, քո ընտանյաց մեջ անցրու, զգվիր քո զավակներին առաջվա պես, ուրախացիր նրանցով, ուրախացրո՛ւ նրանց և այդ բոլորի հետ միասին մխիթարիր քո ամուսնուն: Մի ամբողջ տարի է, սկսված այն դժբախտ օրից երբ այդ անկոչ հյուրին մեր տան մեջ ընդունեցիր (նա խոսում էր քարոզիչ Ավետիքի մասին), մենք այլևս միմյանց չենք ճանաչում: Դու սառն և անտարբեր ես դեպի քո կինը և քո զավակները և մենք բոլորս՝ դեպի քեզ: Տեսնում ես, բոլորիս դեմքն էլ վշտահար, բոլորիս սիրտն էլ կոտրված, մեր ամբողջ տունը քայքայման մեջ, բայց ինչո՞ւ համար այս ամենը և մինչև ե՞րբ այսպես…

Գրիգորը տեսնում էր, որ չէր կարողանում անտարբերությամբ լսել կնոջ խոսքերը: Նրա դողացող և սրտաշարժ ձայնը թափանցում էր յուր սրտի խորքերը, նրա աղաչավոր և արտասվալից աչքերը կարծես շանթեր էին թափում յուր երեսին, նա իրեն զգում էր հաղթահարելու մոտ… Բայց այս հանգամանքը նպաստավոր չէր յուր նպատակին, ուստի կնոջ հուզմունքը և անհաջող սկսված խոսակցությունը առ ժամն դադարեցնելու համար, ասաց.

– Մարիամ, անցյալը հիշելուց և նրա վերա խոսելուց դադարենք: Մենք պետք է հաշտ լինենք, այս վճռված է, բայց թե ի՞նչ պայմաններով, այդ մասին դեռ պետք է խոսեմ քեզ հետ: Այժմ գնա դու ճաշ բեր մեզ համար, եթե պատրաստ է, ես սաստիկ քաղցած եմ, իսկ դրանից, ետ մենք շատ կարող ենք խոսել:

– Շատ լավ, – ասաց Մարիամը և ուրախությամբ դուրս գնաց սենյակից:

Մառանի դռան մոտ նա պատահեց Մանիշակին: Նա զարմացավ յուր մորը մի անսովոր ուրախության մեջ տեսնելով:

– Ի՞նչ է պատահել քեզ, մայրիկ, – անհանգստությամբ հարցրավ նա:

– Վերջապես աստված խղճում է մեզ, զավակս, – ասաց նա գրկելով գեղեցիկ աղջկանը, – նա քո հոր սիրտը և գութը շարժեց, վերջապես նա մեզ հետ հաշտվում է:

– Աստված, որքան ուրախ եմ, մայրիկս, ուրեմն այսուհետև մեր տանը կռիվներ չեն լինիլ, այնպես չէ՞:

– Իհարկե, դստրիկս:

– Օ՛հ չգիտես, մայրիկս, թե որքան քեզնից ծածուկ լաց էի լինում յուրաքանչյուր անգամ, երբ հայրս քեզ հետ կռվում էր:

– Խե՛ղճ աղջիկ, ի՛հարկե, լաց կլինեիր:

– Մայրի՛կ, ուրեմն հայրս այլևս լութերական չէ, այնպես չէ՞ :

«Լութերական» բառը լսելուց մայրը մի ռոպեական սարսուռ զգաց ամբողջ մարմնի մեջ. նա չկարողացավ յուր դրստեր հարցին ուղղակի պատասխանել:

– Լավ, այդ մասին հետո, – ասաց նրան, աշխատելով հեռանալ նորանից, – առայժմ դու գնա սեղանը պատրաստիր, իսկ ես իջնում եմ խոհանոցը, հայրդ քաղցած է, պետք է ճաշ տալ նրան…

Այս ասելով նա սանդուղքից ցած իջավ, իսկ Մանիշակը գնաց սեղանը պատրաստելու:

Բայց այնտեղ Գրիգորին տանջում էին ուրիշ մտածմունքներ: Նա չգիտեր, թե ի՞նչ հնարներով պետք է կարողանար համոզել յուր կնոջը՝ յուր նոր հավատը ընդունելու: Նրա աչքի առջևից դեռ չէին հեռացել Մարիամի վշտահար դեմքը, նրա արտասվող աչքերը, նա դեռ լսում էր նրա աղաչավոր ձայնը…

«Բայց ինչու՞ համար այս ամենը, – զարմացմամբ հարցնում էր ինքն իրեն նա, – ինչու՞ կորցնել իմ կնոջը, իմ երեխաներին, իմ տան խաղաղությունը… Այս բոլորը որքան և ուրիշների համար փոքր բաներ լինեին այսուամենայնիվ նրանք կազմում էին իմ տան կատարյալ երջանկությունը: Բայց մի՞թե այսուհետև ես չեմ կարող դառնալ իմ առաջի դրությանը, մի՞թե չեմ կարող բոլորը մոռանալ և ճանաչել միմիայն իմ ընտանիքը…»:

Այս խորհրդածություններից ետ նա լռեց և նորեն ընկավ մտախոհության մեջ: Հազար և մի տեսակ մտածմունքներ պաշարել էին նրան: Նա տարուբերվում էր, երբեմն թեքվելով ի նպաստ յուր կնոջ և մերթ հակառակ: Նրա հոգին այնպես խռովվել և միտքը այնպես

շփոթվել էր, որ երկար ժամանակ չէր կարողանում մի վճռական քայլ անելու: Երկար այս տարտամ դրության մեջ մնալուց հետո, վերջապես նա մտաբերեց պաստորին արած յուր հանդիսավոր խոստումը, քարոզչի ճանապարհին յուր հետ խոսածները, և բարձրանալով աթոռից բացականչեց. – «Ոչ, այս կատարյալ խայտառակություն կլինի, ես հրապարակապես խոստացա այն մարդուն «չարատավորել իմ անբիծ անունը», և ես կկատարեմ իմ խոստումը: Այլապես ինձ անհնար կլինի հրապարակ ելնեք այն բազմաթիվ մարդկանց հետ, որոնք այնտեղ վկա էին իմ խոստմանը: Այստեղ կորչում է իմ առտնին երջանկությունը, իսկ այնտեղ իմ անունը, վերջինը առավել արժանի է պաշտպանության»:

Այս հասարակ արհեստավորի մեջ այնքան բուռն էր պատվասիրության զգացմունքը, որ նա յուր անփոխարինելի երջանկությունը գիտակցաբար զոհում էր նրան, որովհետև արել էր մի խոստում և պիտի անպատճառ կատարեր նրան, այլապես նա իրեն կենդանի մեռյալ էր համարում: Խե՛ղճ մարդ, բայց դու չգիտեիր, որ նույնիսկ այդ քեզ որսացող և քեզնից խոստում առնող քարոզիչները հարյուր անգամ ավելի ստոր էին քեզնից այն զգացմանց մեջ, որոնց դու պաշտում էիր քո տգիտությամբ հանդերձ: Եվ թշվառությունն այն է, որ այդ ուղկանավորների ձեռքում դու պատվասիրության զոհերի վերջինը չէիր լինելու:

Գրիգորը յուր տարաբախտ վճիռը տվել էր արդեն, երբ Մանիշակը ներս մտավ և ճաշի հրավիրեց նրան: Նա առանց այլևայլության հետևեց յուր դստերը, մտադրված լինելով և ոչ մի դեպքում չհաղթահարվիլ յուր կնոջից:

Այսօր սեղանը բոլորել էին ընտանյաց բոլոր անդամները: Մարիամը գտնվում էր կատարյալ ուրախության մեջ: Նա մի համեմատություն էր անում այս և յուր անցյալ օրերի մեջ և հրճվում էր տեսնելով նրանցում շատ մոտ նմանություն: Նրա գորովը և խանդաղատանքը րոպե առ րոպե աճում էին թե յուր ամուսնու և թե՛ որդկերանց վերա: Նա այժմ զգում էր, որ մայր և ամուսին էր: Սեղանի վերա, ամբողջ ճաշի ժամանակ նա գրեթե ոչինչ չկերավ, այլ կերակուրները հրամեցնում էր կամ ամուսնուն կամ երեխաներին:

Գրիգորը նույնպես յուր կողմից իրեն ուրախ էր ձևացնում: Նա երբեմն – երբեմն կատակներ էր անում և ծիծաղում երեխաների հետ, թեպետ բռնի, իսկ երեխաները անընդհատ շաղակրատում էին: Մի խաբուսիկ և վայրկյանական ուրախություն բոլոր գերդաստանի վերա կենդանություն էր բերել…

Երբ ճաշը վերջացավ, երեխաները դուրս գնացին խաղալու, իսկ Մանիշակը զբաղված էր սեղանը հավաքելով: Այդ ժամանակ Գրիգորը Մարիամի հետ առանձնացավ իր սենյակը:

Մի քանի կցկտուր խոսքերից ետ Գրիգորը դարձավ կնոջը հետևյալ խոսքերով.

– Այսպես սիրով և խաղաղ ապրիլ լավ է, այնպես չէ, Մարիամ:

– Եվ դեռ հարցնո՞ւմ ես, – պատասխանեց Մարիամը: – Ի՞նչ էր երեկ մեր տան դրությունը և ի՞նչ է այսօր, էլ ի՞նչ հարկ կա ասելու, որ պետք է ամեն բան զոհենք միմիայն մեր տան այս խաղաղ դրությունը պահպանել կարողանալու համար:

– Շատ գեղեցիկ, մի երկու ժամ առաջ միևնույն բանն էիր ասում, և ես ավելացնում էի, որ մեր դրության բարվոքումը որքան ինձանից, նույնչափ էլ քեզանից է կախված: Եվ դու խոստացար ամեն բան անել, ինչ որ քեզ էր վերաբերվում:

– Այո՛, այժմ էլ խոստանում եմ:

– Լավ ուրեմն, լսիր, գիտես, որ մենք միմիայն մեր մարմնի համար չենք ապրում, այլ մեր ստեղծող «տիրոջ» կամքն է և մեր էլ գլխավոր ցանկությունը պետք է լինի, որ մեր հոգու փրկության համար էլ ապրինք:

– Գիտեմ:

– Գիտե՛ս, որ մենք այս աշխարհ եկել ենք ոչ թե մեծ վայելչություններ քաշելու, այլ որքան ժամանակ ունինք աշխատելու մեր հոգևոր փրկության և հավիտենական կյանքին արժանանալու համար:

– Գիտեմ:

– Գիտե՛ս որ մեր հոգու փրկությունը ձեռք բերելու և հավիտենական կյանքին արժանանալու համար, էլ մենք պետք է այս աշխարհում դիմանանք ամեն տեսակ նեղության,

զրկողությանց և չարչարանց, պետք է շատ անգամ մոռանանք մեր ազգականներին, մեր սիրելիներին և մինչև անգամ մեր անձը: Որովհետև տերն ասում է. «Ով որ չի թողնիլ յուր հորը, մորը, կնոջը և որդիքներին, և յուր խաչը չի վերցնիլ և գալ իմ ետևից, նա ինձ արժանի չէ»:

– Գիտեմ, և այս խոսքերը ես շատ անգամ լսել եմ եկեղեցում:

– Գիտե՞ս նույնպես, որ այդ հոգու փրկություն ձեռք բերելը կամ հավիտենական կյանքին արժանանալը ճշմարիտ հավատով պետք է լինի:

– Ի՞հարկե, հապա թուրքի հավատով չէ՞ լինելու:

– Այդպես է, թուրքի հավատով չէ լինելու, բայց այն հավատովն էլ չէ լինելու, որը մի տարի առաջ ես ունեի, և որը մինչև այսօր էլ դու ունիս:

Մարիամի դեմքը մռայլվեցավ, մի տխրեցուցիչ կասկած պատեց նրա սիրտը, որը անհանգստությամբ սկսել էր արդեն տրոփել: Նա անվստահ ձայնով դարձավ ամուսնուն.

– Ճշմարիտն ասած, ես այստեղ քեզ չեմ հասկանում:

– Ուրեմն լավ չլսեցիր: Ես քեզ ասում եմ՝ այն հավատը, ինչ որ ես ունեի առաջ և որը այժմ դու ունիս՝ նա քո հոգին փրկել և քեզ հավիտենական կյանքին արժանացնել չէ կարող, նա ընդհակառակը այդ հոգին կկորցնե և դժոխքի կրակին կմատնե:

– Բայց ինչո՞ւ համար:

– Որովհետև այդ հավատը սովորեցնում է քեզ անել այն, ինչ որ «տիրոջ» կամքը չէ, և ընդհակառակը արգելում է անել այն, ինչ որ «տիրոջ» կամքն ու պատվերն է: Այդ պատճառով դու պետք է աշխատես հեռանալ այդ սխալեցնող հավատից և դառնալ դեպի նրան, որը ուղիղ և ճշմարիտ է:

– Բայց միթե այսքան տարիներ այդ հավատով ապրողները բոլորն էլ դժոխքն են գնացել:

– Բոլո՛ր:

– Լավ ուրեմն, թող որ ես էլ այդ հավատով դժոխքը գնամ, ուրիշ հավատով ես արքայություն գնալ չեմ ուզում:

– Այդ անկարելի է, Մարիա՛մ: Դու մի խեղճ և միամիտ կին ես, դու կամենում ես քեզ կորցնել, քեզ հետ էլ իմ երեխաներին: Բայց ես ընտանիքի հայր եմ, ես իմ ընտանիքի հոգու կորուստը չեմ կամենում, որովհետև ես ձեր բոլորիդ համար պատասխանատու եմ, «տիրոջ» առաջ: Դու պետք է լսես իմ խնդիրը և պետք է երեխաներիդ հետ միասին ընդունես այն հավատը, որը ընդունել է քո ամուսինը:

– Բայց եթե ես ընդդիմանա՞մ:

– Այն ժամանակ դու կկորցնես բոլորը, ինչ որ քաղցր և ինչ որ սիրելի է քեզ համար: Միևնույն վշտերն ու խռովությունները կպատեն դարձյալ քեզ և քո բոլոր ընտանիքդ, և դու իրավունք չես ունենալ գանգատվիլ քո թշվառությունից, որ առաջինից ծանր կլինի…

Մարիամը ամբողջ մարմնով դողաց և մի քանի վայրկյան մնաց լուռ:

– Ի՞նչ ես վճռում այժմ, – անողոք ձայնով հարցրավ ամուսինը:

– Գրիգո՛ր, – աղաչավոր ձայնով դարձավ Մարիամը նրան, – մինչև այսօր մեր տան խռովությունները գլխավորապես նրա համար էին, որ դու հավատով բաժանվել էիր քո ընտանիքից, և ես պահանջում էի, որ դառնաս և միանաս նրա հետ: Գիտես, թե մենք միմյանց ինչպես էինք սիրում և մանավանդ թե գիտես որքան սիրում էի ես քեզ. ուստի մի վայրկյան անգամ ես չէի հոժարիլ, որ դու ինձանից բաժանված լինիս ամենաանշան զգացմունքով անգամ, ո՞ւր մնաց թե հավատով: Այս էր պատճառը, որ ես հենց առաջին օրվանից շատ դառնությամբ նայեցի քո հավատափոխության վերա, ես քեզ սկսեցի հաճախ հանդիմանել. հետզհետե այդ հանդիմանությունները փոխվեցան կծու նախատինքների և հետո շատ անգամ կռվի… Այս բոլորը խռովեցին և տակնուվրա արին մեր տունը: Բայց ես զղջում եմ, իզուր էին իմ հանդիմանությունները, իզուր էին իմ նախատինքները: Դու սկզբից իսկ պետք է ինձ խնայեիր, որովհետև քո արածը իմ կյանքի հակառակ էր, իսկ դու սիրում էիր ինձ… Բայց երբ այդ սերը չկարողացավ դարձնել քեզ քո թյուր ճանապարհից, իմ հանդիմանությունները ու նախատինքները, հարկավ ոչինչ ավելի չէին կարող անել: Ես սխալվեցա մինչև այժմ իմ քո դեմ գործածներով, այժմ ես ներողություն եմ խնդրում: Սկսենք դարձյալ հաշտ ու խաղաղ

ապրել, սկսենք միմյանց ուրախացնել… Ես մինչև այժմ ընդդեմ էի քո լութերական լինելուց և տեսար, թե ունեի իրավացի պատճառներ, բայց այժմ չեմ ընդդիմանում: Այժմ ազատ կարող ես քո ընտրածդ հավատդ պաշտել, ես այլևս քեզ չեմ խանգարիլ, միայն դու էլ ինձ ու իմ երեխաներին ազատ թող մեր պապերի հավատը պաշտելու, դու էլ մի խանգարիլ մեզ: Ես առավոտ երեկո կերթամ իմ եկեղեցին, կաղոթեմ աստծուն առաջվան պես, կխոստովանիմ քահանային իմ մեղքերը, ինչպես միշտ, առանց ընդհատելու կպահեմ իմ պահքը և նեղության մեջ ընկած ժամանակ կդիմեմ մեր սուրբերի բարեխոսությանը: Այս հավատով ապրել և մեռել են մեր պապերը, այս հավատով էլ կամենում եմ, որ ապրենք ու մեռնենք ես ու իմ որդիքս…

– Դու շատ խոսեցիր, Մարիամ, – պատասխանեց ոսկերիչը, – Բայց այդ խոսածներիդ հետ ինձ համաձայնվել անկարելի է: Մենք մի ընտանիք ենք, մեր թե՛ կամքը և թե՛ մահը մի հավատով պիտի լինի:

– Ուրեմն թող քո այդ նոր հավատը և նորեն դարձիր քո պապերի և մեր հավատին, այն ժամանակ մենք միահավասար կլինենք: Ավելի լավ է, որ մեկը շատերի հետ համաձայնվի:

– Անկարելի է, ես իմ հավատի ուղղությունը ճանաչելուց ետ նորեն մոլորության մեջ չեմ ընկնիլ, իմ հոգսը հենց ձեզ այդ մոլորությունից հանելն է:

– Բայց եթե ես ոչ մի կերպ չհամաձայնվիմ այս մոլորությունից դառնալու…

– Այդ հարցը մի անգամ արդեն արիր, և ես պատասխանեցի թե՝ դու կթշվառանաս և կթշվառացնես քո ընտանիքը:

– Բայց Գրիգոր, եթե դու և քո վարժապետները ուղիղ սրտով հավատում եք աստծո բարության, դուք պետք է գիտենաք, որ նա ձեզ մարդիկներիդ նման չար չէ, նա երբեք չի ցանկանա, որ դու այս կամ այն հավատը զոռով ընդունել տաս քո ընտանիքին, և եթե նա այդ չկամենա ընդունել, չարչարես ու տանջես նրան: Աստված երբեք չի կամենալ, որ մեր խաղաղ տան մեջ խռովություններ մտնեն այդ բանի համար, ուրեմն այդ քո լութերական վարժապետներդ էլ երբեք աստծուն սիրելի մարդիկ չեն կարող լինել, որովհետև ինչ տուն որ մտնում են, ամեն տեղ խռովություններ ու գժտություններ են սերմանում: Դու պետք է հեռանաս այդ մարգիկներից…

– Մարիա՛մ, ես էլ երկար խոսել չեմ կամենում, դու, պետք է վճռաբար հայտնես ինձ՝ ընդունո՞ւմ ես իմ խնդիրը, թե՞ ոչ:

– Ինչո՞ւմն է կայանում քո խնդիրը:

– Ահա թե ինչում, առաջին՝ դու չպետք է այսուհետև եկեղեցի գնաս և ոչ երեխաներիդ տանես, այլ Կարոյի կնոջ հետ նշանակած ժամին կգաք մեր ժողովարանը և այնտեղ կանենք ձեր աղոթքը, երկրորդ՝ կարգելես քահանաներին մեր տուն մտնել, երրորդ՝ կթողնես բոլորովին պահք պահելը. չորրորդ՝ կմոռանաս քո այդ հազար ու մի սրբերին ուխտ գնալը կամ մատաղներ մորթելը. հինգերորդ…

Այս խոսքերը խոսելու ժամանակ Մարիամի դեմքը հետզհետե մռայլվում էր, կուրծքը բարձրանում էր և իջնում և սիրտը տրոփում էր այնպես, որ կարծես թե պատրաստվում էր մի մեծ կռվի համար: Վերջապես նա ուղղվեցավ աթոռի մեջ և բարկացայտ աչքերը սևեռելով ամուսնու աչքերին խրոխտ ձայնով ընդմիջեց նրա խոսքը.

– Դու քո մտքումդ հաստատապես դրել ես, որ այդ բոլոր ասածներդ անել տաս ինձ:

– Այո՛, և ես այդ բանը խոստացել եմ մեր պաստորին և մեր քարոզչին:

– Շատ իզուր ես արել: Ես քո առաջարկներից և ոչ մեկը պետք է ընդունեմ: Ականջներդ բաց լավ լսիր և գնա քո անխիղճ վարժապետներիդ էլ հասկացրու, որ եթե Քրիստոսի շարչարանքներն էլ տաք ինձ, ես ձեր պահանջածներից և ոչ մեկը պետք է կատարեմ: Այս է իմ միակ և վերջին վճիռը:

Այս ասելով նա արագությամբ բարձրացավ տեղից և ուղղվեցավ դեպի դուռը:

– Մարիա՛մ, Մարիամ, լսիր ինձ, տես թե ի՛նչ եմ ասում, – գոչում էր ամուսինը ետևից:

– Ոչ, այլևս ես քեզանից ոչինչ լսել չեմ կամենում, և ոչ էլ երբևիցե քո երեսը տեսնել եմ ուզում: Իմ ամուսինը մի տարի սրանից առաջ է մեռել, ես այժմ այրի եմ…

Այս ասելով նա զայրացած դուրս գնաց և դուռը բարձրաձայն փակեց յուր ետևից:

Գրիգորը միառժամանակ մնաց յուր տեղը ընդարմացած և աչքերը ուղղած փակված դռանը: Հետո նա տեղից վեր կացավ, առավ վերարկուն և կրկին փակված դռանը նայելով մրմնջաց ինքն իրան. «Կամակոր կին, դու ուրեմն կամենում ես քո ամուսինը խայտառակել, լավ, կտեսնենք, թե քո այդ կամակորությունը մինչև ուր կտանե քեզ… Ես ամենից մեծ հիմարը կլինեմ, եթե թողնեմ քո գիտցածիդ պես երեսդ խաչակնքել անգամ: Մինչև այժմ ես քարոզչի պատվիրած քաղցրությունը գործադրի, այսուհետև էլ Կարոյի տված խորհրդին կհետևեմ»: Այս տխուր սպառնալիքներից ետ նա հագավ վերարկուն և դուրս գնաց սենյակից…

Ամուսինների այս վերջին բաժանումից ետ անցան երեք տարիներ, այս գերդաստանի համար երեք վշտալից տարիներ: Մարիամը հաստատ մնաց յուր վճռին, նա ոչ մի կերպ և ոչ մի պայմանով չհոժարեցավ ենթարկվիլ ամուսնու ներգործության՝ ընդունել բողոքականություն: Այս պատճառով ամուսինն էլ յուր կողմից, մանավանդ յուր «եղբայրների» հորդորմամբ, անողոքելի մնաց յուր վճռի մեջ: Մարիամի յուրաքանչյուր անգամ եկեղեցի գնալը, յուր տան մեջ քահանա ընդունելը, դրացիների հետ ուխտ գնալը, միով բանիվ նրա յուր հավատի վերաբերյալ ամենաչնչին հնավանդ սովորության կատարումը պատճառ էր դառնում յուր ամուսնու նախատելուն, հայհոյելուն և շատ անգամ այնպիսի կռվի, որը վերջանում էր նրանով, որ երբեմն սիրող ամուսինը սկսում էր ծեծել յուր կինը… Խեղճ Մանիշակը շատ անգամ մտնում էր այս վերջնակռիվների մեջ յուր մորը պաշտպանելու նպատակով, բայց հոր հարվածներից իրեն էլ բաժին առնելով վշտահար և լալով քաշվում էր մի կողմ: Մյուս երեխաները, որոնք անզոր էին իրանց մորը պաշտպանելու, լաց ու գոռոցով ողբակցում էին նրան և իրանց քրոջը: Եվ այսպես ամբողջ տունը շատ անգամ ներկայացնում էր մի աղիողորմ և սիրտ կտրատող տեսարան:

Ահա հենց այս տեսարաններից մեկն էր, որին ընթերցողները հանդիսատես եղան այս պատմության առաջին գլխում:

Ինչպես յուր տեղը պատմեցինք, և ինչպես կհիշեն ընթերցողները, երբ Խաթուն մայրիկը Մարիամին ու նրա երեխաներին առնելով տարավ յուր տունը, նրա ամուսնու, այն է վարպետ Սարգսի հրամանավ մի քանի երիտասարդներ ոսկերիչ Գրիգորի ձեռքերը կապելով, ժամավորների մեծ բազմությամբ տարան նրան գավառապետի մոտ:

Ճանապարհին հետաքրքիր բազմությունը հետզհետե խռնվում էր նրանց վերա և այդպիսով բազմացնում այդ բողոքավորների խումբը: Երբ նրանք հասան գավառապետի տունը, բակում կանգնած ոստիկանական պաշտոնյաները իսկույն իմացում տվին այս տարօրինակ խնդրարկուների մասին թաղական ոստիկանապետին: Ոստիկանապետ հայազգի Դանիել – բեկը իսկույն դուրս եկավ նրանց առաջ և շփոթված սկսավ հարցնել, թե ի՞նչ պատճառավ այս մեծ ամբոխը այսքան վաղ հավաքվել էր գավառապետի բակը:

Ամբոխի միջից դուրս եկավ վարպետ Սարգիսը, բռնած ոսկերիչի թևից և նրան առաջ քաշելով՝ «Աղա, – ասաց, – մենք եկել ենք գավառապետի մոտ նրա արդար դատաստանին մատնելու համար այդ չարագործ մարդուն, որ ահա ամբողջ երեք տարիներ է, չարչարում, տանջում է յուր կնոջը և որդիներին, որոնց այսօր էլ մենք ենք ազատել սրա ձեռքից տանջված ու գանակոծված»: Այս համառոտ բացատրությունից հետո վարպետ Սարգիսը մի քանի բան էլ պատմեց ոստիկանապետին ոսկերիչի քառամյա անցյալից և լռեց:

Ամբոխը հետաքրքրությամբ սպասում էր ոստիկանապետի պատասխանին, բայց նա ոչինչ չպատասխանեց, այլ միայն մի խորհրդավոր ակնարկ ձգելով ոսկերիչի վրա, լուռ ու մունջ ետ դարձավ և մտավ տուն:

Անժույժ երիտասարդներից ոմանք ատամները կրճտացնում էին ոսկերիչի վերա, ուրիշները բռունցքներն էին շարժում, իսկ ավելի հասակավորները խրատում էին նրանց՝ չափավորել իրանց զայրույթը, հուսադրելով, որ արդար դատաստանը հանցավորին կպատժե ինչպես վայել է:

Սակայն ոսկերիչի վերա այս սպառնալիքները ոչինչ ազդեցություն չէին անում, նրա դեմքը մինչև անգամ այլայլված չէր, նա անխռով և անտարբեր նայում էր ամբոխին և երբեմն

դեմքի վերա խաղացնում էր ծաղրական ժպիտներ, որոնք ավելի գրգռում էին տաքարյուն երիտասարդների զայրույթը:

Քառորդ ժամից ետ մի ոստիկանական պաշտոնյա դուրս եկավ ոստիկանապետի գրասենյակից և ներս կանչեց ոսկերիչին: Ամբոխից մի քանի մարդիկ էլ կամեցան ներս մտնել նրա հետ, բայց պաշտոնյան արգելեց նրանց ասելով, որ հրամայված է միմիայն հանցավորին ներս տանելու: Սրանից հետո մի տասը րոպե հետո դուրս եկավ ինքը ոստիկանապետը և հայտնեց ամբոխին, որ գավառապետը քնած լինելով, իսկույն ևեթ հանցավորին դատի ենթարկել անկարելի է, ուստի երբ գավառապետը կարթնանա և ատյան կիջնի, այն ժամանակ ինքը հարցաքննել կտա հանցավորին:

– Ես ինքս, – ավելացրավ նա, – ձեր կողմից թարգման կկանգնեմ ձեր արդարացի բողոքին, որովհետև ձեր ինձ պատմածներից ամեն բանի տեղեկացա: Գնացեք յուրաքանչյուրդ ձեր գործին, և հաստատ հավատացեք, որ եթե մեր քննությունից ոսկերիչը հանցավոր դուրս գա, նրան օրինավոր պատիժ կտանք:

– Այո, օրինավոր, օրինավոր, – գոչեցին մի քանիսը ամբոխի միջից և բոլորը միասին միամտվելով ոստիկանապետի խոստումով, ցրվեցան և յուրաքանչյուրը գնաց յուր գործին:

Սակայն բոլոր ոսկերիչների և առավոտյան բողոքին մասնակցող անձանց զարմացումը շատ մեծ եղավ, երբ երկու – երեք ժամից ետ նրանք իմացան, որ ոսկերիչ Գրիգորը ազատ, յուր «եղբայրների» հետ միասին, շտապում է եղել «տիրոջ» տունը աղոթելու. «Ի՞նչ հանելուկ է այս, – միմյանց մեջ շշնջում էին ոսկերիչները, – եթե ասենք փախել է, Գրիգորը այնքան սիրտ չունի, որ կրկին բռնվելուց չվախենա, եթե ասենք գավառապետը ինքն է արձակել, դա էլ խելքից հեռու է: Ուրեմն մի աներևույթ զորություն օգնության է հասել նրան» – վերջապես վճռեցին նրանք և լռեցին:

Սակայն հանելուկի լուծումը հետևյալն էր: Մեր ծանոթ Կարոն, ոսկերիչի հավատակիցը, ամբոխից ավելի ճարպիկ էր շարժվել: Նա յուր «եղբայրակցի» գլխովն անցածը լսելուն պես, վազեց քարոզչի մոտ, սա էլ յուր կողմից անհապաղ դիմեց պաստորին, որը ըստ բերման բախտին այդ օրերը դարձյալ այցելել էր յուր հոտին:

Այն միջոցին երբ հիշյալ բողոքավորների խումբը հեռանում էր գավառապետի տանից, պաստորը նստած էր յուր մի բարեկամի մոտ և երկար խոսակցում էր նորա հետ: Աղա Հովակիմը, այսպես էին անվանում պաստորի բարեկամին, բավական հարուստ մարդ էր: Եվ թեպետ նա մի առանձին հասարակական պաշտոն չէր վարում, սակայն յուր նշանավոր հարստության պատճառով քաղաքի մեջ նախանձելի դիրք ուներ բռնած: Նա համարվում էր միայն ամենակարող մարդը բոլոր քաղաքի մեջ: Եվ այս իսկ պատճառով նա միշտ շրջապատված էր խնդրարկուներով: Եվ որովհետև յուր հարստությունը կապում էր նրան քաղաքի շատ առաջավոր անձանց հետ, ուստի հազիվ էր պատահում, որ նա յուր ձեռնարկությունները ըստ յուր ցանկության չվերջավորեր և կամ իրեն դիմող նեղյալներին ձեռնունայն դարձներ: Այսպիսով, նա շատերին էր օգնում իրանց թշվառությանց և կարոտությանց մեջ: Մի բան միայն նսեմացնում էր նրա բոլոր բարեգործությանց փայլը, այդ այն էր, որ այդ մարդը գործում էր ոչ թե իսկապես բարեգործությունից դրդված, այլ ծայրահեղ փառամոլությունից: Նորա զվարճությանը չափ չէր լինում երբ տեսնում էր թշվառներին յուր առաջ ծնկաչոք և աղաչավոր, «կամ երբ փողոցով անցնելիս երբեմն իրանից բարերյալ մարդիկները՝ մինչև գետին գլուխ էին խոնարհեցնում նորան: Այս իսկ պատճառով նա շատ անգամ անխտիր օգնության ձեռք էր կարկառում և չարագործներին, միայն թե այդ բանը ավելացներ նորա համար դարձյալ մի տասնյակ երկրպագուներ: Պաստորը վաղուց ծանոթ էր աղա Հովակիմի հետ և քաջ ուսումնասիրած էր նորա թույլ կողմերը: Այս պատճառավ և այսօր ամենայն վստահությամբ դիմել էր նորան: Սակայն որքան մեծ եղավ յուր զարմանքը, երբ տեսավ, թե աղա Հովակիմը այս անգամ յուր խնդիրը կատարելու համար դժվարություններ էր ցույց տալիս: Բայց և այնպես նա իսկույն չվհատվեցավ: Նա լավ գիտեր, որ յուր բարերարը այն մարդիկներից չէր, որոնք կապարի ծանրություն ունեին և որոնց շարժելու համար շատ անգամ մեծ աշխատություններ են հարկավոր: Այստեղ բավական էր մի երկու մարդահաճ

խոսքեր, և բերդը առնված էր: Աղա Հովակիմի բացասական արտահայտությանը պաստորը պատասխանեց,

– Ճշմարիտը խոստովանած, աղա Հովակիմ, դուք այո անգամ ինձ զարմացնում եք: Դժվար է գտնել այս քաղաքում մի մարդ, որին կարելի լիներ համոզել թե՝ աղա Հովակիմը այս ինչ գործը կամեցավ և չկարողացավ կատարել, կամ թե նա հրամայեց և նորա հրամանը անկատար մնաց: Դուք, իրավամբ, ժառանգած եք ամենակարող անունը, և դուք չպետք է դավաճանեք այդ անվանը: Ո՛չ մի արգելք և ո՛չ մի դժվարություն մենք չենք ճանաչում, որը կարողանար դիմագրել ձեր հրամանին, ուստի իզուր եք բարեհաճում համոզել ինձ, որ իմ ամենախոնարհ խնդրի կատարումը ձեր կարողություններն վեր է: Բայց եթե արդարև դուք կատակ չեք անում, եթե դուք իջել եք այն բարձրությունից, որի վերա մինչև այսօր կանգնած էիք և կարողությամբ հավասարվել եք մյուս հասարակաստեղծ մարդիկների հետ, լավ է միանգամով հրամայեք մեզ տկարներիս գնալ և ջուրը թափվիլ, քան ապրիլ, որովհետև ինչ արժեք ունի այլևս մեր կյանքը առանց աղա Հովակիմի հայրենախնամ պաշտպանության…

Այստեղ պաստորը մինչև անգամ կամեցավ մի քանի կաթիլ արտասուք իջեցնել յուր տխուր երեսի վերա, սակայն տեսնելով, որ դերասանության այդ դժվար դերը իրան չի հաջողվում, շարունակեց,

– Ասացեք, կաղաչեմ, աղա Հովակիմ, ո՞ւմ դիմեն այսուհետև կարոտյալները, ո՞ւմ դիմեն մարդկային չարագործությանց ենթակա տառապյալները, ո՞ւմ դիմե իրավազուրկ այրին, ո՞ւմ դիմե անօգնական որբը… մտածեցեք, աղա Հովակիմ, մտածեցե՛ք մի րոպե, թե քանի – քանի թշվառներ ապրել և շնչել են քեզանով և թե դեռ քանիսին այսուհետև պետք է շունչ և հոգի տաք դարձյալ դուք: «Չեմ կարող» ձեր բարի լեզվի վերա շատ խորթ է հնչվում, ի սեր աստծո, մի արտասանեք դուք նորան և մի հուսահատեցնեք մեզ…:

Պաստորի այս հաճոյախոսությունը սպասված ազդեցությունը արավ: Նորա մանավանդ վերջին խոսքերը այն աստիճան զգվեցին աղա Հովակիմի փառամոլ ինքնասիրությունը, որ նա այլևս պաստորին դիմագրել չկարողացավ.

– Շատ լավ, շատ լավ, ես այդ մասին կաշխատեմ, – ասաց նա նորան, – դուք անհոգ կացեք:

– Շնորհակալ եմ, ով հասարակաց բարերար, բյուր անգամ շնորհակալ: Դուք միշտ պիտի փառաբանվիք քանի կենդանի եք և ձեր հիշատակը պիտի օրհնվի դարերի ընթացքում, երբ դեպի հանդերձյալ կենաց երանությունը փոխվիք:

Այս ասելով պաստորը բարձրացավ աթոռից և մինչև գետին խոնարհվելով ողջունեց աղա Հովակիմին եւ դուրս գնաց: Փոքր ժամանակից ետ դուրս գնաց տանից և աղա Հովակիմը յուր գեղեցիկ ձիու վերա նստած, որին հետևում էր մի հետևակ ծառա: Նոքա երկուսը միասին դիմում էին դեպի քաղաքի ներքին մասը: Դորանից մի քանի ժամից հետո ոսկերիչ Գրիգորը քաղաքի մի զառիվեր փողոցով բարձրանալով դիմում էր պաստորի տունը: Յուր լութերականություն ընդունելուց ետ առաջին անգամ էր, որ նա օրհնում էր հարստությունը և խոստովանում էր, որ ոսկին ամեն բանից զորեղ է… Այս դեպքից ճիշտ տասն օր հետո, մեր լրագիրներից մեկի մեջ տպված էր հետևյալ լուրը. «Մեզ գրում են Շ. քաղաքից, որ այնտեղի հայ լուսավորչականները խմբովին հարձակվելով մի բողոքական արհեստավորի տան վերա, ծեծել և անպատվել են նրան՝ թե տան տիրոջը և թե նրա ընտանիքին և քարերով կոտորել են տան պատուհանները: Ոստիկանությունը հասնելով հազիվ ազատել է կատաղի ամբոխի ձեռքից անմեղ զոհերին: Այս լուրը յուր ժամանակին իհարկե վրդովել է ընթերցող հասարակության ազնիվ մասի սրտերը և նրանց զայրույթը վառել այդ մոլեռանդ հայ լուսավորչականների դեմ»: Սակայն իմ ընթերցողները տեսան, որ այդ զայրութը անտեղի է եղած: Միայն ցավալին այն է, որ այս տեսակ խեղաթյուրյալ լուրերի մեջ դա առաջինը չէր և վերջինն էլ չէ լինելու:

Ոսկերիչը «տիրոջն կամեցողությամբ այսպես հրաշքով ազատվելուց ետ պաստորի հրամանով շտապեց գտավ «եղբայրներին» և նրանց հետ միասին գնաց իրանց աղոթատեղին գոհություն մատուցանելու աստծուն: Եվ ահա հենց այս միջոցին տեսել էր նրան ոսկերիչներից

մեկը և նրա ազատվելու լուրը տարել յուր արհեստակիցներին, որոնք այսումենայնիվ նրան նորեն խանգարել չկարողացան… Պաստորն էլ յուր ժամանակին հասավ «եղբայրների» ժողովարանը: Այստեղ նա հանդիսավոր գովեստներ նվիրեց Գրիգոր եգբորը, որը տիրոջ ընտրյալ հոտը բազմացնելու նպատակով այնքան ջերմեռանդությամբ էր աշխատել, որ յուր կյանքն անգամ ենթարկել էր վտանգի:

– Այսպիսով, – ասում էր նա ոսկերիչին, – դու վարվել ես «տիրոջ» այն պատվերի համաձայն, որ մեզ սովորեցնում է թողնել հայր, մայր, կին և որդիք և մեր խաչն առնելով գնալ յուր ետևից: Դու արել ես այն, ինչ որ ի հնումն անում էին Պետրոս և Պողոս առաքյալները և նրանց պես ենթարկվել ես հալածանքների: Գուցե դեռ «տիրոջ» կամեցողությամբ նրանց պես չարչարանքներ էլ պիտի կրես, բայց իմացած եղիր, որ նրանց չափ էլ պիտի վարձատրվիս հավիտենականության մեջ:

Այս և սրանց նման խոսքերով պաստորը խրախուսում էր Գրիգորին և մյուս «եղբայրների» մեջ վառում էր նախանձավորություն նրան հետևելու համար:

Այս օրվանից ոսկերիչ Գրիգորը, ըստորում բավական առաջադիմություն էր արել սուրբ գրոց ընթերցանության մեջ, կարգվեցավ քարոզչի օգնական: Սա մի պաշտոն էր, որ «եղբայրների» մոտ նրա պատիվը բավական բարձրացնում էր:

Ոսկերիչ Եսավի նման ուրախացել էր այս ոսպաթանով և բնավ չէր մտածում յուր վաճառած անդրանկության, կամենում եմ ասել յուր կորցրած երջանկության յուր կնոջ և երեխայոց վերա…

Բայց այժմ մենք դառնանք նրանց մոտ:

Վարպետ Սարգսի տան մի ընդարձակ սենյակի մեջ նույն օրը անկողնում հիվանդ պառկած էին Մարիամը և նրա մոտ յուր մի տղա երեխան, որը այս անցքից մի քանի օր առաջ հիվանդացած էր պարանոցի ուռուցքով: Մանիշակը տխուր և գունաթափ դեմքով կծկվել էր մոր սնարների մոտ.

Տանտիկինը և հարսները նույնպես բոլորած էին Մարիամի շուրջը: Խաթուն մայրիկը տեսնելով, թե այս տխուր անցքը որքան մահացու կերպով ազդել էր խեղճ կնոջ վերա, աշխատում էր որքան յուր ճարտարախոսությունը ներում էր մխիթարել նրան: Բայց վերջինս միշտ անմխիթար էր. մանավանդ երբ նրանք խոսում էին ամուսնու դարձի մասին, որի համար նա կորուսած էր բոլոր հույսը, խեղճ կինը խորը հառաչում եւ արցունքներ էր թափում, առանց խոսել կարողանալու: Երբեմն զառանցման մեջ նա մրմնջում էր. «Այս խայտառակությունը միայն ինձ գերեզման կտանե… Ես դարձյալ կարող էի իմ տառապանացը տանել, եթե միայն իմ տան գաղտնիքները այսքան աշկարա հրապարակ չհանվեին…»:

Եվ արդարև նա ավելի մեծամեծ նեղությանց էլ կհամբերեր, եթե միայն յուր ցավերը լոկ իրան հայտնի լինեին, եթե միայն ուրիշները չիմանային, թե յուր երբեմն երջանիկ ընտանիքը թշվառացել է, թե յուր ամուսինը ամբոխի ձեռքով քաշված է դատարան և թե ինքը յուր երեխաներով փախած է սեփական տանից և ապաստանած է յուր դրացուն: Սրանք բոլորը յուր համար մի – մի մահացու հարվածներ էին: Որքան շատ նա տանջվել է, որքան շատ գրկանքներ կրել, բայց նրա ձայնը, նրա տրտունջը ոչ ոք չի լսել: Եվ այս ոչ թե պետք է վերագրել նրա երկչոտության, ո՛չ այլ առաքինի և անստգյուտ պարկեշտության: Մի կին, որ սիրում է յուր ընտանիքը և ապրում է միմիայն նրա համար, երբեք չէ կամենում այդ ընտանյաց խայտառակությունը յուրմով տեսնել: Ամեն գժտություններ, ամեն անբավականություններ նա ծածկում էր յուր համբերության վարագույրի տակ: Նա ինքը միայնակ նահատակ է հանդիսանում ամեն ընտանեկան փոթորիկների ժամանակ, խռովությանց բոլոր ալիքները փշրվում են նրա տկար գլխին, նա բոլորին տանում է արիությամբ, միմիայն նավի ղեկը ալիքներին չմատնելու համար, միմիայն իր տունը կատարյալ քայքայման չհասցնելու համար…

Արդյոք ի՞նչ կարծիք ունեին այդօրինակ կանանց վերա մեր մայրաքաղաքի հայ տիկինները, որոնք շատ անգամ իրանց գլխարկների մի ոսկեփայլ փետուրի պատճառով տակնուվրա են անում ամբողջ ընտանիքը:

Գավառեցի հայ կանայք, գավառեցի հայ մայրեր, որքան շատ փոքր ենք ճանաչում մենք ձեզ, որքան շատ փոքր ենք ծանոթ ձեր արժանավորությանց և առաքինությանը հետ: Մեր լուսավորվածները շլանում են երբ զարգացած հասարակությանց մեջ հանդիպում են մի կնոջ, որը իր բնական տկարության մեջ ցոլացնում է մի զորեղ առաքինություն, կամ հափշտակվում են, երբ բանաստեղծի երևակայության մեջ ծնվող և ապրող կանանց պատմություններն են կարդում: Բայց մի՛ սխալվիք, բարեկամնե՛րս, կամ մի՛ դարձրեք ձեր երեսը այս աղքատիկ տնակներից, ուր ծնվել եք և ուր անցուցել եք ձեր մանկությունը: Մտե՛ք այս ծխոտած հարկերի տակ, ուր ձեր կարծիքով ոչինչ վսեմ ու բարձր չկա. քննեցեք այստեղ ապրող կանանց, ձեր մայրերի ու քույրերի կյանքը, բարքը և սովորությունները, և զարմացմամբ կբացականչեք. «Որքան պակասավոր են դեռ մեզ շլացնող կանայք իրանց առաքինության մեջ, որքան պակասություններ ունի դեռ բանաստեղծի գրիչը և երևակայությունը»:

Մարիամի տկարությունը ժամեժամ ավելանում էր: Կեսօրի մոտ նա սաստիկ տենդի մեջ էր գտնվում և գրեթե զգայազուրկ ընկած էր անկողնի վերա:

Բայց մի ուրիշ վիշտ էլ ավելացավ Խաթուն մայրիկի և մանավանդ նրա որդի Աշոտի համար: Նույն ավուր երեկոյան պահուն գլխի պտույտով և տենդով հիվանդացավ և՛ Մանիշակը, նախընթաց գիշերը ամբողջ մի քանի ժամ սառնամանաց մեջ բարակ հագուստով մնացել էր խեղճ աղջիկը, և ցուրտը թափանցել էր նրա ոսկորների մեջ: Թեպետ հիվանդությունը վտանգավոր ելք էր գուշակում, բայց Աշոտի բերած բժիշկը, մահտեսի Հարությունը, հավատացնում էր բոլորին, որ նրա հիվանդությունը շատ թեթև տեսակին է պատկանում: «Մի փոքր մրսել է, – ասում էր նա, – մի դեղ կտամ և մինչև առավոտ ամեն բան կանցնի»: Սակայն հետևյալ առավոտը հիվանդի դրությունը ավելի վատթարացավ: Սրան էլ կարծես հետևում էր եղբայրը: Նրա պարանոցի ուռուցքը ավելացել էր, գրեթե երեկվա տեղափոխության ժամանակ ցուրտ առնելու պատճառով: Մահտեսի Հարությունը խորհուրդ տվավ, որ թույլ տան իրեն երեխայի ուռուցքը հերյունով (նշտար) պատռելու, նրան ոչ ոք չհանդիմանցավ, սակայն այդ գործողությունը ավելի ևս բորբոքեց նրա պարանոցի վերքը, և ուռուցքը ավելացավ:

Այն սենյակը, ուր պառկած էին հիվանդները, մտնողի վերա շատ տխուր տպավորություն էր անում: Մայր, աղջիկ և տղա մի շարքով տարածված հեծում էին հիվանդության ծանրության տակ: Ոչ մեկը մյուսից ավելի հուսալի դրության մեջ չէր գտնվում:

Խաթուն մայրիկը և յուր հարսները կրկնապատկում էին իրանց ջանքերը: Նրանք կարծես թե մոռացել էին իրանց տան հոգսերը և միմիայն հիվանդներով էին զբաղված: Որքան դեղ ու դարման գիտեին թե իրանց բժիշկը, թե՛ իրանք և թե՛ ազգական այցելուները, բոլորը գործ էին դնում: Աշոտը նույնպես թողած էր յուր պարապմունքը, ամբողջ օրը այս ու այն կողմ էր վազվզում, երբեմն բժիշկ մահտեսու ետևից, երբեմն դեղատուն, երբեմն շուկա և այլն, իսկ այս գործերը կատարելուց ետ գալիս էր և լուռ ու մունջ նստում Մանիշակի անկողնի մոտ: Նրա աչքերը անընդհատ ուղղվում էին նրա դեմքի վրա, որպեսզի հիվանդը որևէ պահանջմունք ունենալուց ինքը պատրաստ լինի: Նա գիշերներն անգամ յուր մոր հետ միասին անքուն հսկում էր հիվանդների մոտ, չկամենալով ոչ ոքի հանձնել մանավանդ Մանիշակի խնամատարությունը:

Ընթերցողը անշուշտ հիշում է, որ, որ չորս տարի սորանից առաջ վարպետ Սարգիսը ոսկերիչ Գրիգորի մոտ, հացկերության ժամանակ խնդրեց վերջինից Մանիշակի ձեռքը յուր Աշոտի համար, և որ այս խնդիրը կատարվեցավ բոլոր հյուրերի համաձայնությամբ և նրանց կենաց համար բաժակներ դատարկելով: Ծնողների խոսածները լոկ խոսքեր չմնացին. այդ օրից սկսած Աշոտը սկսավ առանձին համակրությամբ վերաբերվել դեպի մանկահասակ օրիորդը: Մի քանի ժամանակից ետ այդ համակրանքը փոխվեցավ սիրո, որը հետզհետե սկսավ աճել պատանու սրտի մեջ և խորը արմատներ ձգել: Թեպետ ինքը իբրև գավառական համեստ քաղաքի ծնունդ, և որ ավելին է, արհեստավոր դասին պատկանող, երբեք չէր կարողանում պարկեշտության սահմանից ելնելով մի որևէ խոստովանություն աներ օրիորդին կամ նրա մորը, սակայն օրիորդի վերաբերմամբ յուր ունեցած վարմունքը այս քանի տարում

ոչինչ կասկած չէին թողել Մարիամի մեջ, որ երիտասարդը կատարելապես նվիրված էր յուր աղջկան: Միայն նա ձախող և վերահաս հանգամանքները միշտ աչքի առաջ ունենալով՝ յուր կողմից չհասկանալուն էր տալիս: Ինչ կվերաբերվի Մանիշակին, նա նույնպես անտարբեր չէր դեպի երիտասարդ Աշոտի զգացմունքը, սակայն յուր վարմանդ մեջ այնքան էր համեստ որ մոր սրատես աչքերն անգամ նրա մեջ ոչինչ կասկածելի հետքեր չէին նշմարում:

Գալով ոսկերիչին, նա այնքան էր զբաղված յուր «Տիրոջ հոտի» գործերով, որ այս տեսակ բաներով բնավ չէր հետաքրքրվում, իսկ վարպետ Սարգսին արած խոստումը վաղուց թռել էր նրա հիշողությունից:

Այսուամենայնիվ վարպետ Սարգիսը և Խաթուն մայրիկը հաճախ իրանց տանը խոսում էին Մանիշակի վերա, իբրև իրանց ապագա հարսի, գովում էին նրան թե իբրև կատարյալ տնտեսուհի և թե՛ քաջ ձեռագործող և հորդորում էին Աշոտին աշխատել նրա համար արժանավոր փեսա լինելու:

Չնայելով, որ Աշոտի ծնողների համար այս ամուսնության խնդիրը մի վճռված գործ էր, այնուամենայնիվ նրանք էլ այս մասին ոչինչ չէին խոսում Մանիշակի ծնողաց հետ, այլ սպասում էին, մինչև որ Աշոտի համար առանձին խանութ կբանային և նա կսկսեր յուր եղբարանց պես առանձին հաց աշխատել, իբր յուր գերդաստանի մի կարող անդամ: Այս վերջին ակնկալությունն էլ կատարված էր: Վարպետ Սարգիսը և յուր կինը պատրաստվում էին այդ օրերը իրանց հարսներից և ազգականուհիներից մի քանիսին պաշտոնապես խնամախոս գրկել ոսկերիչի տունը Մանիշակի համար, երբ ահա մեզ ծանոթ աղետալի անցքը մեջ ընկավ և բոլորի հույսը խափանեց…

Այժմ Աշոտը բեկված սրտով նստած էր յուր հիվանդ սիրուհու մոտ, դիտում էր նրա անզոր շարժումները, նրա դալկացած դեմքը, լսում էր նրա նվազած ձայնը, նրա հեծեծանքը և հառաչում էր խորին հուսահատությամբ:

Մի օր, երբ նա ըստ սովորականին գտնվում էր հիվանդի մոտ, Մանիշակը ջուր խնդրեց, նա իսկույն բարձրացավ տեղից և գավաթը մոտեցրավ նրան:

Մանիշակը աչքերը բացավ ջուրը առնելու և Աշոտին տեսնելով նվազ ձայնով ասաց.

– Դարձյալ դո՞ւ ես, Աշո՞տ:

– Այո, ես եմ, Մանիշակ, նեղանո՞ւմ ես, որ ես եմ քեզ ջուր տալիս, – պատասխանեց երիտասարդը:

– Այո՛, նեղանում եմ, շա՛տ եմ նեղանում: Հապա դու ե՞րբ պետք է հանգստանաս, մի՞թե խեղճ չեն քո ծնողները, մի՞թե մեզ համար բարություն արած կլինես, երբ դու էլ հիվանդանաս:

– Եթե դուք հիվանդացել եք, ի՞նչ մեծ բան է, եթե ես էլ հիվանդանամ:

– Մենք մեր հոր մեղաց համար տանջվում ենք, իսկ դու ինչու համար պիտի տանջվես, խեղճ տղա:

Այս ասելուց ետ նա մի փոքր լռեց և ապա հարցրավ.

– Ուրիշ ո՞վ կա սենյակում, Աշո՞տ:

– Ո՛չ ո՞ք:

– Իսկ մայրս արթուն չէ՞:

– Ոչ, մի ամբողջ ժամ է արդեն, որ նա հանգիստ քնած է:

– Լավ է, որ քնել է, նա այս գիշեր շատ է տանջվել:

– Այստեղ կանգ առավ օրիորդը և դարձյալ փոքր լռությունից ետ նորեն սկսավ.

– Աշոտ, մի՞թե կասկածում ես, թե ինձանից ծածուկ է, որ դու ինձ սիրում ես:

– Ի՞նչպես, Մանիշակ, – կարմրելով և շփոթված հարցրավ երիտասարդը:

– Այնպես, դու ինձ սիրում ես, ես այդ վաղուց գիտեմ, գիտեմ նույնպես, որ շատ ես սիրում, շնորհակալ եմ, Աշոտ, բայց մի բան կա, որը դու մինչև այսօր դեռ չգիտես, ես պետք է այն էլ ասեմ քեզ:

– Ի՞նչ բան, – մի փոքր սիրտ առնելով, բայց համեստությամբ հարցրավ Աշոտը:

– Այն, որ ես էլ քեզ եմ սիրում և շատ ժամանակ է, որ սիրում եմ, այսինքն այն օրից, երբ մեզ ամուսնացնելու համար միմյանց խոսք տվին մեր հայրերը:

Աշոտի երեսը կրկին շառագունեցավ, նա չէր համարձակվում սիրուհու աչքերին նայելու, մինչև որ վերջինս կրկին սկսավ խոսել:

– Բայց գիտե՞ս, Աշո՛տ, թե ինչու համար այս խոսակցությունը արի քեզ, այդ նրա համար, որ ես շուտով պետք է մեռնիմ, ուստի չուզեցի որ իմ այդ գաղտնիքը ինձ հետ գերեզման տանեմ, և որ դու հավիտյան երկմիտ չմնայիր թե արդյոք Մանիշակն էլ սիրում էր քեզ…

– Մանիշակ, ինչո՞ւ այդպես տխուր բաներ ես խոսում, ինչու պետք է մեռնիս դու… – բայց երիտասարդը չկարողացավ շարունակել յուր խոսքերը, արտասուքը խեղդեց նրան, և նա սկսավ լալ:

– Դու լալիս ես, Աշոտ, երանի քեզ, գոնե մի փոքր կհանգստանաս, բայց իմ արտասուքներս վաղուց, արդեն շատ լալուց ցամաքել են…

– Ախ, Մանիշակ, Մանիշակ… այս ի՞նչ արիր դու ինձ, – հեկեկալով խոսում էր երիտասարդը, – երանի թե ինձ ոչինչ չհայտնեիր, երանի թե ես միշտ այնպես կարծեի, թե դու ինձ երբեք չես սիրել, գոնե այն ժամանակ ես մի փոքր հանգիստ կունենայի, իսկ ա՛յժմ… այժմ փոքր է մնում, որ խելքս գլխես թոցնեմ…

– Բնավ, սիրելի Աշոտ, բնավ մի՛ նեղսրտիր, թշվառը ես եմ, ես կմեռնեմ, մի փոքր ժամանակ, ինձ համար կարելի է սուգ կպահես, այնուհետև իմ հիշատակը քո սրտից էլ կկորչի…

– Մանիշակ, դարձյալ նույն խոսքերն ես ասում, Մանիշակ, մի՞թե ինձ չես խղճում…

– Թո՛ղ, մի կտրիր խոսքս: Ասում եմ, որ իմ հիշատակը քո սրտից էլ կկորչի, այն ժամանակ դու քեզ համար ուրիշ հարսնացու կընտրես, դու կամուսնանաս, դու երջանիկ կլինես… բայց մի վերջին խնդիր ունիմ, նա էլ պետք է կատարես, այսինքն այն, որ երբեմն – երբեմն իմ գերեզմանին այցելության գաս, քո կինն էլ հետդ կբերես և կասես նրան թե «այս խեղճ աղջիկը սիրում էր ինձ»… Հետո կպատմես նրան իմ դժբախտությունները, որովհետև դու բոլորը տեսել ես, դու բոլորը գիտես, գուցե նա էլ խղճա և մի անգամ «ողորմի» կասի ինձ…

Երիտասարդի սիրտը կսկծից մորմոքվում էր:

Նա նմանվում էր այն թշվառ ծնողին, որը եկել էր տեսնելու նավաստիների ձեռքով ցամաք հանվող խեղդվածներին և նոցա մեջ ճանաչում է յուր յոթ տարիների վեր կորսուած միամոր զավակը: Անլուր թշվառություն, նա գտնում է յուր որդին, բայց ավաղ հավաստիանալու համար միայն որ նա հավիտյան կորած է յուր համար…:

Այս դրության մեջ էր գտնվում և Աշոտը յուր սիրուհու խոստովանությունը լսելուց հետո, նա տանջվում էր, նրա երակների մեջ արտասուք էին հոսում, բայց ոչինչ չէր կարողանում անել, ոչինչ չէր կարողանում խոսել, նա լալիս էր…

Վերջապես Խաթունի հարսներից մեկի ներս գալով տխուր տեսարանը փակվեցավ: Աշոտը շատ այլայլված դուրս գնաց սենյակից:

Այն օրից սկսած մեր խեղճ սիրահարը ամեն բան մոռացավ: Նա այժմ ավելի դժբախտ էր համարում իրան, քան այն ժամանակ, երբ դեռ չգիտեր, թե Մանիշակը սիրում էր իրան: «Երանի թե նա այդ խոստովանությունը չաներ ինձ», հաճախ կրկնում էր նա: Որովհետև Մանիշակի հետ ամուսնանալու հույսով յուր ունեցած ցնորքները, երջանիկ ապրելու նախագծերը, – բոլորը յուր սիրուհու արած տխուր գուշակություններով ցնդվում էին օդի մեջ: Նա այժմ իրան զգում էր աշխարհի մեջ միայնակ և ամեն բարեմասնություններից զուրկ…

Եթե հայրը երբեմն հորդորում էր նրան գնալ շուկա և օրվա մեջ գեթ մի քանի ժամ խանութ բանալ, նա դառնությամբ պատասխանում էր:

– Այսուհետև այդ ո՞ւմ համար անեմ, իմ աստղը ջուրն է ընկել:

Խեղճ երիտասարդը յուր սիրուհուն կրկին առողջ տեսնելու համար բոլոր հույսը կորուսել էր: Շատ անգամ մայրը նրան հուսադրում էր, սիրտ էր տալիս, զանազան օրինակներ էր բերում այդ տեսակ հիվանդությամբ հիվանդացողներից, որոնք այսուամենայնիվ քիչ ժամանակից հետ կատարյալ առողջություն են ստացել, բայց երիտասարդը միշտ անմխիթար էր: Նա այժմ հավատում էր ավելի Մանիշակի արած գուշակություններին, մանավանդ երբ տեսնում էր, որ

երեք հիվանդներն էլ օրստօրե վատթարանում էին, և մահտեսի Հարությունը առաջվան պես հուսով չէր խոսում նրանց առողջանալու համար:

Հետաքրքիր ընթերցողը կցանկանա իմանալ, թե այդ ընդհանուր դժբախտության ժամանակ ուր էր ոսկերիչ Գրիգորը ի՞նչով էր զբաղված և արդյոք չէ՞ր հետաքրքրվում իմանալու համար, թե ուր են գտնվում յուր կինը, աղջիկը և երեք որդիները: Ոսկերիչը այն օրից, երբ քարոզչի օգնական դարձավ, ընկեր հարևանի նախատինքներից ազատվելու և «տիրոջ հոտին» անձնավորությամբ ծառայելու համար, «եղբայրների», խորհրդով հավաքեց յուր խանութը, իսկ յուր ունեցած երեք հազար ռուբլին հանձնեց պաստորին, որ նա յուր կողմից ղրկե մայրաքաղաքի բանկը շահեցնելու համար: Վերջին անցքերից ետ, նա գրեթե ամբողջ օրերը անցցնում էր պաստորի, քարոզչի և «եղբայրների» հետ: Իսկ սրանցից և ոչ մեկը նրա ընտանյաց մասին նրա հետ ոչինչ չէր խոսում: Ինքը ոսկերիչը համոզված էր, որ նրանք թեպետ այսօր զայրացած և դուրս գնացած են, սակայն վաղը անշուշտ կդառնան իրանց տունը: Այդ հույսով նա մի քանի վաղիվներ անցկացրավ առանց յուր ընտանյաց դարձը տեսնելու: Այսուամենայնիվ դեռ հույսը չէր կտրում, որպեսզի անմիջական միջոցներ գործ դներ նրանց ետ դարձնելու համար: Մի կողմից էլ նա այսպես ավելի հանգիստ էր գտնում իրան, մանավանդ երբ «եղբայրներ» ժողովվում էին յուր մոտ: «Գոնե հանգամանքի բերումից օգուտ քաղեմ, քանի ժամանակ ունիմ, ասում էր նա, գիտեմ, որ վերջիվերջո գլխիս պետք է թափվին»:

Բայց այստեղ հիվանդների դրությունը օրեցօր ծանրանում էր, ութ օրից ետ վերջապես մահտեսի Հարությունը խորհուրդ տվավ վարպետ Սարգսին ռուսի դոկտորը բերել հիվանդներին նայելու:

– Ուրեմն դու քո բժշկության բոլոր պաշարը սպառեցի՞ր, – հարցրավ մահտեսուն վարպետ Սարգիսը:

– Ինչ որ գիտեի գործ դրի, բայց ի՞նչ անեմ, որ լավանալու նշույլ չէ երևում:

– Ինչո՞ւ առաջ չէիր ասում այդ:

– Առաջ երեքի հիվանդություններն էլ ինձ ծանոթ էին երևում, և ես հույս ունեի, թե կառողջացնեմ, բայց այժմ տեսնում եմ, որ մինակ ինձմով բան չէ դառնալու:

Վարպետ Սարգիսը բարկությամբ գլուխը շարժելով դուրս գնաց և Աշոտին ղրկեց դոկտորի ետևից:

Մի ժամից ետ դոկտորը եկավ՝ մի բարձրահասակ և ազնվադեմ մարդ: Նա քաղաքավարությամբ առաջ մոտեցավ Մարիամին, հարցրավ հիվանդության որպիսությունը վարպետ Սարգսից և մահտեսի Հարությունից, որովհետև հիվանդի մեջ խոսելու կարողություն չկար, հետո բռնեց զարկերակը, երկար քննեց կուրծքը, և ապա բարձրանալով թեթև շարժեց գլուխը և անցավ դեպի Մանիշակը: Նույն քննությունը կատարեց և օրիորդի վերա: Հետզհետե բժշկի դեմքը մռայլվում էր, նրա ժպտող երեսը այժմ արտահայտում էր զայրույթ և բարկություն: «Շատ ուշ է, իմ պարոններ, շատ ուշ է», քրթմնջում էր նա: Վերջապես նա մոտեցավ երեխային, քննեց նրա պարանոցի ուռուցքը և տեսնելով հերյունի պատռվածքը երեխայի պարանոցի վերա՝ մի դառն ժպիտ անցավ շրթունքների վերա:

– Ո՞վ է հերյունով արյուն հանել երեխայի ուռուցքից, – հարցրավ նա ներկա եղողներից: Նրանք ցույց տվին մահտեսի Հարությունին:

Բժիշկը կանգնեց և մի բարկացկոտ հայացք ձգելով նրա վրա հարցրավ.

– Երեք հիվանդներին էլ դո՞ւ էիր բժշկում:

– Այո, – երկյուղով պատասխանեց մահտեսին:

– Քանի օր է, որ հանձն ես առել հիվանդների բժշկությունը:

– Երկու, – պատասխանեց նա:

– Ո՛չ, ութերորդ օրն է այս, – մեջ մտավ Աշոտը, – մահտեսին չէ կամենում ճշմարիտը խոսել:

– Պարոն, – բարկությամբ դարձավ բժիշկը դեպի մահտեսին, – դու հիշում ես, որ մենք մի անգամ էլ հանդիպեցինք միմյանց հետ, և ես քեզ հրամայեցի չհանդգնել այսուհետև

բժշկություններ անել, իսկ դու մոռացե՞լ ես իմ խոսքերը, լա՞վ, ես այժմ քեզ հետ ուրիշ կերպ կվարվիմ:

Մահտեսի Հարությունը գունաթափվեցավ, իսկ դոկտորը վերարկուն առնելով բարկացած և անխոս դուրս գնաց:

Վարպետ Սարգիսը, Խաթունը և Աշոտը վազեցին նրա ետևից և առաջը առնելով՝ խնդրում էին, որ, եթե չէ կամենում դեղատոմս գրել գոնե հայտնե նրանց, թե հիվանդները կառողջանան, թե ոչ:

– Երեքին էլ վաղը կթաղեք, – դառնությամբ պատասխանեց բժիշկը և դուրս գնաց բակից:

Խաթունը և վարպետ Սարգիսը մնացին արձանացած և ակնապիշ նայում էին միմյանց, իսկ Աշոտը սկսավ թուլանալ և ընկավ դռան քարի վրա: Ծնողները և հարսները մեծ ջանք դրին, մինչև որ նրան ուշքի բերին: Այսուամենայնիվ նա դեռ թմրած նստել էր քարի վերա և երկար չէր շարժվում այն տեղից: Նա անզգա էր թե՛ ծնողաց և թե՛ յուր հարսների աղաչանքը, նա ոչինչ չէր լսում: Բայց մի քանի վայրկյանից հանկարծ նա տեղից վեր թռավ, հափշտակեց գետնի վրա ընկած վանդակի ձողը և խելագարի պես վազեց տուն.

– Ո՞ւր է այն անզգամը, – կատաղությամբ գոչում էր նա, – նա սպանեց այս խեղճերին, ես էլ նրան պետք է սպանեմ:

Նա որոնում էր մահտեսի Հարությունին, բայց նա վաղուց փախուստ էր տվել նրանց աչքերից:

Ը

Դեկտեմբերի ձմեռային առավոտ էր: Քաղաքի արևելյան հորիզոնը ամփոփող լերանց ետևից դեռ նոր ծագել էր արեգակը և բարձրանում էր անամպ և վճիտ երկնակամարի վերա: Սրա ջերմությունից զուրկ ճառագայթների առաջ շողշողում էին տների սրածայր ձյունապատ տանիքները: Բոլոր քաղաքը արդեն յուր սովորական շարժողության մեջ էր:

Այս միջոցին արհեստավորների թաղում վարպետ Սարգսի տունը ներկայացնում էր մի անսովոր կերպարանք: Նրա բակի և տան մեջ խոնված էր խառնիճաղանճ ամբոխ: Այստեղ, այնտեղ երևում էին խաչվառներ, մոմեր, աշտանակներ, որոնք մի տեղից մյուս տեղն էին փոխադրում, լսվում էին բուրվառների շաչյուն, քահանաների հաստ և համոզկեր ձայներ, իսկ սենյակների ներսից ողբ և լաց…

Բայց ի՞նչ է պատահել այստեղ: Մեր երեք հիվանդները նույն գիշերը ավանդել էին իրանց հոգիները մեկը մյուսից մի քանի ժամ հետո: Սարսափելի դժբախտության լուրը մի րոպեում տարածվել էր ամբողջ թաղի մեջ և ժողովել այստեղ ահագին բազմություն: Թե՛ դրացի, թե՛ բարեկամ և թե՛ օտար սարսափով էին լսում հասած դժբախտության մանրամասնությունները և ամենքը այս մի առանձին երկնային պատիժ էին համարում իրանց խրատելու համար աստծուց տրված:

– Մարդիկ մեռնում են, – ասում էին նրանք, – բայց այսպիսի թշվառություն մինչև այսօր տեսած չունեինք: Մայր, աղջիկ և տղա երեքը միասին միևնույն գիշերի մեջ մեռած, ո՞վ է տեսել կամ ո՞վ է լսել… ի՞հարկե սա մի երկնային պատիժ է:

– Ընդհակառա՛կը, մի երկնային բարություն, – պատասխանում էր մի քանիսին վարպետ Սարգիսը, – որովհետև այսպիսով աստված կամեցել է միանգամից ազատել հանգուցյալներին այն անողորմ լութերականի ձեռքից: – Նա խոսում էր ոսկերիչ Գրիգորի մասին, որը մինչև անգամ ոչինչ չգիտեր դեռ յուր ընտանյաց հասած դժբախտության մասին: Նախընթաց գիշերը ոսկերիչը անցրել էր քարոզիչ Ավետիքի տանը և դեռ առավոտը տուն չէր վերադարձել: Իսկ քարոզիչը որովհետև վաղ առավոտ շուկա էր եկել պաշարեղեն գնելու համար, այդտեղ նա լսել էր ոսկերիչի կնոջ և որդկերանց մահը: Այդ լուրը նրա վրա շատ վատ ազդեց: Բայց սառնությամբ և հեռատեսությամբ գործելն յուր սովորություն արած լինելով՝ նա չայլայլվեցավ, այլ իսկույն ևեթ «եղբայրներից» մի քանիսին ղրկեց տուն, Որ Գրիգորին զբաղեցնեն մինչև յուր տուն դառնալը: Հետո մի քանի հոգու համար գնած իրեղենների վերա դարձյալ պաշար ավելացնելով՝ հանձնեց ծառային և պատվիրեց տասն և երկու հյուրերի համար ճաշի պատրաստություն տեսնել: Այս ամենից ետ ինքը շտապեց պաստորին և մյուս «եղբայրներից» մի քանիսին տեսնելու: Մի ժամից ետ նա վերադարձավ ութ հոգի էլ յուր հետ ունենալով: Նա ոսկերիչին հայտնեց, որ այսօր մտադիր է մի փոքր խնջույք սարքել, որովհետև յուր քարոզիչ նշանակելու տասներորդ տարին հենց այդ օրը լրանում է:

– Իսկ վաղը, – ավելացնում էր նա, – քեզ հետ միասին շատ առավոտ պիտի ճանապարհվինք Ծառաձագ գյուղը մեր հոտին վերաբերյալ մի քանի գործերի համար:

Ոսկերիչը գովեց նրա մտադրությունը և պատրաստակամություն հայտնեց յուր կողմից նրան հետևելու:

Քարոզչի անգութ մտադրությունը հետևյալն էր: Նա կամենում էր այդ հնարներով նույն օրը ոսկերիչին զբաղեցնել, այնպես որ նա չկարողանար դուրս գալ և կնոջ ու որդկերանց մահը լսել, իսկ յուր տունը նա համոզված էր, ոսկերիչին փնտրելու համար եկող չէր լինի, հետո վաղ առավոտյան նա պաստորի խորհրդով, ոսկերիչին առած կերթար Ծառաձագ, որ քաղաքից 60 փարսաղ հեռավորություն ուներ: Նա այդտեղ զանազան պատրվակներով ոսկերիչին պիտի ուշացներ մի ամիս, իսկ այդ միջոցում պիտի նախապատրաստեր նրան յուր ընտանյացը հասած դժբախտության գույժը հենց այդ գյուղում առնելու, ըստ որում պաստորի ասելով եթե նույն օրը հայտներ նրան այդ բանը՝ «տիրոջ» հոտի համար կարող էին վնասակար անպատեհություններ տեղի ունենալ:

Բայց պաստորից և քարոզչից նախատեսված հաշիվները «եղբայրներից» մի քանիսը խանգարեցին: Քարոզչի տուն հասնելուց մի քանի ժամ հետո ոսկերիչը պատահմամբ կամեցավ դուրս, գնալ պատշգամբ: Նա դեռ ոտքը պատշգամբը հանող դռանը չէր կոխել, երբ պատշգամբում մի գաղտնի խոսակցության շշուկ զարկավ յուր ականջին: Նա իբր կատակ հետաքրքրվեցավ լռել, ուստի անշարժ յուր տեղը կանգնելով, ականջը ուղղեց դեպի շշնջող կողմը և որոշակի լսեց հետեւյալը.

– Ճշմարի՞տ, որ երեքն էլ վախճանվել են, – հարցնում էր «եղբայրներից» մեկը:

– Այո , թե՛ կինը, թե՛ աղջիկը և թե՛ որդին:

– Երեքն էլ ա՞յս գիշեր, – զարմացմամբ հարցնում էր մի երրորդը:

– Այո, երեքն էլ այս գիշեր:

– Իսկ եղբայր Գրիգորը ոչինչ չգիտե՞:

– Ոչ, նա այս գիշեր այստեղ է անցրել…

Ոսկերիչը այլևս չկարողացավ լսել, նրա գլուխը պտտվեցավ, աչքերը սկսան մթագնել, նա գոչելով դուրս գնաց պատշգամբը,

– Ո՞ւմ համար եք խոսում, այդ ի՞նչ է պատահել, ո՞վ է մեռածը, ինչու՞ ինձանից ծածկում եք, կի՞նս, որդի՞ս…

Նա դողալով և գունաթափ հետզհետե հարցեր էր անում նրանց: Բայց «եղբայրները» հանկարծակի գալով ոչինչ չէին կարողանում պատասխանել նրան, այլ շվարած նայում էին:

Ոսկերիչը գժվածի պես մտավ տուն, նա պատահեց քարոզչին յուր ընդունարանում:

– Այս ի՞նչ են խոսում, Ավետի՛ք, – գոչեց նա դեպի քարոզիչը, ո՞ւր է կինս, ո՞ւր են որդիներս, նրանք մեռել են… տա՛ր ինձ նրանց մոտ, տար ինձ… Դուք ինձ քնացրիք, դուք ինձ ամեն բան մոռացնել տվիք, տա՛ր, ասում եմ, ինձ նրանց մոտ…

Այս ասելով նա բռնի քաշեց քարոզչի թևից և առաջ ձգեց:

– Ի՞նչ ես անում, այ մարդ, սպասիր, ես ոչինչ չգիտեմ, ո՞վ է մեռել…

– Ո՞վ է մեռել, կատաղությամբ գոչեց ոսկերիչը, կինս, որդիքս ասում եմ քեզ… Արի՛, արի՛, տար ինձ նրանց մոտ, ես միայնակ չեմ կարող գնալ…

Ոսկերիչի և քարոզչի ձայների վերա ներս թափվեցան «եղբայրները» և տեսնելով թշվառ մարդու մինչև կատաղության հասած այլայլմունքը՝ խորհուրդ տվին քարոզչին ընկերանալ նրան գեթ մինչև յուր տունը:

Քարոզիչը երկյուղից դողում էր, սակայն հարկ էր տված խորհուրդը ընդունել: Նա և ոսկերիչը դուրս գնացին: Վերջինս պինդ բռնած էր քարոզչի թևից և արագությամբ և հատկյալ շնչով առաջ էր գնում, միշտ ետևից քարշ տալով ընկերոջ:

Ճանապարհը շատ երկար չէր: Նրանք մտան թե չէ այն փողոցը, որի ծայրում շինված էին ոսկերիչի և յուր դրացի վարպետ Սարգսի տները, և ահա լսվեցան հոգևոր երգեցողության ձայները:

– Կանգնի՛ր այստեղ, – հրամայական ձայնով դարձավ ոսկերիչը դեպի քարոզիչը. և նրա թևից քաշելով յուր հետ կանգնեցրավ մի ցանկապատի տակ:

Երգեցողության ձայները հետզհետե մոտենում էին: Վերջապես փողոցի անկյունից երևացան մոմերը և խաչվառները, ետո երգեցող մանկտին, քահանաները և վերջը խուռն բազմությունը արհեստավորների և մանր վաճառականների, որոնք կրում էին երեք թշվառների դագաղները: Ոսկերիչը այդ ամենը տեսնելուց լայն բացած աչքերով, որոնց մեջ հանկարծահաս թշվառության գույժը ցամաքացրել էր արտասվաց աղբյուրները, անզգայաբար առաջ գնաց դեպի դագաղները: Բայց այստեղ նշմարելով յուր մյուս փոքրիկ որդիներին, որոնք կողկողագին լալիս էին մեկը մոր և մյուսը քրոջ դագաղներից գրկած, իսկույն սոսկալով և սարսափած ետ դարձավ դեպի քարոզիչը և գոչեց.

– Նրանք են, կինս և երեխաներս, դու և ես՝ երկուսս միասին սպանեցինք նրանց…

Այս ասելով նա կանգնեցավ յուր առաջի տեղը, վերցրավ գդակը, նույնը անել տվավ և քարոզչին և սպասում էր հուղարկավորության անցնելուն: Երբ հանդեսը մոտեցավ, նա կրկին խելագարի նման վազեց դեպի դագաղները.

– Այդ ո՞ւր եք տանում իմ կինը և որդիները… թողեք, որ խոսեմ նրանց հետ…:

Այս ասելով նա կամենում էր ընկնել դագաղների վերա, բայց նրան արգելեցին:

– Հեռու, հեռու այստեղից, թշվառական, – սպառնալից դեմքով դարձավ դեպի նա քահանաներից մինը, – այդ անիծյալ ձայնովդ այժմ է՞լ սրանց մահվան հանգստությունն ես կամենում վրդովել:

Ոսկերիչը սրտաբեկ և գունաթափ ետ դարձավ և ցանկապատին հենվելով մրմնջում էր.

– Այո՛, ես անիծյալ եմ… տեր – հայրը իրավունք ունի… ես անիծյալ եմ…

Այս տեսարանը շատ մորմոքիչ ազդեցություն արավ ժողովրդի վերա, նրանցից շատերը խղճահարվում էին ոսկերիչի թշվառ դրության վերա: Բայց կային երիտասարդներ, որոնք չկարողացան ճանաչել նրա հոգու վշտահար դրությունը և կարծեցին թե նա կամենում էր բռնի յուր ննջեցյալները խլել իրանց ձեռքից, ուստի՝ «Մենք դառնալուց քեզ ցույց կտանք, անզգամ», կամացուկ սպառնում էին նրանք՝ առանց այն էլ հարվածի սաստկության տակ կործանված թշվառականին:

Բայց ոսկերիչը լուռ և անզգա էր յուր դեմ ուղղված բոլոր հայացքներին ու սպառնալիքներին: Նա այնքան սպասեց այնտեղ, մինչև որ հուղարկավորությունը անցավ և հետո ապուշ – ապուշ հարցրավ քարոզչին:

– Այս ննջեցյալները ճանաչեցիր դո՞ւ:

– Ճանաչեցի, – ցած ձայնով պատասխանեց նրան քարոզիչը:

– Նրանք իմ կինը, աղջիկս ու որդիքս են, գիտե՞ս:

– Գիտեմ:

– Լավ ուրեմն, տար այժմ ինձ իմ տունը:

Քարոզիչը հնազանդվեցավ: Երբ նրանք հասան տուն, ոսկերիչը դարձավ քարոզչին:

– Այժմ դու կարող ես գնալ:

– Իսկ դո՞ւ, – հարցրավ քարոզիչը:

– Ես պետք է մնամ իմ տանը:

– Իսկ եղբայրների մոտ ե՞րբ կգաս…

«Եղբայրներ» բառը ցնցեց ոսկերիչին ամբողջ մարմնով, նա կատաղությամբ հարձակվեցավ քարոզչի վերա.

– Դու դեռ համարձակվում ես ինձ մոտ այդ անիծյալ անունը կրկնելու, – այս ասելով նա երկու ձեռքով բռնեց քարոզչի մազերից և ուժգին զարկավ մոտ եղող պատին:

Քարոզիչը մի ճիչ արձակեց և գլորվեցավ գետին:

– Այդ դեռ շատ փոքր է, – կատաղությամբ գոչեց ոսկերիչը և վազեց վերցնելու բակի մեջ ընկած որձաքարի բեկորը: Բայց քարոզիչը մի ակնթարթում բարձրացավ ընկած տեղից և բակի ցանկապատի վրայով թռավ փողոց: Ոսկերիչը ետ դարձավ, բայց նրա փախչելու ոտնաձայնը միայն լսեց,

– Ես ուրեմն սատանաների հետ գործ ունեի մինչև այժմ, – ասաց նա և քարը ձգեց գետին: Հետո մի փոքր լռելով շարունակեց ձողացող ձայնով: – Բայց ո՞վ է մեղավորը, ի՞հարկե ես, միմիայն ես, անզգամս: Ի՞նչ ունեի ես այդ դևերի հետ, այդ անգութ, այդ անսիրտ խաբեբաների հետ, ինչու շուտով չճանաչեցի նորանց, ինչո՞ւ խելքս կորցրի, ինչո՞ւ իմ ընտանիքը մոռացա… իմ կինը, իմ զավակները… Հա՛, հու քեզ համար նոր հավա՞տ էիր որոնում, թշվառական, – շարունակում էր նա ինքն իրեն խոսելով, – դու որ մի խեղճ արհեստավոր էիր և իսկապես չգիտեիր, թե որոնք են քո հավատի պակասությունները և որոնք էին ուրիշների առավելությունները: Քո պապերի հավատով դու քեզ բավական երջանիկ չէի՞ր զգում, նորանով քո ընտանիքը բավական բախտավոր չէր. թե՞ կամենում էիր հանկարծ արքայություն մտնել… գնա այժմ, անմիտ, գնա և տես, ո՞ր դժոխքը սորանից ավելի սարսափելի է, ո՞ր դժոխքը սորանից ավելի խիստ հարվածներ կարող էր տալ քեզ…

Այս ասելով նա անխնա հարվածում էր յուր գլուխը: Հետո երերալով նստավ դռան քարի վերա և ընկավ մտածողության մեջ: Երբեմն նա խորը հառաչում էր և յուր լայն բացված ռնգունքներից, ինչպես ծուխ դուրս էր փչում յուր ներսում կրակվող շունչը, երբեմն

նա ցնցում էր գլուխը և կատաղաբար շարժում օդի մեջ յուր բռունցքները կարծես յուր առաջ մենամարտողների բանակ ուներ կանգնած, և երբեմն հուսահատ և սրտաբեկ գլուխը խոնարհում էր կուրծքի վերա և այնպես մնում երկար ժամանակ: Վերջապես նա նորեն սկսավ ինքնիրեն շշնջալ.

«Բայց մի՞թե ես մեղավոր եմ. մի՞թե ես գիտությամբ արի այդ ամենը, երբեք: Ես մինչև այժմ էլ չգիտեմ, թե ինչպես եղավ, որ այդ խաբեբաների որոգայթի մեջ բռնվեցա, չգիտեմ ինչպե՞ս եղավ, որ իմ Մարիամին, իմ երեխաներին մոռացա, այո, ես ոչինչ չգիտեմ, այդ ամենը ինձ համար բոլորովին անհասկանալի ձևով կատարվեցան, այո, անհասկանալի, ես ոչինչ չիմացա, ես ոչինչ չզգացի, այդ դևերը ինձ կախարդեցին, այո, ես մեղավոր չեմ…»: Այս ասելով նա լռեց մի փոքր ժամանակ և հետո նորեն սկսավ.

«Բայց ինչպե՞ս թե մեղավոր չեմ, ես չէի որ երբ առաջին անգամ կամենում էի գնալ այն խաբեբա Կարոյի տունը և Մարիամը եկավ ինձ արգելելու, նա բռնեց իմ ձեռքից, նա խնդրում, աղաչում և արտասվում էր, որ ես նրա մոտ գայի, բայց ես, ոհ, ես՝ անզգամս վայրենությամբ մի կողմ բերեցի նրան և դուրս փախա… Ես չէի՞, որ չորս տարի շարունակ տանջեցի նորան արգելելով կատարել յուր հավատո վերաբերյալ պարտավորությունները և վերջապես ես չէի, որ սպանեցի նորան և նորա հետ էլ իմ երկու զավակներին…»:

Այսպես խոսելով նա վեր թռավ նստած տեղից և շարունակեց հուսահատ կատաղությամբ.

«Ո՛չ, ո՛չ, ապրել այսուհետև անկարելի է, և ո՞ւմ համար պիտի ապրեմ. Մարիամը մեռավ և տարավ յուր հետ աղջիկս և որդիս. մնում են երկու փոքրիկներս. թող նոքա էլ թշվառանան… իմ բարեպաշտ հայրը անշուշտ իր գերեզմանում անիծեց ինձ իմ անիրավությանց համար, ուրեմն իմ անունը պիտի ջնջվի. իմ տունը հիմնովին պիտի կործանվի, որպեսզի իմ պատիժը կատարյալ լինի… այո՛, ես արժանի չեմ աստծո արեւը տեսնելու, նորա օդը շնչելու… և ես փոխանակ քարոզչի գլուխը պատին զարկելու, ինչու՞ իմը չեմ զարկում»:

Այս ասելով նա կատաղաբար առաջացավ դեպի դուռը և ձախ երեսով սաստիկ խփվեցավ տան պատին, նրա դեմքը ընդհարվելով քարի հետ պատռվեցավ և քթից սկսավ հոսել հորդ արյուն: «Ոչ, այսպես չի կարելի շուտ մեռնել, այնպես շուտ՝ որ իմ կնոջը և երեխաներին հասնեմ, ես գիտեմ, թե ինչպե՞ս պետք է մեռնել…»: Նա ներս մտավ տուն: Առաջին անգամ նրա աչքին զարկավ նախագավթի մեջ կշեռքի համար կախված չվանը:

«Ահա, – գոչեց նա խելագարվածի պես, – ահա մեռնելու հարմար միջոցը»: Եվ առանց ուշանալու բարձրացավ գավթի անկյունում դրված սնդուկի վերա, քաշեց յուր մոտ առաստաղից կախված չվանը և նրա վերա կրկնածալ հանգույց շինելով՝ անցրավ պարանոցը, «Այժմ ես ձեզ հետ եմ, սիրելիներս»:

Նա թափ տվավ ոտքերին և շրջվելով կախվեցավ օդի մեջ… Երկու անզոր ցնցումներից ետ լրթագույնը պատեց նրա երեսը, բերանից և ռունգերից սկսավ ժայթքիլ խեղդվող արյունը, և մի խուլ հոնդյունից ետ… նա հոգին փչեց…

Հուղարկավորության ժամանակ ոսկերիչին սպառնացող երիտասարդները տուն դառնալով բոլորը միասին վճռեցին գնալ նրա մոտ և երեք զոհերի վրեժը հանել նրանից…

Բայց նրանց զայրույթը փոխվեցավ սարսափի, երբ նրան կախված գտան նախագավթի մեջ:

Հայ անհիշաչար հոգևորականությունը առավ բողոքականության չորրորդ և ավելի թշվառ զոհի մարմինը և ամփոփեց յուր ընտանյաց հանգստարանում…

Իսկ մեծապատիվ պաստորը շատ անտարբերությամբ լսեց այդ բոլոր թշվառության պատմությունը և միայն վերջումը բարեհաճեց ասել, որ «ոսկերիչը հիմարություն է արել իրան խեղդելով»:

Ոսկերիչի երկու որդիներին յուր հովանավորության տակ առավ վարպետ Սարգիսը, իսկ նրա ունեցած երեք հազար ռուբլին, որը պաստորի ձեռքով գրկված էր մայրաքաղաքի բանկը շահեցնելու, մինչև այսօր էլ չիմացվեցավ, թե աստծո ո՞ր պաշտոնյայի գրպանը մտավ…

ԻՄ ԿԱԹՈԼԻԿ ՀԱՐՍՆԱՑՈՒՆ

ԾՈՎԻ ՎԵՐԱ

1876 թվականն էր. մայիսյան մի հովաշունչ երեկո: Մեր շոգենավը հանդարտ սլանում էր Կասպից ծովի խաղաղ ալիքների վերա: Բնությունը շրջապատում էր մեզ յուր հրաշալիքներով: Նավի ձախ կողմից երևում էին մերթ կանաչազարդ բլրակներ՝ եզերված փոքրիկ գետակներով, մերթ ընդարձակ դաշտեր՝ որոնց ծանրաբեռնում էին հասկափունջ արտորաները, մերթ լայնանիստ հովիտներ, ուր զեղում և արածում էին ոչխարի բազմաթիվ հոտերը խառը տավարի նախրի հետ և հաճախ՝ մանր ու խոշոր լեռանց ապառվածները՝ ծառազարդ ստորոտներով, որոնք անընդհատ մեկը մյուսի ետևից վազում անհետանում էին մեր աչքերից: Սրանցից ավելի հեռու նշմարվում էին Կովկասի շղթայաշար լեռները՝ իրենց կոհակավետ գագաթներով՝ որոնք դեռևս ծածկված էին ձյունի սպիտակ սավանով: Իսկ աջ կողմից տարածվում էր ծովը յուր անսահման ալիքներով, որոնք հեզիկ հովի առաջ անընդհատ ծփծփում և տատանվում էին հազիվ լսելի ճողփյուններով: Արեգակը պատրաստում էր արդեն յուր հրեղեն գունդը հեռավոր լեռները ետքում ծածկելու և նրա վերջին ճառագայթները՝ անգոր այլևս մարդկանց աչքերը խտտղելու ոսկեգօծում էին միայն ծովի դալարագեղ ափերը և մեր նավի տախտակամածը, ուր անընդհատ վազվզում և անցուդարձ էին անում նավաստիները և ճանապարհորդները:

Այդ ժամանակ ես կանգնած էի նավի ետևում, ուր սովորաբար ծածանում է եռագույն դրոշակը, և երեսս դեպի նավի ցռուկը դարձրած զմայլմամբ դիտում էի Կասպյան ծովակի գեղազվարճ ափերը: Մի սրբազան հափշտակություն տիրել էր իմ հոգվույն. նավը սլանում էր, և ես հետզհետե խորասուզվում էի հեռու հեռու հնադարյան անցյալի մեջ, երբ մարդկային կյանքը դեռ այս քան կերպարանափոխված չէր, երբ լուսավորությունը դեռ չէր հղացել յուր հրաշալիքները և ծովի ալիքների մեջ դեռ չէր վառվում Հեփեստոս հնոցը, որը այսօր յուր հսկայական և սոսկալի ուժով հաղթահարում է ծովի կատաղությունը և տիրում Պոսիդոնի ժառանգական թագավորությանը… Ես հոգվով սլանում էի դեպի այն երանելի ժամանակները երբ մեր առաջ տարածվող այս կուսական ափանց վերա ապրում էր մի նահապետական ժողովուրդ, ասպետական սրտի տեր, բռնության անսովոր և աշխատության սիրահար, մի ժողովուրդ, որ չէր ճանաչում թշվառությունը և չէր ստեղծում նրան, որովհետև շատանում էր յուր պարզ և անպաճույճ կյանքով… նրա տղամարդիկ հերկագործում էին իրենց դաշտերը և սևաչյա կանայք դալարագեղ հովիտների մեջ իրենց խաշներն էին արածացնում, նրա քաջ երիտասարդներ ուրախ և անհոգ որսում էին լեռների վերա, և գեղանի աղջկունք՝ գետափանց մոտ դեգերելով՝ երգում էին նրանց: Հին լեռնականների երկիրը և՛ խաղաղ, և՛ գեղեցիկ էր… բայց լուսավորությունը ո՞ր բնական գեղեցկությունը չէ աղավաղել, երբ նա բնության այդ ստեղծագործության ձգտել է տիրապետել: Այսօր այստեղ սովորում են խոսել ապագայի վերա և դողդողալով հոգում էին վաղվան համար… Սեփականությունը վտանգվում է, խաղաղանիստ գյուղի խրճիթները էլ չեն ապահովում բնակիչների կյանքը և անցյալին ծանոթ ծերունիները սկսում են հառաչել…

Տակավին այս մտածմունքների մեջ էի, երբ մեր շոգենավը մի հանկարծական պտույտ արավ և բոլոր գեղեցիկ տեսարանները անհետացան իմ աչքից: Կանաչազարդ ափերի փոխարեն իմ առաջև բացվեցավ ծովի լայնատարած մակերևույթը յուր գեղածուփ կոհակներով: Մի րոպե ես այնպես կարծեցի, թե մինչև այն իմ տեսածները երազ էին: Բայց հենց որ երեսս դարձրի, ահա իմ առաջև նկարվեցան դարձյալ նույն գեղեցիկ տեսարանները և նրանց հետ միասին մի բարձրադիր բլրակի ստորոտում փոքրիկ ծովեզերյա քաղաքը յուր ձյունի պես սպիտակ տներով, որոնք արագ արագ մոտենում էին դեպի մեզ:

Հինգ րոպեից ետ նավը ծանրաքայլ մտավ նավահանգիստը: Ահագին խարիսխը, որ մինչև այն կախված էր շոգենավի ծայրից, մեծ դղրդյունով իջավ ծովը, ահաբեկելով նրա. համր բնակիչներին: Սրան հետևեց շոգեմեքենայի սուր հնչյունը, և նավի ամեն խորշերից դուրս թափվեցան ճանապարհորդները: Սկսավ մեծ շարժումն: Նավաստիներից ոմանք, անընդհատ վազվզում էին աջ ու ձախ. ուրիշները կապկի նման մագլցելով սուրում էին պարանների վերա և ուղղաձիգ կայմի ծայրը բարձրանալով՝ պրկում կամ թուլացնում էին նրանց, մի քանիսը տախտակամածի բարձրավանդակը թոչելով իջեցնում էին ծովի մեջ փոքրիկ նավակները, և մի ուրիշ խումբ զբաղված էր ճանապարհորդների իրեղենները զատելով և բաժանելով:

Մի քանի րոպեի մեջ շոգենավը շրջապատեցին բազմաթիվ նավակներ, գույնզգույն խելերով և թիակներով: Երկաթե սանդուղքները, որոնք մինչև այն ամրացած էին նավի կողերի վերա, ճռնչալով դեպի ծովը կախվեցան: Ճանապարհորդները իրենց իրեղենները վերցրած շտապում էին միմյանց ետևից նավակների մեջ մտնելու: Իսկ ես դեռ կանգնած նավի ելքի մոտ անխոս և անշարժ դիտում էի այդ մարդկանց շարժումները: Նրանք նմանում էին շատ տարիներով բանտի մեջ փակված գերիների, որոնց մի գթասեր իշխանի ձեռքը վերջապես ազատություն է տալիս:

Բ
ՊԱՏԵՐ ՍԻՄՈՆԸ

Մի քանի րոպե չանցած արդեն ամեն ոք նավակ էր վարձել քաղաք դուրս գալու համար, բայց ես շվարած չգիտեի ինչ պետք էր անել: Ես առաջին անգամն էի ծովով ճանապարհորդում և մանավանդ անծանոթ էի այս քաղաքին, չնայելով որ յոթ տարիներից ի վեր բնակվում էր այստեղ իմ քույրը, որին ես առաջի անգամ գնում էի այցելության:

– Դուք չե՞ք կամենում քաղաք դուրս գնալ, – հնչեց ետևիցս մի հաստ և խռպոտ ձայն: Ես իսկույն հետ դարձա և տեսնում եմ երկար լոդիկով, լայն շրջանավոր գլխարկով և սափրված ընչացքով ու ծնոտով մի հաղթանդամ և բարձրահասակ մարդ, որ յուր պայուսակը և մի քանի փոքրիկ կապոցներ ձեռքն առած, պատրաստվում էր երկաթե սանդուղքից դեպի սպասող նավակը իջնելու: Ես փոխանակ պատասխանելու սկսա հետաքրքրությամբ նայել նրա տարօրինակ հագուստի և դեմքի վերա: Առաջինը նմանում էր մեր քահանաների հագուստին, բայց նրա դեմքը բոլորովին հակապատկերն էր ներկայացնում:

– Դուք չե՞ք պատասխանում, – կրկին հարցրեց տարօրինակ դեմքով և հագուստով մարդը:

– Ինչպես չէ, պետք է դուրս գնամ, – պատասխանեցի ես:

– Ուրեմն շտապենք, միայն մի նավակ է մնացել, – հարեց նա և առաջ անցավ:

Ես հետևեցի նրան և երկուսս միասին իջանք նավակը:

– Ամենից առաջ ես կամենում եմ ձեզ հետ ծանոթանալ, կշնորհե՞ք ինձ ձեր անունը, – հարցրեց անծանոթը, երբ մենք մեր իրեղենները տեղավորելով նստանք նավակի մեջ:

– Արամ Բյուրատյան, – պատասխանեցի ես և սպասում էի, որ ինքն էլ յուր անունը հայտներ, բայց նա բոլորովին ուրիշ կերպ սկսավ յուր խոսակցությունը:

– Շատ լավ, շնորհակալ եմ. ուրեմն Արամ Բյուրատյան, կաշխատեմ չմոռանալ: Բայց գիտե՞ք ինչ ցավալի բան պատահեց շոգենավում:

– Ոչինչ չգիտեմ, – պատասխանեցի ես և սկսա հետաքրքրությամբ լսել նրան:

– Զարմանալի բան պատահեց:

Ես փոքր ուշացա այնտեղ, և կարծում էի, թե այլևս նավակ չեմ գտնիլ քաղաք դուրս գալու համար և կամ միայնակ մնալով թանկ կվճարեի նավակին. բայց ինչպես երևվում է սուրբ Տիրամոր աչքը քաղցր է յուր ծառայի վերա նա ձեզ նման մի բարի երիտասարդին ընկեր տվավ ինձ:

Ես տեսա որ իմ անծանոթը բնական դրության մեջ չէր, բայց ցանկանալով մի բանով վարձատրել նրա հաճոյախոսությունը մեքենայաբար հարցրի.

– Ինչո՞ւ համար էիք ուշացել շոգենավում:

– Օ՛, դրա պատմությունը խիստ հետաքրքիր է. ես իսկույն կասեմ ձեզ: նավապետը առանձին ճաշ էր պատրաստել յուր սենյակում և ինձ հրավիրել էր: Մենք շատ լավ ճաշեցինք, պետք է խոստովանել, և շատ երկար նստանք սեղանի շուրջը: Երևակայեցեք. ժամը մեկից սկսած մինչև այժմ մենք խմում էինք, և գիտե՞ք որքան շատ խմեցինք… Օ՛, երևակայել չեք կարող: Շա՛տ պատվական մարդ է նավապետը, դուք ծանո՞թ եք նրա հետ:

– Ո՛չ, – պատասխանեցի ես:

– Ափսո՛ս, շատ ցավում եմ, պետք է որ ծանոթանայիք. նա շատ պատվական մարդ է և զարմանալի հյուրասեր: Գիտե՞ք. նա յուր մառանի ամենալավ գինին էր հանել ինձ համար, և ի՞նչ գինի, կարո՞ղ եք միթե երևակայել: Ես նրան ասում եմ, Իվան Պավլովիչ, շատ մի խմացնիր ինձ, ես կարող եմ հարբել և նավակից գլորվիլ ծովի մեջ, բայց նա այս խոսքի վերա ծիծաղից թուլանում է և անդադար նեկտարը լցնում է բաժակիս մեջ: Իհարկե, նա գիտեր, որ ես հարբողը չեմ, բայց ինչ որ էլ որ լինի, հոգևորականը մի քիչ չափավոր պետք է լինի արբեցության մեջ, այնպես չէ՞:

Վերջին խոսքերը, որ նա շատ ցած և խորհրդավոր ձայնով արտասանեց, ինձ զարմացրին:

– Ինչպե՞ս. մի թե դուք հոգևորական եք, – շտապով հարցրի ես:

– Իհարկե, մի՞թե դուք չգիտեիք: Ես քահանա եմ, և ինձ անվանում են պատեր – Սիմոն:

– Քահանա՞… – զարմացմամբ հարցրի ես և աչքերս սևեռեցի նրա դեմքին:

– Իհարկե քահանա, միթ՞ե չեք տեսնում, հա՛, հա՛, հա… և սկսավ նա այնպես բարձր ձայնով ծիծաղել, որ նավաստին ետ շրջվեցավ և մի րոպե թիակները անշարժ թողնելով սկսավ մեծ մեծ աչքերով նայել տարօրինակ քահանայի վերա:

– Ի՞նչ բանի ես նայում, ապուշ, – գոռաց նրա վերա պատեր – Սիմոնը, – թիակներդ շարժի՛ր, ամբողջ երկու ժամ հո մեզ չի պիտի պահես ջրի մեջ:

Նավաստին հետ դարձրեց երեսը և սկսավ արագ արագ շարժել յուր թիերը:

– Ներեցեք ինձ, տե՛ր – հայր, միթե…

– Ամենից առաջ թույլ տվեք նկատել, – ընդհատեց ինձ պատերը, – որ ինձ տեր՛ – հայր կանչելու իրավունք ունիք, այդ անունը տալիս են հայոց քահանաներին, իսկ մեզ հետ խոսում են «պատվելի» տիտղոսով:

– Բայց դուք էլ հայերեն եք խոսում…

– Այդ ապացույց չէ, որ ես էլ ուրեմն հայոց քահանա եմ: Ես… այո, ես քահանա եմ, բայց կաթոլիկների քահանա, այսինքն ավելի մեծ եկեղեցվո պատկանող: Դեհ, այժմ ասացեք, ի՞նչ էիք ուզում հարցնել:

– Ես ուզում էի հարցնել, թե մի՞թե անմորուք և առանց ընչացքի քահանա կա աշխարհում, (խոստովանում եմ, ես այն ժամանակ դեռ այդ չգիտեի, որովհետև տեսած չէի):

– Օ՛, տգե՛տ, տգե՛տ, ինչե՞ր է հարցնում, հա՛, հա՛, հա՛…

Եվ այս անգամ պատվելին այնպես թուլացավ ծիծաղից, որ ստիպվեցավ երկու ձեռքով յուր տակառանման փորը բռնելու, կարծես նրա հանկարծական պայթումից վախենալով:

Ես մնացել էի ապշած, բայց մի դեպք հանկարծ իմ ծիծաղն էլ շարժեց: Պատեր – Սիմոնը, որ սաստիկ ծիծաղելուց թեքվել էր մեջքի վերա, կորցնելով յուր շոգելից գլխի հավասարակշռությունը, կքեց նրան դեպի ծովը և յուր լայն շրջանավոր գլխարկը ընկավ ջրի մեջ:

– Սպասի՛ր, սպասի՛ր. ապո՛ւշ, անասո՛ւն, – սկսավ նա բարկանալ և գոռալ նավաստիի վերա, որը աչքը ափին տնկած անընդհատ առաջ էր վարում մակույկը, – սպասիր գլխարկս վերցնեմ, գլխարկս… – Այս ասելով նա պատրաստվում էր կարծես մակույկից դուրս թռչելու և ալիքների վերա սուրալով յուր գլխարկը բռնելու, որին փոքրիկ կոհակները հեռացել էին իսկույն:

Նավաստին հետ նայեց և տեսնելով պատվելիի գլխարկը ալիքների վերա՝ չկարողացավ յուր ծիծաղը զսպել:

– Դու՞ էլ ես ծիծաղում, անզգամ, – գոչեց վայրենի ձայնով պատերը և հարձակվեցավ նավաստիի վերա. բայց վերջինս չգիտեմ ինչ մի ճարպիկ հարված տվավ ալիքներին, որ նավակը սաստիկ երերաց և պատվելին, որ առանց այն էլ ուղիղ կանգնելու ընդունակությունը Բաքոսին էր նվիրել, կորցրեց յուր հավասարակշռությունը և գլորվեցավ նավակի մեջ:

Այժմ ծիծաղից թուլանալու հերթը ինձ հասավ:

Նավաստին արագությամբ դարձրեց նավակը և հասնելով ապստամբ գլխարկին՝ հափշտակեց նրան թիակի ծայրով և. տվավ պատվելիին, որը արդեն ընկած տեղից բարձրացել և զայրացած դեմքով նստել էր յուր նստարանի վերա: Բայց ըստ երևույթին նա ինձանից ավելի է վշտացած, քան նավաստիից, թեպետ երկուսս էլ ոչնչով մեղավոր չէինք յուր գլխարկի ապստամբության գործում: Այսուամենայնիվ պատվելին էլ կամեցավ շարունակել ինձ հետ յուր խոսակցությունը և դեմքը դեպի շոգենավը դարձնելով սկսավ նավապետի սենյակում յուր կիսատ թողած շիշերը երազել:

Ճշմարիտը խոստովանած, ուրիշ անգամ այս տեսակ մի անծանոթ անձնավորությունը ինձ կհետաքրքրեր. և որքան էլ անբնական դրության մեջ լիներ նա, դարձյալ ես չէի թողնել

նրան, մինչև որ իմ մանրակրկիտ հարցուփորձով չտեղեկանայի նրա ո՞վ և ո՞ր տեղացի լինելը, ո՞ր քաղաքից և ի՞նչ գործով այստեղ գալը, ի՞նչ գաղափարների և համոզմանց տեր լինելը և այլն, և այլն: Բայց այս անգամ ես բավականացա միայն իմանալով, որ նա մի հայ կաթոլիկ քահանա է և որ նրան անվանում են պատեր – Սիմոն: Էլ ուրիշ ոչնչով չհետաքրքրվեցա, որովհետև նույն րոպեին ինձ ուրիշ մարդիկ էին զբաղեցնում, որի համար և առիթ էի պտրում քաղցվալից ընկերոջս շաղակրատությունից ազատվելու:

Ուստի երբ նա լռեց, ես էլ գոհ սրտով դարձրի երեսս հակառակ կողմը և անուշադիր դեպի նրա գոյությունը սկսա այն մտածմունքներով զբաղվիլ, որոնք նույն րոպեին քաղցրացնում էին իմ կարճ, բայց անհանգիստ ճանապարհորդությունը:

Գ
ԱՌԱՋԻՆ ՀԱՅԱՑՔԸ

Նավակը փոքր առ փոքր մոտենում էր ափին, սիրտս կամացուկ սկսում էր տրոփել, և մի անհանգստացնող ուրախություն հետզհետե լցվում էր նրա մեջ: Ես մտածում էի, որ ահա մի քանի րոպեից հետ պիտի տեսնեմ իմ քրոջը, որին այնքան սիրում էի, բայց որին յոթ երկար տարիներից ի վեր տեսած չէի: Ո՛չ հեռավորությունը և ո՛չ տարիների անջրպետը չէին բաժանել մեր սրտերը միմյանցից, ընդհակառակը, երկարամյա կարոտը ավելի զգայուն և ավելի խանդակաթ էր դարձրել նրանց: Օ՛, որքա՛ն քաղցր, որքա՛ն գողտրիկ և մանավանդ թե որքա՛ն անկեղծ է այն սերը, որ կապում է միմյանց հետ մի քույր և եղբայր… Եվ ով չէ ունեցել այդ սերը, նա չէ վայելել կյանքի ամենաքնքուշ քաղցրություններից մինը – հարազատության քաղցրությունը: Այն մի քանի րոպեները, որոնք բաժանում էին ինձ իմ քրոջից, մի մի ժամերի չափ երկարում էին ինձ համար: Ես գիտեի, որ միևնույն անհանգստությամբ սպասում էր նա ինձ, ըստ որում առաջուց դիտեր իմ գալուստը, գիտեի, որ ափին մոտեցող յուրաքանչյուր նավակը անշուշտ թունդ է հանում նրա սիրտը:

Հիսուն քայլ հազիվ էր մնացել, որ մենք ափը իջնեինք: Այն տեղի վերա, ուր դիմում էր մեր նավակը, ժողովված էր կանանց և մարդիկների մի բազմություն: Ըստ երևույթին նրանցից ոմանք եկել էին իրենց բարեկամներին դիմավորելու, իսկ ուրիշները, լոկ հետաքրքրությամբ կամ, շոգենավի գալուստը տեսնելու… Ես հեռվից սկսա որոնել իմ քրոջը, բայց այն բազմության մեջ անհնար եղավ ինձ ճանաչել նրան:

Վերջապես նավակը մոտեցավ ափին, ես դուրս ցատկեցի ավազի վերա և հենց պատրաստվում էի պայուսակս վերցնել հանկարծ տեսի, որ մի նորատի տիկին կանանց միջից դուրս վազեց և «եղբայրս…» ճչալով դիմեց գրկաբաց դեպի ինձ և պլլվեցավ իմ պարանոցին: Նա իմ քույրն էր, ես իսկույն ճանաչեցի, նա շատ քիչ էր փոխվել: Երկար մենք չկարողացանք ասել միմյանց հետ. մենք գրկվում, համբուրվում և ուրախությունից արտասվում էինք… Սա այն վայրկյաններից մինն էր, երբ մարդ մոռանում է վշտերի գոյությունը և ամբողջապես հոգիանալով՝ լուծվում է հրճվանքի և երջանկության մեջ…: Տխրությունը յուր սև պատկերով չքանում է նրա աչքերից. մարդկանց դեմքերը էլ չարություն չեն արտահայտում, ամեն կողմ տիրապետում է բերկրանք և ուրախություն, և բոլոր շրջապատող առարկաները ժպտում են նրան… Ահա այստեղ է զգում մահացուն կյանքի քաղցրությունը, այստեղ է նա ճանաչում կյանքի հրապույրները:

Վերջապես մոտեցավ ինձ իմ փեսան, որը մինչև այն տեղի էր տվել իմ քրոջ զգվանացը, գրկեց և համբուրեց ինձ և ապա կառք կանչելով հրավիրեց ինձ նստել տուն գնալու համար:

Մինչև այն ես գրեթե մոռացել էի իմ ընկերոջը՝ պատեր – Սիմոնին: Երբ ուղղվեցի դեպի կառքը, հանկարծ աչքիս զարկավ նրա լայն շրջանավոր գլխարկը և սափրած ծնոտը: Նա կանգնած էր մի քանի քայլ մեզանից հեռու շրջապատված կանանց ու աղջիկների մի փոքրիկ խմբակով: Պատեր – Սիմոնը այնպիսի մի համեստ և պատկառելի կերպարանք էր առել, որ ես մի վայրկյան վարանեցի ընդունել նրան իմ արբած ընկերոջ տեղ, և սկսա զննել նրան: Նա քնքշաբար ողջունում էր յուր շրջապատողներին, հարցնում էր նրանց և իրենց ընտանիքների առողջությունը, իսկ յուր ձեռքերը համբուրող մի երկու փոքրիկներին փայփայում և օրհնում էր: Երբ կառքը նստանք, ես պատրաստվում էի հարցնել իմ փեսային թե ո՞վ էր արդյոք այս պատերը և ի՞նչ գործ ուներ նա այս քաղաքում, բայց մի ուրիշ ավելի հետաքրքիր անձնավորություն գրավեց իմ ուշադրությունը: Սա մի գեղեցկահասակ, սիրուն դեմքով, մեծ և սևորակ աչքերով աղջիկ էր, որ պատերին շրջապատող խմբակից դուրս գալով մոտեցավ մեր կառքին և շնորհալի ու ժպտադեմ դիմեց քրոջս, «Շուշան, թույլ տուր, որ ամենից առաջ ես շնորհավորեմ քեզ եղբորդ գալուստը»: Այս ասելով սեղմեց քրոջս ձեռքը և գլխի թեթև շարժումով ողջունեց փեսային և ինձ:

Քույրս հայտնեց նրան յուր շնորհակալությունը: Ես սպասում էի, որ նա գեղեցիկ աղջկա հետ էլ կծանոթացներ ինձ, բայց նա այդ չարավ, և երևի իմ ցանկությունը գուշակելով, ասաց.

– Ես քեզ չեմ ծանոթացնում իմ եղբոր հետ, ես կսպասեմ քո այցելությանը:

– Ուրախությամբ, – պատասխանեց գեղեցիկ աղջիկը և շնորհալի ժպիտով մեզ ողջունելով հեռացավ, նրա վերջին հայացքը հանդիպեց իմ աչքերին, բայց մեր կառքը արդեն հեռանում էր…

– Ինչո՞ւ չհրավիրեցիր օրիորդին մեզ հետ կառք նստելու, – հարցրեց փեսաս քրոջս:

– Նրա մայրը այստեղ էր, նա նրան միայն թողնել չէր կարող, – պատասխանեց քույրս և սկսավ կրկին զբաղվել ինձմով: Առաջին տեսակցությունից նա յուր կարոտը դեռ չէր առել, նա ուզում էր խոսել ինձ հետ, հարցափորձել ինձ. և որքան շատ բաներ ունեինք մենք միմյանց հաղորդելու:

Բայց գեղեցիկ աղջկա անձնավորությունը նույնպես սկսավ հետաքրքրել ինձ:

– Ո՞վ էր այդ աղջիկը, – հարցրի քրոջս:

– Դա օրիորդ Լուսինյանն է:

– Ինչպե՞ս է նրա անունը:

– Մարգարիտա, – պատասխանեց քույրս և ապա ժպտալով նկատեց, – ըստ երևույթին իմ բարեկամուհին քեզ շատ է հետաքրքրել, լավ, ես վաղը կծանոթացնեմ քեզ նրա հետ:

Քրոջս այս խոստումը ինձ անհաճո չթվաց, և ես նրան հայտնեցի իմ անկեղծ շնորհակալությունը, որը բավական զվարճացրեց իմ բարի փեսային:

Դ
ԻՄ ՔՐՈՋ ՏԱՆԸ

Շուտով մենք հասանք տուն: Քույրս յուր բոլոր քնքշությունները ժողովել էր ի մի՝ ինձ յուր տան մեջ տեսնելու համար: Նա ուրախությունից չգիտեր ինչ աներ: Կամ ծառային էր պատվերներ տալիս այս ու այն բանը ինձ համար պատրաստելու, կամ աղախնին էր հրամայում ինձ սպասավորելու, և կամ նրանց վերա չվստահանալով այս ու այն կողմն էր վազվզում անձամբ իմ հաճույքները կատարելու, հաճույքներ, որոնց ես չէի արտահայտում, բայց ինքը յուր երևակայության մեջ ստեղծում էր ինձ համար: Վերջապես նա ինձ տարավ յուր լվացարանի մոտ և ներքնատանից յուր ձեռքով հանած թարմ և ցուրտ ջրով ստիպեց ինձ լվացվելու: Ապա պայուսակս բանալով հանեց ինձ համար նոր հագուստներ և ինքը շտապեց իմ մյուս պետքերը հոգալու, որոնք նրա կարծիքով բազմաթիվ էին:

Երբ ես արդեն հագնվել էի, ներս մտավ փեսաս և հրավիրեց ինձ տան պատշգամբ թեյ խմելու: Մենք միասին դուրս գնացինք: Բայց մինչև որ քույրս մեզ կընկերանար, ես կամեցա նրա տունը հետազոտել, ուստի փեսայիս հետ միասին սկսեցի ամեն կողմ շրջակայել:

Քրոջս տունը, որ յուր ամուսնու սեփականությունն էր: գտնվում էր քաղաքի առաջին փողոցի վերա ծովափի մոտ: Նա մեծ չէր, բայց պարունակում էր յուր մեջ մի համեստ ընտանիքին անհրաժեշտ բոլոր բաժանմունքները: Մի չափավոր մեծությամբ դահլիճ, որը միևնույն ժամանակ և նրանց ընդունարանն էր, մի սեղանատուն, երկու ննջարաններ և մի գրասենյակ, իրենց նախասենյակով, խոհանոցով, երկու ներքնատներով և ոչ ընդարձակ բակով կազմում էին այդ տան ամբողջությունը: Ընդհանուր հայացքով այդ տան շինությունը շքեղ և զարդարուն չէր, բայց պարզ էր և վայելուչ: Նրա արտաքին գեղեցկությունը կազմում էին յուր ձյունի պես սպիտակ պատերը՝ իրենց ընդարձակ և լուսավոր պատուհաններով և երկու փոքրիկ երկնագույն պատշգամբներ՝ շինված տան երկու հակադիր ճակատների վերա, որոնցից մեկը նայում էր ուղղաձիգ փողոցի, իսկ մյուսը ծովի և նավահանգստի վրա: Տան թե դրսում և թե ներսում տիրում էր միօրինակ մաքրություն: Բակի մեջ չէր նշմարվում ոչ մի խոռիվ, քարի կամ աղյուսի կտոր, ամեն բան յուր տեղում, ամեն ինչ կանոնավոր: Սենյակները կանոնավորված էին պատշաճավոր կարասիքներով առանց շռայլության և առանց գծուծ խնայողության: Այն պարզ զարդարանքները, որոնք մի տան տիկին կարող է պատրաստել, դրսից չէին հայթայթված: Վարագույրներ, սեղանի սփռոցներ, օթոցների և բարձերի երեսկալներ և այլ առտնին պաճուճանքներ բոլորք քույրս յուր ձեռքով էր կաբել կամ ասեղնագործել, առանց այդ ամենի համար յուր ամուսնու բյուջեն ծանրաբեռնելու: Մինչդեռ ես հյուրասենյակի մեջ զննում էի իմ քրոջ ձեռագործները նա ներս մտավ:

– Որքա՛ն գեղեցիկ ձեռագործներ ունիս դու, քույրիկս, – բացականչեցի ես դիմելով դեպի նրան, – ես բոլորովին հիացած եմ:

– Ճշմարի՞տ, դու չե՞ս շողոքորթում, – ժպտալով մոտնցավ նա ինձ և քնքշաբար յուր թեւը պարանոցս պատելով նայեց իմ աչքերին այնքան բարի և այնքան ուրախ հայացքով, որ կարծես յուր դեպի ինձ ունեցած խանդաղատանքը կրկնապատկվում էր իմ նրան ուղղած մի երկու գովասանական բառերով:

– Շողոքորթե՞լ, ինչու համար, մի՞թե ճշմարտությունը ասել նշանակում է շողոքորթել, – պատասխանեցի ես, ցանկանալով այս խոսքերով ավելի ես գոհացնել նրան:

Եվ իմ պատասխանը արդարև մեծ ուրախություն պատճառեց քրոջս: Նա սկսավ մի առ մի ցույց տալ ինձ յուր տնտեսական հեղինակություններից և ուրիշ շատ բաներ, որոնք մինչև այն ես տեսած չէի, և պատմել մինչև անգամ նրանց ամեն մեկի համառոտ պատմությունը: Ես մեծ գոհունակությամբ լսում էի քրոջս և զվարճանում, որովհետև պարծենալու այդ անմեղ ցանկությունը ոչ միայն բնական էի գտնում նրա մեջ, այլև ինքս իրավունք էի տալիս նրան պարծենալու:

Կան մարդիկ, որոնք չափից դուրս խստապահանջ են և չնայելով, որ ապրում են այնպիսի մի ժամանակում, երբ պարտք ճանաչելն ու կատարելը ոչ միայն թուլության նշան է համարվում, այլև ծաղրու առարկա է դարձած, այսուամենայնիվ պահանջում են, որ պարտաճանաչ մարդը զրկվի մինչև անգամ այն փոքրիկ մխիթարությունից, որը նա ստանում է յուր շրջապատողների խրախույսներից: «Այդ մարդը միայն յուր պարտքն է կատարել» ասում է խստասիրտ բարոյախոսը և գայրանում է՝ երբ լսում է նրա մասին գովություններ, որոնք յուր կարծիքով ավելորդ բաներ են: Բայց չէ՞ որ խավարի մեջ ծաղիկներ չեն աճում և ծայրահեղ համեստության ներքո թառամում է ճշմարիտ առաքինությունը: Քանի որ արեգակի տակ հավասար իրավունքներով են օդ շնչում հոգածուն և անհոգ մարդը, աշխատավորը և հափշտակողը, խնայասերը և շռայլողը, գոնե մարդիկ այնքան խելք և սիրտ պիտի ունենան, որ բնության այդ անիրավ հավասարասիրտությունը չափավորեն, տալով «որում զհարկս հարկս և որում զպատիւ՝ պատիւ»:

Ահա հենց այս տեսակետից նայելով ես ա՛յն կարծիքին եմ, որ թույլ բնավորությունները մանավանդ, որպիսիք են կանանցը, պետք ունին ավելի քաջալերության և խրախուսանքի, երբ նրանց մեջ երևան է գալիս գործունեության ուժը և պարտաճանաչության արդյունավոր զգացմունքը: Այն կինը, որ ըմբոնում է յուր կոչումը և բարձր է պահում նրան – արժանի է հարգանքի և քաջալերության, իմաստակ անտարբերությունը կարող է վիատեցնել նրան, իսկ մի վիատյալ կինը անպետք է իր ընտանիքի համար:

Պարզ է ուրեմն, թե ինչու համար ես ուրախանում էի քրոջս աշխատասիրությունը տեսնելով և թե ինչու ես իրավունք էի տալիս նրան պարծենալու յուր պարտաճանաչ տանտիկնությամբ:

Բոլոր տունը շրջագայելուց հետ մենք դուրս եկանք այն պատշգամբը, որը նայում էր ծովի և նավահանգստի վերա: Այստեղ մաքուր սփռոցով ծածկված սեղանի վերա արդեն պատրաստ էր փայլուն ինքնաեռը, թեյի բոլոր պարագաներով: Քույրս իսկույն ձեռք առավ յուր պաշտոնը մի առանձին ուրախությամբ և հրճվանքով: Նրա շրթունքների վերա ամբողջ ժամանակ փայլում էր մի քաղցր ժպիտ, որ նշան էր յուր սրտի անսահման գոհունակության: Իսկ իմ բարի Փեսան, որ շատ քիչ բան էր կարդում յուր կնոջ հայացքների մեջ, և իբր այր մարդ, ընդունակ չէր նույնչափ քնքշությամբ յուր սրտի ուրախությունը արտահայտելու, շատանում էր միայն զանազան ծառայություններ անելով ինձ: Նա ինքն էր անձամբ թեյ բերում ինձ համար, ինքն էր առաջարկում կաթ կամ սեր և ընտրելով շաքարահացերից լավագույնները անընդհատ հրամեցնում ինձ: Այդ միջոցին ես վայելում էի կենցաղասեր մարդկանց սիրելի բոլոր գրգանքները, իրենց կատարյալ քաղցրություններով:

Արեգակը արդեն մայր էր մտել և երեկոն կամաց կամաց տարածում էր յուր գորշագույն մթությունը: Մի քաղցր հովիկ շարունակ փչելով ծովի կողմից դեպի մեզ խիստ ախորժելի էր կացուցանում ամառային երեկոն, իսկ լուսնի եղջյուրը, որ արդեն բարձրացել էր երկնակամարի վերա, ուղղակի նայում էր դեպի մեզ և ձրի լուսավորություն էր խոստանում մեր պատշգամին:

Այժմս արդեն հանգիստ զրուցատրության ժամանակն էր: Քույրս և փեսաս սկսել էին սովորական հարցափորձը, ե՞րբ արդյոք դուրս եկա տնից, քանի՞ օր ճանապարհորդեցի. արդյոք չհիվանդացա կամ մի որևէ վտանգ չպատահե՞ց ճանապարհին: Հետո թե ի՞նչպես էր մայրս, առո՞ղջ էին մեր երեխաները, ո՞րչափ են մնացել նրանք, ի՞նչ ապսպարեցին ինձ իրենց հաղորդելու համար. և կամ ի՞նչ են շինում մեր մյուս ազգականները, հորաքույր, մորաքույր, նրանց աղջկերքը, տղաները, արդյոք բոլորն էլ առո՞ղջ են. բոլորն էլ լավ ապրում են. վերջապես թե ո՞վ ինչպես պսակվեց, ո՞վ ինչ զավակ ունի, ո՞ վ Աբրահամու գոգը գնաց և այլն, և այլն, և այլն:

Այս բոլոր հարցերին ես մի առ մի պատասխանում էի՝ աշխատելով որքան կարելի է տխուր կամ անմխիթարական ոչինչ չհաղորդել: Որովհետև թեպետ իմ հայրենիքում շատ բան իմ պատմածներից տարբեր դրության մեջ էր գտնվում, սակայն ես չէի կամենում իմ տխուր հայտնություններով խանգարել այն ուրախությունը, որ նույն միջոցին տիրում էր իմ քրոջ ընտանիքում, ճշմարիտ խոսելու համար ես դեռ ժամանակ շատ ունեի:

Գիշերից մի քանի ժամ արդեն անցել էր, երբ ես իմ համարատվությունը վերջացրի, և բոլորս միասին ընթրիքի նստանք: Այստեղ արդեն մեր խոսակցությունը ոչինչ կապ չուներ յուր մեջ. մենք խոսում էինք ամեն բանից և կերակրից, և՛ ծառաներից, և՛ դրացիներից, և կամ կատակներ էինք, անում, երգում էինք և ծիծաղում: Միայն ընթրիքի վերջում չգիտեմ ինչպես պատահեց, որ մենք դարձյալ հիշեցինք օրիորդ կոլսինյանին և մի փոքր ժամանակ էլ նրա անվանը նվիրեցինք մեր խոսակցությունը: Թեպետ ես կկամենայի ավելի երկար զբաղվիլ այդ վերջին զրուցատրությամբ, որովհետև զգալի կերպով հետաքրքրել էր ինձ այդ օրիորդի անձնավորությունը, բայց որովհետև ճանապարհի հոգնածությունից արդեն ծանրանում էին իմ աչքերը, ուստի բարի գիշեր մաղթելով սեղանակիցներիս խույս տվի ինձ համար պատրաստված ննջարանը իմ բախտը Մորփեոսին հանձնելու համար:

Ե
ՆՈՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետևյալ առավոտ ես շատ ուշ զարթեցի: Քույրս ինձ հայտնեց, որ այդ օրը մենք հրավիրված էինք քաղաքից դուրս ոչ շատ հեռու գտնվող այգիներից մինում ճաշի, և պետք է շտապեինք ըստ սովորության մի փոքր վաղ այնտեղ գտնվելու: Այդ լուրը ինձ ուրախացրեց, որովհետև ես սիրում էի բացօթյա զվարճությունները, բայց ավելի մեծ եղավ իմ ուրախությունը, երբ իմացա, որ մեզ հրավիրողը Լուսինյանների ընտանիքն է:

– Այսօր Մարգարիտայի ծննդյան օրն է, – ասաց քույրս, – այդ պատճառով և նրա ծնողները ըստ սովորության ճաշկերույթ են պատրաստել իրենց սեփական այգում:

– Ուրեմն այստեղ ուրիշ շատերը կլինին, – հարցրեցի ես:

– Գրեթե քաղաքիս մեջ գտնված հայ ընտանիքների մեծ մասը, – պատասխանեց քույրս, – այստեղ մեծ քաղաք չէ, այդ պատճառով էլ բոլորը գրեթե միմյանց հետ բարեկամական հարաբերություն ունին:

Ես իսկույն լվացվեցա և շտապ – շտապ սկսա հագնիլ: Երեկվա օրիորդի և նրա բարեկամների հետ մի ժամ առաջ ծանոթանալու փափագս այնքան մեծ էր, որ ես չուշանալու համար չէի կամենում մինչև անգամ մի բաժակ թեյ առնել: Բայց քույրս ստիպեց, որ ես անոթի դուրս չգամ տանից: Ես նրան հնազանդվեցա և հանգստություն կեղծելով դատարկեցի մի բաժակ: Կառքը արդեն պատրաստ էր, երբ մենք դուրս եկանք:

Իմ քրոջ տունը գտնվում էր գրեթե քաղաքի մի ծայրում, ծովափից ոչ շատ հեռու, այնպես որ նշանակյալ այգին հասնելու համար մենք պետք է ամբողջ քաղաքը պտտեինք: Այդ հանգամանքը օգնեց ինձ մի հարևանցի կերպով ծանոթանալ նրա դիրքի, տարածության և շինությունների հետ:

Այդ փոքրիկ քաղաքը գտնվում էր ծովեզրին շատ մոտիկ մի մեծ բլրի ստորոտում: Շինությունների մեծ մասը տարածված էր ծովեզրը պարփակող դաշտավայրի վերա, իսկ փոքր մասը գտնվում էր բլրի լանջերի և նրա բարձրավանդակի վերա: Քաղաքի տարածությունը մեծ չէր և ծածկված էր գեղեցիկ և աչքերը պարուրող կանաչությամբ: Փողոցները գրեթե ամեն տեղ էլ գեղեցիկ և լայն էին եզերված ուղղաձիգ ծառերով և ոչ շատ հարուստ, բայց կոկիկ և մաքուր տներով: Այստեղ չկար մեծ քաղաքների ո՛չ շշուկը, և ո՛չ խառնիճաղանճ անցուդարձը: Երևում էր, որ կարելի էր այս քաղաքում հանգիստ և սակավապետ կյանք վարել առանց դրացիների և դրացուհիների ծաղրի և բամբասանաց առարկա դառնալու:

Ամբողջ ժամանակ, որ մենք անցնում էինք քաղաքի միջով, ես զանազան հարցեր էի անում քրոջս և փեսայիս, և նրանք լիուլի գոհացնում էին իմ հետաքրքրությունը, ծանոթացնելով ինձ զանազան շինությանց, կրպակների և խանութների հետ և կամ պատմելով նրանց տերերին և առհասարակ մյուս քաղաքացիներին վերաբերյալ շատ հետաքրքիր բաներ:

Կես ժամ դեռ չէր անցել, որ մենք արդեն գտնվում էինք, քաղաքից դուրս, և մեր կառքը սլանում էր կանաչազարդ դաշտի մեջ. մի փոքր հետո նա սկսավ բարձրանալ սիզավետ բլրի վերա, որի ծայրը հասնելուն պես մեր առաջն բացվեցավ մի շարք գեղեցիկ այգիներ, որոնք գրված էին բավական ընդարձակ տարածություն հանդիպակաց լեռան ստորոտի վերա:

– Ահա Լուսինյանների այգին, – մատնացույց արավ ինձ քույրս մոտիկ այգիներից մեկի վերա, – սա ամենից գեղեցիկն է, դու, անշո՛ւշտ, կհավանես նրան…

Բայց նա դեռ չէր վերջացրել խոսքը, երբ Լուսինյան հայր և աղջիկ դուրս եկան այգվո մեծ դռնից, նրանք հեռվից տեսնելով մեր գալուստը շտապել էին այգուց դուրս մեզ դիմավորելու:

Քույրս այդ ընտանիքի ամենասիրելի բարեկամուհին էր, այդ պատճառով նրանք ցանկացել էին ուրիշներից մի փոքր տարբեր եղանակով ընդունել մեզ: Սրտագին ուրախությամբ ողջունեցին մեզ հայր և աղջիկ: Քույրս ներկայացրեց ինձ նրանց, մենք ծանոթացանք և ապա բոլորս միասին խոսակցելով դիմեցինք դեպի այգին:

Պ. Լուսինյանը մոտ քառասուն և հինգ տարեկան միջին հասակով և առողջ կազմվածքով մի մարդ էր: Նրա դեմքը համակրական էր և ակնածելի, բայց ըստ երևույթին, անծանոթ կյանքի դառնություններին: Ճակատը պարզ և զվարթ իսկ գոհության ժպիտը չէր բաժանվում յուր շրթունքներից: Նա գտնվում էր մի տեսակ ուրախ անհանգստության մեջ և զանազան հարցերով անընդհատ դիմում էր մերթ ինձ և մերթ քրոջս ու փեսայիս:

Մտնելով այգին մենք անցնում էինք մի գեղեցիկ ծառուղիով, որին երկուստեք հովանավորում էին ուղղաձիգ ակացիներ բեռնավորված ձյունաթույր ծաղկափնջերով, որոնց անուշ բուրմունքը տոգորել էր ճեմելիքի ամբողջ տարածության օդը: Ճանապարհի երկու կողմից հոսում էին հեզասահ առուներ կանաչ դալարիներով եզերված, և նրանց ամբողջ երկարությամբ շինված էին մանր ու խոշոր ածուներ՝ ծածկված երփներանգ ծաղիկներով:

– Ինչպե՞ս եք հավանում մեր այգին, – հարցրեց ինձ վերջապես պ. Լուսինյանը, որ ըստ երևույթին ավելի վաղ էր սպասում լսել այդ մասին իմ կարծիքը:

– Պարոնը երևի այնքան շատ գեղեցիկ այգիներ է տեսել, որ մերը շատ հասարակ բան է երևում յուր աչքում, ընդհատեց հորը Մարգարիտան:

– Ընդհակառակը, օրիո՛րդ, ես առաջին անգամն եմ տեսնում այսքան գեղեցիկ ճաշակով տնկագործված մի այգի, ես հիացած եմ, նա կատարյալ բուրաստանի է նմանում, – պատասխանեցի ես:

– Այս բոլորը ես իմ ձեռքով եմ շինել, ինքնաբավական եղանակով հարեց պ. Լուսինյանը, – այս ածուները, այս բուրակները, այս փոքրիկ ուղիները, բոլորը, բոլորը իմ ձեռքով եմ ակոսել և կարգավորել: Մինչև անգամ այս կալմարները և այս փոքրիկ հովանոցները իմ ձեռակերտներն են, – շարունակում էր նա, հետզհետե հառաջանալով և ցույց տալով մեզ յուր ստեղծագործությունները, որոնք արդարև մեծ աշխատասիրության և նուրբ ճաշակի արդյունքներ էին: Երևվում էր, որ պ. Լուսինյանը դաշտային աշխատանքներին սիրահար ոմն էր:

Շուտով մենք հասանք մի երկար և լայն ճեմելիքի, որը տանում էր մեզ դեպի այգվո տունը: Նրա երկու կողմից տնկված էին վարսագեղ ուռիներ՝ միամեջ շարված խաղողի որթերով, որոնց ճապուկ ոստերը փաթաթվելով ուռենիների կանաչ ճյուղերի հետ, կազմում էին մի գեղեցիկ և արեգակից անթափանց կամարակապ – ամբողջ ճեմելիքի երկարությամբ:

Երբ առաջին անգամ մենք ոտք դրինք այդտեղ, ես հիացմամբ բացականչեցի.

– Ահա հրաշալի գործ, սա գերազանցում է բոլորին:

– Այս ճեմելիքը շինված է Վատիկանի այգվո գլխավոր ճեմելիքի օրինակով, – նորեն խոսեց պ. Լուսինյանը, – այս օրինակը ես ինքս եմ Հռովմում նկարել և այստեղ բերելով շինել նրա նմանողությամբ այս կամարակապը և ճեմելիքը:

– Ինչպե՞ս, մի՞թե դուք Հռովմում եղել եք, – հարցրի ես:

– Այո, – ես այնտեղ մի ամբողջ ամիս մնացի:

– Բայց ինչու՞ համար էիք Հռովմ գնացել:

– Ճանապարհորդելու նպատակով, – հարեց իսկույն օր. Լուսինյանը, կասկածելով կարծես, որ յուր հայրը ինձ համար անախորժ մի խոսք կհաներ բերանից:

Պ. Լուսինյանը ոչինչ չխոսաց, բայց մի զարմացական հայացք ձգեց օրիորդի վերա, որով կարծես ուզում էր իմանալ սրանից թե՝ ինչու համար նա ծածկում է ճշմարտությունը:

Շուտով մենք հասանք այգվո տանը, որը մի գեղեցիկ և միահարկ շինություն էր, շրջապատված միակարգ հովանավոր ծառերով: Նրա առաջև շինված էր փոքրիկ կիսաբոլոր բուրաստան՝ ծածկված ծաղկեթուփերով և նրա մեջտեղը փոքրիկ ավազան սրբատաշ քարերից և սյունաձև շատրվանով:

Ոչ շատ ընդարձակ մի դահլիճի մեջ, որպիսին կվայելեր մի ամառանոցի տանը, վայելուչ հարգանքով ընդունեց մեզ տիկին Լուսինյանը:

Սա միջին տարիքով մի կին էր, առողջակազմ ինչպես յուր ամուսինը և հասակով գրեթե նրան հավասար: Բայց նրա դեմքը ավելի կայտառ և ավելի երիտասարդ էր երևում, ըստ որում

տարիքը շատ փոքր էր ազդել յուր գեղեցկության վերա: Առաջին անգամից իսկ նրա քաղցր և ամոք հայացքի մեջ նկատեցի ես անսահման բարություն:

Ծանոթանալով ինձ հետ՝ տիկին Լուսինյանը ներկայացրեց ինձ և յուր հյուրերին, որոնք մեզանից առաջ էին եկել և ապա քրոջս հետ միասին ինձ էլ նստեցնելով յուր կողքին դիվանի վերա, սկսավ սովորական հարց ու զրույցը:

Ես, ինչպես նորեկ, ստիպված էի ամենից շատ խոսել, որովհետև ամենից ավելի ինձ էին հարցեր առաջարկում: Տիկին և պարոն Լուսինյանները արդեն ի պաշտոնե հետաքրքրվում էին իմ ընտանիքի և ազգականների առողջությամբ, կենցաղավարությամբ և նրանց վերաբերյալ ուրիշ հարցերով: Հյուրերից մի քանիսին էլ հետաքրքրում էին իմ հայրենիքի օդը, ջուրը, ապրուստի եղանակը, ընտանեկան սովորությունները և այլն, իսկ մի քանիսը իրենց քաղաքի մասին էին ինձ հարցեր առաջարկում, թե ո՞րքան եմ ես հավանում նրան կամ ո՞րքան եմ գերադասում իմ տեսած ուրիշ քաղաքներից:

Այս բոլոր հարցերին իհարկե պետք էր պատասխանել, և ես հնազանդվում էի իմ ճակատագրին:

Սուրճ առնելուց հետ տիկինը առաջարկեց յուր հյուրերին դուրս գալ այգիում շրջագայելու: Բոլորս ուրախությամբ ընդունեցինք այդ առաջարկությունը, ցանկանալով միջոց տալ տիկնոջը հսկել յուր հյուրասիրական պատրաստությանց:

Օրիորդ Լուսինյանը, որ չէր մասնակցում դահլիճի մեջ մեր խոսակցությանը, ընկերացավ ինձ և քրոջս պարտիզի մեջ զբոսնելու համար: Այդտեղ, նա ինձ ծանոթացրեց յուր երկու օրիորդ ընկերուհիների, այն է Վարվարա Սիլիկյանի, Վարդուհի Մարանջյանի հետ: Նրանք երկուսն էլ բարեկազմ և գեղեցկադեմ աղջիկներ էին, մոտավորապես տասնութ և տասինը տարեկան: Վարվարա Սիլիկյանը մի գնդապետի աղջիկ էր, և նրա հայրը ծառայում էր տեղական զորքերի մեջ: Իսկ Վարդուհի Մարանջյանը՝ սույն քաղաքի հայ քահանայի, երկուսն էլ բուն թիֆլիսցիներ:

Այժմ ես լավ ընկերություն ունեի և կարող էի մի քանի ժամ թե՛ ուրախ և թե՛ օգտավետ անցկացնել: Աղջկերանց ընկերությունը առհասարակ ախորժելի է ամենին. նույնիսկ մարդատյաց Կատոն պետք է որ նրանց մոտ մեղմեր յուր կոպտությունը, եթե երբևիցէ պատահել է նրանց հետ: Ինչ վերաբերում է ինձ, ես մտնելով այդպիսի ընկերությանց մեջ՝ ուրախանում էի ավելի նրա համար, որ առիթ էի ունենում կարելվույն չափ ուսումնասիրելու կնոջ – այդ խորհրդավոր արարածի բնավորությունները, բնավորություններ, որոնք ոչ միայն չեն ենթարկվում որոշ օրենքների, այլև քանդում են նրանց չշփոթելով ամենից փորձառու ուղեղներն անգամ: Այսպիսի զբաղմունքը ինձ չափից դուրս զվարճացնում էր:

Բայց հազիվ թե մենք մի քանի խոսք փոխանակեցինք միմյանց հետ և ահա օր. Լուսինյանը ստիպված էր մեզ թողնելու:

– Ներեցեք ինձ մի քանի րոպե, ես պետք է պատվելիին դիմավորեմ, հայրս երևի չէ տեսնում նրա գալուստը, – ասաց նա շառագունելով և շտապ – շտապ դիմեց դեպի Հռովմեական ծառուղին:

Ես առաջին անգամ լավ չհասկացա նրա խոսքերը, բայց նրա շառագունելը ինձ հետաքրքրեց: Մի քանի քայլ հառաջ անցնելով իմ ընկերներից ես նկատեցի իմ երեկվա տարօրինակ ծանոթին, սա պատեր – Սիմոն էր, որ ծիծաղադեմ և քաջալանջ դիմում էր դեպի օրիորդը:

Չգիտեմ ինչու համար այդ մարդու պատկերը, որ երեկ նավակում ինձ զվարճություն էր պատճառում, այսօր չափից դուրս հակակրական և ատելի երևաց: Մի ներքին նախազգացմունք վրդովեց իմ ուրախ տրամադրությունը:

– Սա ինչո՞ւ համար է այստեղ գալիս, – մի տեսակ տանուտիրական եղանակով հարցրի ես իմ ընկերուհիներից:

– Ի՞նչպես թե ինչու համար, նա հրավիրված է, – նկատեց քույրս:

– Ուրեմն Լուսինյանների հետ ծանո՞թ է:

– Նա նրանց քահանան է: Մի՞թե այդ չգիտեք դուք, – պատասխանեց օր. Մարանջյանը և ծիծաղեց:

– Վարդուհի, դու էլի՝ պատերի վերա ծիծաղում ես, և չե՞ս վախենում, – նկատեց օր. Վարվարան, և երկուսը միասին սկսան ծիծաղել:

– Ա՛խ, դուք դեռ հիշո՞ւմ եք ձմեռվան անցքը, – խոսեց քույրս, և նրանց հետ միասին ինքն էլ սկսավ ծիծաղել:

Ես ոչինչ չէի հասկանում նրանց ծիծաղելուց և խորհրդավոր ակնարկություններից, բայց և չէի հետաքրքրվում իմանալու: Ես հանկարծ հիշեցի այն կանանց խմբակը, որը երեկ նավահանգստի մոտ շրջապատել էր պատեր – Սիմոնին և որի միջից դուրս եկավ օր. Լուսինյանը և շնորհավորեց քրոջս իմ գալուստը, հիշեցի որ երեկ մի քանի անգամ ցանկացել էի հարցնել քրոջս, թե ինչ ունեին այն կանայքը կաթոլիկ քահանայի հետ. և ամեն անգամ էլ մոռացել էի հարցնելու:

Բայց այժմ ամեն բան պարզվեցավ ինձ համար, երեկվա կանանց խմբակը հայ – կաթոլիկուհիներից էր կազմված, և նրանք իրենց քահանային դիմավորելու էին գնացել, ուրեմն Լուսինյանները հայ – կաթոլիկներ են, ահա բոլորը:

– Դուք ինչի՞ վերա եք մտածում, պարոն, – ծիծաղելով սկսավ խոսել օր. Մարանջյանը, – նրա վերա, թե ինչու օր. Մարգարիտան կաթոլիկ է, հա՞:

– Բնավ, ի՞նչ կա դրա վերա մտածելու:

– Ինչպե՞ս չէ, մի՞թե դուք չէիք կամենալ, որ նրա նման մի բարի և գեղեցիկ աղջիկը հայ լիներ:

– Առանց իմ կամենալուն էլ նա հայ է:

– Ընդհակառակը, ձեր կամենալով էլ դարձյալ նա հայ չէ:

– Այդ դու՞ք եք ասում:

– Ո՛չ, այդ ինքն է ասում:

– Սխալվո՛ւմ եք, – ընդհատեց Վարդուհուն օր. Վարվարան, – այդ յուր ծնողներն են ասում:

– Դուք երկուսդ էլ սխալվում եք, – հարեց քույրս, – ոչ Մարգարիտան և ոչ նրա ծնողները այդպես բան երբեք չեն ասել, դա պատեր – Սիմոնի խոսքն է:

– Այդ ավելի հավանական է, – նկատեցի ես, – օր. Մարգարիտան իմ աչքում այնքան զարգացած է երևում, որ նա յուր մասին այդպիսի բան չէր ասի:

– Բայց եթե ասեր անգամ, մի՞թե նա կստեր, չէ որ նա կաթոլիկ է և ո՛չ հայ, – խոսեց օր, Վարվարան:

– Իհարկե՞ ոչ, – ձայնակցեց նրան Վարդուհին, – նա կաթոլիկ է:

Ես իսկույն տեսի, որ ինձ շրջապատող ընկերությունը շատ սահմանափակ հասկացողություն ունի կրոնի և ազգության գաղափարները միմյանցից որոշելու համար, ուստի հարկ չհամարեցի այդ խնդրի վերա առ ժամն խոսելու: Բայց պատեր – Սիմոնի և նրա հոտի մասին մի քանի տեղեկություններ կամեցա իմանալ:

– Այդ պատերը միշտ այս քաղաքումն է մնում, – հարցրի ես:

– Ո՛չ, նա տարեն չորս անգամ է միայն այցելում այս քաղաքին և յուրաքանչյուր անգամ մի մի ամիս այստեղ մնալուց հետո հեռանում է, – պատասխանեց քույրս:

– Իսկ նա շա՞տ ժողովուրդ ունի այստեղ, – կրկին հարցրի ես:

– Ոչ, ընդամենը երեք տուն սակավաթիվ անձինքներից բաղկացած, որոնք Թիֆլիսից են գաղթած այստեղ իրենց առևտրական գործերով, – պատասխանեց նա:

«Երեք տուն ժողովուրդ, մի հեռավոր անկյունում, – մտածեցի ինքս ինձ, – և նրա համար տարվա մեջ չորս անգամ այցելություն: Ահա թե ո՞րտեղ պետք է որոնել կաթոլիկության ուժը: Երեք տուն բնակիչ, որոնք կարող էին շատանալ ամբողջ տարվա մեջ քահանայի մի շաբաթվա այցելությամբ միայն: Բայց նրանց ձեռքից չեն թողնում, նրանց այցելում են տարին չորս անգամ և այն չորս երկար ամիսներ: Կաթոլիկ եկեղեցին հսկում է յուր ժողովրդի վերա և գիտե, թե ինչու՞ համար է հսկում: Իսկ մեզ մոտ շատ անգամ ամբողջ

գյուղեր և ավաններ տարիներով առանց քահանայի են մնում: Շատ գաղթականության մեջ մեռելները թաղվում են առանց վերջին անգամ հոգեկան մխիթարություն ստանալու, ծնվածները տարիներով մնում են առանց մկրտության, պսակվողները թափառում են մի գյուղից մյուսը, մի քաղաքից երկրորդը: Ո՞վ է հարցնում, թե երեկ որքա՞ն ժողովուրդ կար այստեղ և այսօր որքան է մնացել, ո՞վ գիտե, թե ո՞ր անկյունում հարյուրավոր մարդիկ աղքատության երեսից փախչելով ուռկանավորների ցանցերումն են անհայտանում: Ո՞վ է հաշվում, թե քանի քանի գերդաստաններ Պարսկաստանի և Թուրքիայի անծանոթ խորշերում բռնության երեսից սարսափահար՝ իրենց լեզուն և կրոնը մոռանում են:

Եվ դեռ զարմանում ենք, որ այս աստիճան անխնամ թողնված մի ժողովրդի մեջ հավատորսը յուր ժողովարանն է հիմնում: Հռովմը՝ յուր քավարանը…»:

Այս տխուր մտածմունքները ինձ այնպես էին զբաղեցրել, որ ես չէի տեսել Մարգարիտայի կրկին մեզ մոտ գալը: Օր. Մարանջյանի ձայնը միայն ինձ սթափեցրեց, երբ նա ուրախ – ուրախ բացականչեց դեպի նրան.

– Հը՞, ի՞նչ արիր, տեղավորեցի՞ր պատեր – Սիմոնին:

– Այո, ես նրան հանձնեցի իմ հոր խնամակալության, – ժպտալով պատասխանեց Մարգարիտան և ապա մոտենալով ինձ հարցրեց, – դուք արդեն ամեն բան գիտեք, այնպես չէ՞:

– Ի՞նչ բան, – զարմացմամբ հարցրի ես, – չգիտեմ ի՞նչ բանի մասին է ձեր խոսքը:

– Այն, որ պատեր – Սիմոնը մեր քահանան է, – պատասխանեց օրիորդը շառագունելով:

Նրա վրդովմունքի պատճառը ես չկարողացա հասկանալ, եւ այդ միջոցին հարմարություն չունենալով նրա հետ ավելի երկար խոսելու, կամ նրա սրտի մեջ թափանցելու, ցանկացա առանց մի առանձին նշանակություն տալու նրա ասածներին, վերջավորել մեր խոսակցությունը: Այդպես էլ եղավ: Մի քանի աննշան խոսակցություններից և կատակներից հետո մենք հրավիրվեցանք ճաշի:

Աղջկերանց ընկերությունը այս անգամ ուսումնասիրելու համար ինձ ոչինչ նյութ չտվավ:

Զ
ՊԱՏԵՐ – ՍԻՄՈՆԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Փորձված մարդիկներից շատերը մեծ նշանակություն են տալիս նախազգացմանը, խորհրդավոր բաներ պատմելով նրա մասին: Ճշմարտությո՞ւն են դրանք, թե՞ նախապաշարման արգասիք, չգիտեմ, միայն ես առհասարակ շատ չեմ հավատացել նրան և՝ այդ օրը նախազգացման նշանակությունը հերքող մի փորձ տեսի ինձ վերա: Ինչպես գիտեք ես պարտեզի մեջ առաջին անգամ պատեր – Սիմոնին նշմարելով, նախազգամամբ մի ատելություն և հակակրություն զգացի դեպի նրան, և խոստովանում եմ, որ ինքս էլ մեծ նշանակություն տվի նույն ոոպեին իմ մեջ ներշնչված այդ տրամադրությանը, բայց ընկերուհիներիս հետ տուն հասնելով իսկույն ևեթ փոխվեցավ իմ մեջ նրա մասին ունեցած գաղափարս:

Դահլիճի դռնից ներս մտա թե չէ, պատեր – Սիմոնը այնպիսի մի հանդիսավոր ընդունելություն արավ ինձ, որ կարծես դրանով պատրաստվում էր յուր տասնամյա պանդխտութեն են վերադարձած հարազատ որդուն գրկելու:

– Օ՛, իմ սիրելի բարեկամ, վերջապես ձեզ էլ տեսնում եմ այստեղ, – բացականչեց նա, – որքան զոհ եմ. և եթե գիտենայիք, թե երեկվանից դեսը որքան շատ ցանկացել եմ ձեզ հետ տեսնվելու…

Այս անսպաս մտերմական խոսքերով, (որոնց նպատակը ես չգիտեի) մոտեցավ ինձ պատվելին և ջերմ – ջերմ սեղմեց իմ ձեռքը: Ապա դառնալով քրոջս, խորին հարգանքով ողջունեց նրան համեստությամբ թույլտվություն խնդրելով՝ որ շնորհավորե նրան յուր եղբոր գալուստը:

Քույրս մատույց պատվելիին յուր անկեղծ շնորհակալությունը ընդ նմին և ուրախություն հայտնելով, որ նա բարեհաճել էր յուր այցելությամբ իրենց քաղաքը պատվելու:

Բանից երևաց, որ պատվելին այս փոքրիկ քաղաքի բոլոր հայ ընտանիքներից սիրված մի անձնավորություն էր, բացի նորատի աղջիկներից, որոնք, ինչպես ինձ օրիորդ Մարանջյանը ասաց, շատ չէին ախորժում նրա հոգևորական զգացմունքներով տոգորված կավալերությունից, որը նա ի դեպ և տարադեպ առաջարկում էր նրանց:

Սեղանը արդեն պատրաստ էր և մենք պետք է ճաշի նստեինք:

– Դուք, անշո՞ւշտ, կներեք մեզ, տիկիննե՞ր և պարոննե՞ր, – ասաց պատեր-Սիմոնը հրավիրյալներին, – որ մենք երկու նորեկ հյուրերս միասին նստենք:

Այս ասելով նա բռնեց իմ ձեռքից և տարավ նստեցրեց ինձ յուր համար պատրաստված բազկաթոռի կողքին:

Երբ ամենքը իրենց տեղերը բռնեցին և ամեն ոք յուր շրջապատով սկսեց զբաղվիլ, պատեր-Սիմոնը շարունակեց խոսել ինձ հետ, բայց այնպես կամացուկ որ, մեր դրացիներից ոչ ոք նրան լսել չէր կարող:

– Գիտե՞ք, սիրելիս, երբ ես այսօր ձեզ առաջին անգամ մեր օրիորդների հետ տեսա, մի փոքր վախեցա. դուք մի վիրավորվիր այս խոսքից, խնդրեմ, բայց խոստովանեցեք, որ կարող էի վախենալ:

– Ինչո՞ւ համար, պատվելի՞, – զարմացմամբ հարցրի ես:

– Ա, դուք խո չե՞ք մոռացել երեկվա պատմությունը: Ես որքան էլ որ անբնական դրության մեջ էի, այսուամենայնիվ լավ հիշում եմ, որ ձեզ հետ շատ անվայել վարվեցա: Ես հազար անգամ ներողություն եմ խնդրում:

– Թողեք, աղաչում եմ. այդքան փոքրոգի մարդ մի կարծեք ինձ, – պատասխանեցի ես, – դուք ինձ ոչնչով չեք վիրավորել, Ինչո՞ւ համար եք ներողություն խնդրում:

– Օ՛, ինչպե՞ս չէ. մի հարգելի երիտասարդի առաջ նստել արբած դրության մեջ… անտեղի կատակներ անել… սա իհարկե անվայել բան է իմ աստիճանի համար, դուք ինձ պետք է ներեք…

Այս խոսքերից հետ պատվելին խոնարհեց աչքերը և այնպիսի մի արտահայտություն տվավ յուր երեսին, որ ես կամա ակամա մի խորին պատկառանք զգացի դեպի նրա համեստ և իրավամբ հոգևոր անձնավորությունը:

– Ես երեկվա անցքերից ոչինչ չեմ հիշում, պատվելի, և շատ խնդրում եմ, որ չանհանգստանաք իզուր տեղը. դրանով արդարև դուք ինձ վիրավորում եք: Ես ինքս երիտասարդ մարդ եմ և սիրում եմ ուրախ բնավորությունները: Մի՞թե դուք այդքան ծանրաչքով կնայեիք ինձ վերա եթե ուրախության ժամանակ ինձ արբած տեսնեիք:

– Երբե՛ք, երբե՛ք, սիրելիս: Ես բծախնդրությունը չեմ սիրում:

– Ուրեմն միևնույնը կարծեք և ինձ. մանավանդ որ ես հին սերունդին չեմ պատկանում:

– Այո՛, այդ վերջին հանգամանքը չպետք էր մոռանալ, – հարեց պատվելին և յուր անձեռոցի ծայրը սկսավ ամրացնել օձիքի մեջ: Ապա դառնալով դեպի ինձ շշնջաց ավելի ցած ձայնով.

– Բայց դուք գիտե՞ք, թե ես ինչու համար էի ասում, թե՝ «վախեցա երբ ձեզ մեր օրիորդների հետ տեսա»:

– Ո՞չ, ես այդ կամենում էի հարցնել ձեզանից:

– Այ թե ինչո՞ւ համար: Դուք չեք ճանաչում այստեղի աղջկերանց: Համեստությունը նրանց համար անծանոթ բան է: Ինձ տեսնելով նրանք կարող էին կատակաբանել իմ մասին, իբրև թե ձեզ զվարճացնելու համար, և դուք կարող էիք երեկվան իմ դրությունը անգիտությամբ նկարագրել նրանց առաջ: Այդ իհարկե լավ չէր լինիլ: Նրանք կսկսեին հազար ու մի բաներ ավելացնելով ձեր խոսածների վրա տարածել քաղաքում:

– Բնա՛վ, բնա՛վ, և ո՛չ իսկ մի բառ հիշված է ձեր մասին, – ասացի ես, – անհոգ եղեք, և թե նրանք խոսեին անգամ, ես դարձյալ չէի ինձ թեթևացնիլ այնքան, որ ընկերանայի նրանց:

– Կեցցի՛ք, խելոք երիտասարդ եք. դուք կատարելապես գրավեցիք իմ համակրությունը, – գովեց ինձ պատվելին և գոհ սրտով ձեռք առավ ստամոքսի բարերար գործիքները:

Ես նկատեցի, որ մեր բոլոր խոսակցության ժամանակ Մարգարիտան դիտում էր մեզ և յուր հետաքրքիր հայացքով կարծես ուզում էր թափանցել մեր սրտի խոսքերը, իմանալու համար, թե ինչ ընդհանուր միտք կարող էր զբաղեցնել ինձ և պատեր-Սիմոնին:

Այս հանգամանքը ինձ չափից դուրս հետաքրքրեց, մանավանդ որ սկզբումն էլ նա կասկածոտ հարցեր էր անում ինձ պատերի վերաբերությամբ, ուստի վճռեցի այդ մասին անպատճառ մի բացատրություն խնդրել օրիորդից, երբ մենք միայնակ կլինեինք:

Բայց պ. Լուսինյանը նկատում էր, որ յուր հյուրերը վանական միաբանության վայել լռություն են պահպանում սեղանի վերա, ուստի սկսավ մեղադրել պատեր-Սիմոնին, որ նա չէ մտածում ժամ առաջ այդ մեծ չարիքի առաջը առնելու:

– Մեր շիշերը բողոքում են ձեր դեմ, պատվելի, – ասաց նա, – կամ դուք հանձն առեք սեղանապետությունը և կամ հանձնեցեք այն այս երիտասարդներից մեկին:

– Ներեցե՛ք, ես չգիտեի, թե ինձ է վերապահված կարգադրելու իրավունքը, – պատասխանեց պատվելին, – բայց որովհետև դուք ինձ եք տալիս այդ պատիվը, ուստի ես էլ իմ կողմից սեղանապետության պաշտոնը հանձնում եմ մեր ամենասիրելի բարեկամ Բյուրատյանին:

Բոլոր հրավիրյալները նայեցին ինձ վերա: Նրանցից շատերը սկսան ծափահարել, շնորհավորելով իմ ընտրությունը: Բայց և մի քանի ինձ անծանոթ երիտասարդներ խոժոռեցին իրենց դեմքերը, որոնք այսուամենայնիվ կրկին զվարթացան, երբ ես բացե ի բաց մերժեցի ընդունել այդ պատիվը՝ իբրև կառավարելու անընդունակ և անսովոր, այնուհետև խոսելու ասպարեզը բացված լինելով սկսան մի քանի ընտրելիներ առաջարկել և վերջնական ընտրությունը մնաց կոկիկ հագնված մի երիտասարդ վաճառականի վերա, որը նստած էր օրիորդների խմբին շատ մոտիկ և զբաղված էր յուր դրացուհիների հետ հաճոյախոսություններ անելով:

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.